

5333

ժ. ԿՈՆ

ժ. Ե. ՉԵՐԺԻՆՍԿԻ



ՀԿՈՒԳ

2-494



ԳՐԱԼԵՏԱՐՆԵՐ ԲՈՂԱՐ ՅԵՐԿՐՆԵՐԻ ՄԻԱՅԵՒ



1 0 AUG 2005

14 NOV 2000

Ֆ. ԿՈՆ

ՅԿՈՒԳ.

Զ-494

Կր.

# ՖԵԼԻՔՍ ԵԴՄՈՒՆԴՈՎԻԶ

## ՋԵՐԺԻՆՍԿԻ

Կենսագրական

նւրվագիծ

220  
02



23 MAY 2013

5333



Ф. КОН

ФЕЛИКС ЭДМУНДОВИЧ  
ДЗЕРЖИНСКИЙ

Биографический очерк

Государственное издательство политической литературы  
Ереван ● 1939







Юноше,  
 обдумывающему  
 житье,  
 решающему,  
 сделать бы жизнь с кого,  
 скажу,  
 не задумываясь:  
 — Делай ее  
 с товарища  
 Дзержинского.—  
 (Վ. Մայակովսկի «Хорошо!»  
 Հոկտեմբերյան պոեմ):<sup>1</sup>

I

Յեւիթս Եղմունդովիչ Չերֆինսկին ծնվել է 1877 թվին Ոչմյանիի գալառում՝ Լիտվայում, շլախաաշական մի փոքրիկ կալվածքում:

Նա աճում-մեծանում էր այն ժամանակ, յերբ Լիտվայում գեռ թարմ էլին հիշողությունները ցարական դահլիճ-

<sup>1</sup> Պատանուն,  
 վոր խորհում է վճռել՝  
 թե ո՛ւմ պե՞ս

վարեր  
 կյանքն իր—  
 կտռե՛մ,  
 առանց մտածելու՝  
 — վարե՛ր այն

ընկեր  
 Չերֆինսկու՛ պես:



ների՝ 1863 թվի ապստամբությունը ճնշելուց հետո գործած դադանությունները մասին: Այդ դահլիճների գլխավորին, գեներալ Մուրավյովին, բավարար չափով բնութագրում են նրա սեփական խոսքերը. «Յես այն Մուրավյովներեց չեմ, վորոնց կախում են, յես՝ նրանցից եմ, վորոնք կախում են»: 1863 թվին նշանակվելով Հյուսիս-Արևմտյան յերկրամասի գեներալ-նահանգապետ, Մուրավյովը Լիտվան ծածկեց կախադաններով, տաժանակիր աշխատանքի յերջում ապստամբությանը մասնակցելու մեջ թեկուզ և փոքրագույն չափով կասկածված տասնյակ հազարավոր մարդկանց՝ նա կանգ չեր առնում նույնիսկ յերեխաների արսուրման առաջ, դյուզերը հրի յեր մատնում, քաղաքների, ավանների ու գյուղերի վրա հսկայական կոնտրիբուցիաներ եր դնում: Ազատագրական շարժումը ճնշելու և Լիտվայում գերեզմանոցային հանգստություն հաստատելու համար Մուրավյովը ցարից ստացավ կոմսի տիտղոս, իսկ ժողովուրդը նրան անվանեց «կախադան հանող»:

Յարական կառավարությունը տոնում եր Լիտվայում տարած հաղթանակը: Ռեպրեսիաները շարունակվում եյին, ուժեղ կերպով անց եր կացվում ռուսացում: Վիլնոյի փողոցներում փակցվում եյին հրամաններ, վորոնք արդելում եյին խոսել լեհերեն ու լիտվերեն: Յեթե լեհական լեզուն, վորով խոսում եյին կալվածատերերն ու բուրժուաները, ցարական կառավարությունը դեռ վորևե չափով հաշիվ յեր առնում, ասպ լիտվական լեզուն բռնությամբ բոլորովին հանվում եր գործածությունից:

Այս ձևով ցարական կառավարությունը հույս ուներ արժատից պոկել բողոքի ամեն մի վողի: Այդ քաղաքականությունը ձեռնառու յեր լեհական նացիոնալիստներին, վորոնք ոգտվում եյին թե՛ յեկեղեցու բեմից և թե՛ ուսուցչական ամբիոնից, վորպեսզի հայտարարեն, վոր սոցիալական ամեն մի չարիք—թե՛ գյուղացիների կրած տառապանքներն

աղքատիկ հողամասերում և թե՛ լեհական բուրժուազիայի ձեռնարկություններում աշխատող բանվորների ստացած մուրացկանային աշխատավարձը—գալիս ե ցարական կառավարությունից: Բնակչության բոլոր շերտերում առաջ եր բերվում այն սխալ պատկերացումը, թե բավական ե, վոր Լիտվան ու Լեհաստանն անկախություն ձեռք բերեն, վորպեսզի վոչնչանա ժողովրդի թշվառությունը:

Լեհաստանի ու Լիտվայի կալվածատերերի ու կապիտալիստների համար նացիոնալիստական լողունները միջոց եյին, մասսաներին դասակարգային պայքարից—Ռուսաստանի բոլոր ժողովուրդների աշխատավորների հետ միասին իսկական աղբային ու սոցիալական ազատագրության համար մղելիք պայքարից հեռացնելու համար: Կալվածատերերն ու կապիտալիստները մասսաների մեջ վարպետրեն կեղծ հայրենասիրություն եյին բորբոքում, ջանալով լայն խավերի ուշադրությունը սոցիալական հարցերից, դասակարգային պայքարի հարցերից չեղել աղբային հարցերի, պրոլետարիատի ու բուրժուազիայի համար «ընդհանուր» հարցերի կողմը: Այդ քաղաքականությունը նպատակ ուներ քողարկել պրոլետարիատի դասակարգային շահերը, հոգեպես ստրկացնել բանվորներին: Իրականում լեհական պաներն ու բուրժուաներն ինքնակալության հետ դործակցում եյին բնավ վո՛չ հայրենասիրաբար, այլ իրենց դասակարգային շահերի համար:

Լեհաստանի ու Լիտվայի բանվոր դասակարգն արդյունաբերական զարգացման դուրընթաց, իր կուլտուրայի, փորձի ու քանակի աճումով հասկացավ իշխող դասակարգերի յերկդիմի տակտիկան: Գիտակից բանվորները կոչ եյին անում աղբի ճնշման քաղաքականության դեմ պայքար մղել վոչ թե «աղբային» դրոշակի տակ, այլ ինտերնացիոնալ բանվորական շարժման շարքերում: Այդ պայքարը կարող եր հաջող լինել պետության բոլոր աղուությունների բանվոր-



ների համախմբման ճանապարհով միայն: Այդ ճանապարհի վրա ել կանգնեց Լեհաստանի ու Լիտվայի բանվոր դասակարգը: Լեհական պաների և ուսական ինքնակալության գաղտնի դաշինքին նա հակադրեց ուս բանվորների հետ միասին մղելիք հեղափոխական պայքարը, յերկիրն ազատագրելու համար:

Ձերթինակին քիչ և խոսում էր կյանքի վաղ ժամանակաշրջանի մասին, այն ներքին հեղաբեկման մասին, վոր նրան վիճակից կրել շրջապատող միջավայրի և դեպքերի ազդեցության տակ: Յուրաքանչյուր ընտանիքում այն ժամանակ ապրում ու տարածվում էր ատելությունը դեպի ստրկացնողները, ապրում ու տարածվում էր պայքարի ծարավը: Բայց պայքարի ի՞նչպիսի ճանապարհ ընտրել, ի՞նչ ճանապարհով ընթանալ,—այդ հարցերը չէին կարող չհուզել անկեղծ, հարցախույզ պատանուն, վորպիսին Ֆելիքսն էր:

Նամակներից մեկում նա հետագայում պատմում էր.

«Յերբ յես յերեխա եյի, ինձ համար սրբություն էյին՝ աստված ու հայրենիքը... Յես հիշում եմ մեր փոքրիկ կալվածքում անցրած յերեկոները, յերբ մայրս լամպի լույսի տակ պատմում էր, թե ինչպես կաստյոլներում (կաթոլիկական յեկեղեցիներում) ստիպում էյին աղոթքները ուսերեն ասել, հիշում եմ նրա պատմություններն այն մասին, թե ինչպիսի կոտորիբուցիաներ էյին դրվում բնակչության վրա, ինչպիսի հալածանքների յեր նա յենթարկվում, ինչպես էյին հարկերով նրան նեղում և այլն: Յեվ այդ վճռողական մոմենտ էր: Այդ աղքեց այն բանի վրա, վոր յես հետագայում դնացի այն ճանապարհով, վորով գնացել եմ, վոր յուրաքանչյուր բռնություն, վորի մասին յես ատեղեկանում էյի (որինակ, հարկադրում՝ ուսերեն խոսելու, տոն որերին յեկեղեցի գնալ, լրատելության սխտեմը և այլն) կարծես անձամբ ինձ վրա գործադրված բռնություն լիներ: Յեվ հենց այն ժամանակ էլ յես մի խումբ մյուս

հասակակիցներիս հետ ուխտեցի (1894 թ.) մինչև վերջին շունչը պայքարել այդ չարիքի դեմ: Արդեն այն ժամանակ եմ սիրան ու ուղեղը նրբազգացորեն ըմբռնում էյին մարդկանց կրած ամեն մի անարդարություն, ամեն մի վիրավորանք, և յես ասեցի չարիքը: Բայց յես ստիպված յեղախարխալելով գնալ, առանց ղեկավարության, առանց մեկն ու մեկի ցուցումի...»:

Այս վերջին խոսքերով Ֆելիքս Ձերթինակին ընդգծում է, թե վորքան դժվար էր նրա հարցախույզ մտքի և ջերմ սրտի համար հասկանալ իրերի իսկական գրությունը, գտնել պայքարի ուղին հեղափոխական պրոլետարիատի շարքերում: Բայց նա գտավ այդ ուղին:

Ձերթինակու ընտանիքը կրոնասեր էր: Հայտնի յե, վոր ծնողները նախորոշել էյին Ֆելիքսին քսենձ դարձնելու: Բայց Ձերթինակին դնաց այլ ճանապարհով:

«Յերբ յես դիմնադիայի վեցերորդ դասարանումն էյի,—պատմում էր իր մասին Ֆելիքս Եղմունդովիչը,—իմ մեջ բեկում առաջացավ: Այդ 1894 թվին էր: Այն ժամանակ յես մի ամբողջ տարի տարվեցի այն մտքով, թե աստված չկա, և բոլորին տաք-տաք ապացուցում էյի այդ»:

Ֆելիքս Ձերթինակին, ուխտելով պայքարել չարիքի դեմ, անարդարության դեմ, որդանապես չեր կարող հաշտվել կրոնի քարոզած հլության հետ, առ աստված արվող՝ «Յեղեցին կամք քո» դիմումի հետ: Նա ազահարար ձգտում էր դեպի դիտելիքները, դեպի գիտությունը, վորոնք նրա մեջ վերջնականապես հուս ցնդեցրին—առ աստված յեղած հավատը:

Տեսնելով, թե ինչպես լեհական պանը ուսական, բելոուսական, լիտվական բատրակների հետ կողք-կողքի շահադրծում է նաև «հարազատ» լեհական բատրակներին, Ֆելիքսը դեռ պատանի ժամանակ հասկացավ բուրժուազիայի ու կալվածատերերի «հայրենասիրության» կեղծությունը:



նը: Յեւ նա ամբողջ հոգով կանգնեց ճնշված ժողովրդական մասսաների կողմը:

Նա խզեց բոլոր կապերը քաղքենիական ինտելիգենտական միջավայրի հետ: Խոսքով լեհական ինտելիգենցիան յերազում եր «մոսկալներին» դեմ մղելիք պայքարի մասին և կարծես թե տարածում եր պայքարի տրադիցիաները: Բայց իրականում լեհական ինտելիգենտները վարվում էին այդ տրադիցիաներին հակառակ: Լեհ-«հայրենասերը» վորպես ուսական ինքնակալության չինովնիկ, «հավատով ու ճշմարտությամբ» եր ծառայում ցարին ու հայրենիքին: Լեհ ուսուցիչը, վորը ծածուկ «Դեռ Լեհաստանը չի մեռել»-ն եր յերզում, ծառայության մեջ ցարական իշխանության պահանջները կատարում եր ավելի յեռանդաղին, քան հատուկ ուղարկված ուս ուսուցիչները:

Խոսքի և դործի միջև յեղած այս հակասությունը դարնելում եր դիտող, զգայուն ու ճշմարտասեր պատանու աչքին և նրան վանեց բոլոր այդ տեսակ մարդկանցից: Արդեն շատ տարիներ անց Ձերթինսկին, հիշելով պատանեկությունը, գրում եր, թե «բուրժուական ինտելիգենտների խոսքերն ու մտքերը մեծ մասամբ հանդիսանում են լոկ կյանքի հստակեցում», լոկ դեկորացիա, վորը վոչ մի ընդհանուր բան չունի նրանց դործերի հետ, նրանց իսկական կյանքի հետ»:

## II

«1894 թվին,—գրում ե Ֆելիքս Եղմունզովիչն իր ինքնակենսագրության մեջ,—լինելով դիմնադիայի 7-րդ դասաբանում, մտնում եմ ինքնադարդացման սոցիալ-դեմոկրատական խմբակի մեջ: 1895 թ. մտնում եմ լիտվական սոցիալ-դեմոկրատիայի մեջ, ինքս մարքսիզմ եմ սովորում և ղեկավարում եմ արհեստավորական ու դործարանային աշակերտների խմբակները»: Կասկածի յենթակա չե, վոր այն ժամանակի անցքերը—դործադուլային շարժումը Ռուսաստ-

տանի դրեթե բոլոր խոշոր արդյունաբերական կենտրոններում, դործադուլավորների վրա դործադուլած արյունալի բռնությունը Յարոսլավում, Բելոստոկի դործադուլը և այլն—հսկայական տավորություն դործեցին Ֆելիքս Եղմունզովիչի վրա և ցույց տվին նրան այն ուղին, վորով պետք ե դնալ, ցույց տվին այն դասակարգը, վորին պատմությունը վերասահել ե կապիտալիզմի դերեզմանավորի փառասպանձ դերը:

Ֆելիքսն ընդամենը հաղիվ տանյոթ տարեկան եր, յերբ նա առաջին անգամ ծանոթանում ե մարքսիստական դրականության հետ, Կ. Մարքսի և Ֆ. Ենդելսի աշխատությունների հետ, հոչակալոր «Երֆուրտյան ծրագրի» հետ և մտնում ե սոցիալ-դեմոկրատական կուսակցության մեջ: Նրան հանձնարարում են մի խմբակի ղեկավարություն, վորի մասին նա պատմում ե այսպես. «Խմբակի անդամներին ծանոթացնում էյի տիեղերքի մասին դոյություն ունեցող հայացքների հետ, նախնադարյան հասարակության և նրա զարգացման հետ, ապա, անցնում էյի «Երֆուրտյան ծրագրին»»:

Ձերթինսկու հակիրճ արտահայտությունը՝ «սովորում եմ մարքսիզմը»՝ հսկայական նշանակություն ունի նրա զարգացումն ըմբռնելու համար: Նա առաջին իսկ քայլերից կանգնեց հեղափոխական մարքսիզմի ճանապարհի վրա: Նա սովորում եր մարքսիզմը, զուգորդելով թեորիան պրակտիկայի հետ, ուսումնասիրում եր բանվոր դասակարգի կյանքը և յերևույթների բացատրությունը քաղում եր մարքսիզմի փանձարանից:

Խմբակը Ձերթինսկուն մոտեցնում ե բանվորներին: Ֆելիքսը ձգտում ե խորն ըմբռնել, ուսումնասիրել բանվորների դրությունը, նրանց կյանքը, կենցաղը, կարիքները: Նա ներկա յե լինում բանվորական յերկույթներին, այցելում ե բանվորական ավանները, դարեջրատները, այն տեղերը, վորտեղ հավաքվում, իրենց ազատ ժամանակն են անց կաց-



նում բանվորներն ու նրանց ընտանիքները: Հեղափոխական գործունեյութունն ամբողջովին համաշարակում է Ֆելիքս Զերժինսկուն:

«Հավատին պետք է հետեւեն դործերը» Զերժինսկու սիրած այս նշանաբանը նրա կողմից իրադործվում էր ամենամիակ պատանեկութունից սկսած:

Նա այն ժամանակ սովորում էր գիմնադիւստրում: Բայց ի՞նչ կարող էր տալ ցարական դպրոցն այն դործունեյության համար, վորին նա պատրաստվում էր: Մի դպրոց, վորտեղ գալազանի կարգապահութունն էր իշխում, վորտեղ հայտարարված էր՝ «չհանդգնել սեփական դատողություն ունենալ», վորտեղ ծաղրվում էին լեհերը, լիտվացիներն ու հրեաները, վորտեղ ծաղր ու ծանակի առարկա էին դառնում նրանք, վորոնց ժողովրդական լուսավորության ցարական մինիստր Դելյանովը արհամարհաբար «խոհարարուհիների յերեխաներ» էր անվանում:

Հեղձուցիչ էր ոչն այդ դպրոց-դորանոցում, վորտեղ գասերի սկզբում ու վերջում աղոթքներ էին մրթմրթացնում, պարտադրաբար յեկեղեցի գնում, ցարիզմը դովաբանում, վորտեղ շպիտնաժն ու վոստիկանական ուժիմն էր թագավորում: Միայն քչերը խիղախեցին վարվել այնպես, ինչպես վարվեց Զերժինսկին: Վոմանք հաշվում էին, թե քանի որ է մնում մինչև գիմնադիւստր վերջացնելը, վորպեսզի ստանան այն կտոր թղթիկը, վորը մուտք է բաց անում դեպի համալսարան: Իսկ Զերժինսկին մի անգամից վորոչեց վերջ դնել իր համար անտանելի դարձած իրադրության մեջ դորչ կյանք վարելուն: 1896 թ. նա հոժարակամ հեռացավ գիմնադիւստրից:

«Հարկավոր է, վոր ամբողջ մոտ լինեմ մասսային և ինքու ել նրա հետ սովորեմ», — այսպես էր բացատրում նա իր հեռանալը գիմնադիւստրից:

Զերժինսկին դառնում է պրոֆեսիոնալ հեղափոխական: Նա համառորեն գիմնում է կուսակցական կոմիտեյին:

«Մնդրում եմ ինձ ուղարկել մասսաների մեջ աշխատելու, չսահմանափակել միայն խմբակներով»:

Կասկիտալիստական ստրկությունից աղատադրված ժողովրդի ստեղծադործական ուժերի նկատմամբ տածած հավատը վառվում էր նրա մեջ ամենամիակ պատանեկութունից սկսած: Այդ հավատը պատանի Զերժինսկուն ուժ էր տալիս հաղթահարելու ճանապարհին յեղած բոլոր խոչընդոտները: Իսկ խոչընդոտները քիչ չէին:

Նրա այն ժամանակվա դործունեյության մասշտաբը դեռ մեծ չէր: Վոչ միայն յուրաքանչյուր քաղաքում ու ավանում, այլև յուրաքանչյուր դործարանում ու ֆաբրիկայում, յուրաքանչյուր արհեստանոցում շատ բանվորներ ապրում էին առանձնացած, ինքնամիտի, չդիտակցելով իրենց դասակարգային շահերի ընդհանրությունը: Զերժինսկին իր դործունեյության հենց սկզբից, կազմակերպելով բանվորներին, պայքարում էր այդ անշատվածության դեմ: Նա անում էր ամեն բան, ինչ հնարավոր էր, վորպեսզի պարզաբանի մեկ պրոֆեսիայի բանվորներին շահերի՝ մյուս պրոֆեսիայի բանվորների շահերի հետ ունեցած ընդհանրությունը, վորպեսզի համերաշխություն դարձեցնի տարբեր դործարանների, ֆաբրիկաների ու արհեստանոցների բանվորների միջև, վորպեսզի միավորի մեկ քաղաքի բանվորներին մյուս քաղաքի բանվորների հետ: Դժվարությունները վիթխարի էին: Չխոսելով արդեն ձեռնարկունների ու վոստիկանության կողմից հարուցվող արդելքների մասին, վորոնք բոլոր ուժերն ուղղում էին այն բանին, վորպեսզի թույլ չտան այդպիսի մի կազմակերպություն, այն ժամանակվա հեղափոխականները ստիպված էին լինում հաղթահարել հենց իրենց՝ բանվորների մեջ յեղած հետամնաց տրամադրությունները:

Զերժինսկին դրույցներ էր անցկացնում բանվորների հետ, սովորեցնում էր նրանց, թե ինչպես պետք է պաշտպանել իրենց շահերը, ասպցուցում էր, վոր շահադործող



ների դեմ մղած համառ պայքարը միայն կարող է փոխել պրոլետարիատի ծանր դրուժյունը :

Յերիտասարդ Ֆելիքս Չերժինսկին շատ շուտով հեղինակութուն ձեռք բերեց Վիլնոյի բանվորների մեջ : Նրա կուսակցական մականունն այն ժամանակ Յացեկ էր : Նա ղեկավարում էր բանվորների մղած պայքարը ձեռնարկուների դեմ՝ իրենց անտեսական դրուժյունը բարելավելու համար : Այդ պայքարն այն ժամանակ լայնորեն ծավալվեց Վիլնոյի ձեռնարկություններում :

Չերժինսկին աճում է կուսակցական աշխատանքում : Նա աչքի յե ընկնում, վորպես փայլուն կադմակերպիչ, բանվոր դասակարգի դործին անսահմանորեն նվիրված անհողդողէ հեղափոխական :

1897 թ. սկզբին Չերժինսկին մեկնում է Կովնո : Կուսակցությունը նրան հանձնարարում է այնտեղ կուսակցական աշխատանք կադմակերպել : Կովնոյում այն ժամանակ չկար սոցիալ-դեմոկրատական կադմակերպություն : Այն ստեղծելու աշխատանքն ընկավ պատանի Ֆելիքսի ուսերին :

«Այստեղ հարկ յեղավ մտնել դործարանային մասսաների բուն իսկ խորքերը և բաղխվել անյուր աղքատության ու շահագործման հետ՝ առանձնապես կանանց աշխատանքի : Այն ժամանակ յես պրակտիկայում սովորեցի դործադուկ կադմակերպելը», այսպես սեղմ է պատմում նա ինքնակենսադրության մեջ իր աշխատանքի այդ նշանավոր ժամանակաշրջանի մասին :

Կովնոյում նրան հաջողվեց մնալ հինգ ամիս : Այդ—յեռուն, խիստ լարված և խիստ քրտնաջան աշխատանքի ամիսներ էյին : Չերժինսկին բոլոր ուժերը նվիրում էր պրոլետարական կադմակերպությանը : Նա կապված էր դործաբանների հետ : Հաճախ լինում էր բանվորների բնակարաններում, ու յերկար դրուցում բանվորների հետ : Ստեղծում էր խմբակներ : Բանվորների համար խմբակներում կարդում

էր քաղաքական գրականություն, կադմակերպում էր այդ գրականության տարածումը :

Չերժինսկու ղեկավարությամբ Կովնոյի մերթ այս, մերթ այն ձեռնարկությունում գործադուլներ էյին բռնկվում : Բանվորները հաստատուն կերպով պաշտպանում էյին իրենց պահանջները :

Այս ամբողջ աշխատանքն ամեն բոպե սպառնում էր հանկարծակի ընդհատվել—կալանքով, բանտով : Կյանքը լի յեր վտանդներով ու գրկանքներով : Բայց Ֆելիքս Չերժինսկին այնպիսին չէր, վոր շփոթվեր իրեն սպառնացող վտանդներից : Նա գրկանքներից վախեցողը չէր : Անձնական կյանքում ծայր աստիճանի համեստ, նա հանուն ընդհանուր դործի պատրաստ էր ամեն մի զոհաբերության : Հետագայում Չերժինսկին պատմում էր .

«Իմ դոյության պայմանները Կովնոյում խիստ ծանր էյին : Յես աշխատանքի տեղավորվեցի կադմարարական արհեստանոցում և խիստ նեղության մեջ էյի : Ծատ անգամ բերնիս ջուրը դնում էր, յերբ մտնում էյի բանվորների բնակարանը և քթիս էր առնում բլինների կամ այլ կերակրի հոտը : Յերբեմն բանվորներն ինձ հրավիրում էյին բան ուտել, բայց յես հրաժարվում էյի, հավատացնելով, թե արդեն կերել եմ, թեպետ և փորս անոթի յեր» :

Վոստիկանությանը չափազանց անհանգստացնում էր Կովնոյի բանվորների հեղափոխական յելույթների աճումը : Վոստիկանությունն արդեն դլխի յեր ընկնում, վոր այդ շատ խոշոր և հեղինակավոր կադմակերպիչ դործ է :

Վոստիկանական խողարկաչները կաշվից դուրս էյին գալիս, վորպեսդի դտնեն նրան ու ճանկեն :

Բայց, շնորհիվ Ֆելիքս Չերժինսկու՝ իր աշխատանքը կոնսպիրացնելու հմտության, վոստիկանությանը յերկար ժամանակ չէր հաջողվում վորոչել, թե ով էր ղեկավարում բանվորների յելույթները : Վերջապես, վոստիկանությունը կաշառեց մի դեռահաս բանվորի, խոստանալով նրան դրա-



ժական սլարդե աղիտատորին մատնելու համար, և նա ճատնեց Չերժինսկուն:

1897 թ. հուլիսի 17-ին Ֆելիքս Եղմունդովիչին ձերբազարկեցին: Այդ առաջին ձերբակալութունն էր: Նա այն ժամանակ ընդամենը քսան տարեկան էր:

### III

Մանր էր Չերժինսկու համար կտրվել այն աշխատանքից, վորը նոր միայն սկսել էր ծավալվել: Տանջալից եր նաև ցարական սլահնորդական բաժանմունքի հարցաքննութունը: Այդ ժանդարմական հարցաքննութունը յուրաքանչյուր հեղափոխականի համար ամենածանր փորձութուններից մեկն էր:

Հորդորանքներով ու համոզումներով, ահ տալով ու սպառնալիքներով ժանդարմները փորձում էին հանցանքի մեջ բռնել հարցաքննվողին և նրա ընկերներին: Թույլ, տատանվող մարդիկ չէին դիմանում այդ մարտին, կործանում էին թե՛ իրենց և թե՛ այն դործը, վորին խոստացել էին ծառայել: Այդ սլատճառով հեղափոխական շարժման ղեկավարները ընդհատակյա հրատարակութուններում հեղափոխականներին կոչ էին անում՝ «Հրաժարվե՛ք ցուցմունքներ տալուց»:

Հենց այդպես էլ վարվեց Ֆելիքս Եղմունդովիչը: Նրան ձերբակալեցին փողոցում, չիմանալով նրա ազդանունը: Հարցաքննության ժամանակ Ֆելիքս Եղմունդովիչը հնարովի ազդանուն տվեց:

Չերժինսկին, ինչպես մենք արդեն հիշատակեցինք, ընդամենը քսան տարեկան էր: Յերիտասարդ մարդկանց ժանդարմները հարցաքննում էին մի առանձին մսլությամբ, հույս ունենալով, վոր նրանք անփորձութունից կարող են բերնից բան թոցնել: Լրտեսների ու սլրովիկատորների հաղորդումներից չատ բան իմանալով Ֆելիքս Չերժինսկու

անձնավորության մասին, ժանդարմական քննիչները ժողովրդութուն էյին անում իրենց տեղեկութուններով, փորձում էին դոնե վորեւե բան իմանալ հենց իրենից՝ Չերժինսկուց: Նրանք դիմում էին ծեծի և ամեն տեսակ ծաղր ու ծանակների: Բայց այնուամենայնիվ վոչ մի խոսք չկարողացան կորզել...

Մի ամբողջ տարի Ֆելիքս Եղմունդովիչը նստեց բանտում «նախնական կալանքում», այսինքն քննության տակ:

Բայց վորքան էլ ծանր էր այն դրությունը, վորի մեջ ընկել էր Ֆելիքս Չերժինսկին, նա հողով չէր ընկճվում և խորհում էր, թե ինչպես ավելի լավ ոգտագործի այդ դրությունն այն դործի համար, վորին ծառայում էր: Բանտում Չերժինսկին կարդում էր, սովորում, լրացնում իր գիտելիքները:



Մեկ տարի տեղ «նախնական կալանքից» հետո Չերժինսկին, վորպես անչափահաս (ցարական Ռուսաստանում չափահաս համարվում էին քսանմեկ տարեկան հասակին հասած անձինք), յերեք տարով աքսորվեց Վյատկայի նահանգը, Նոլինսկ՝ յերկաթուղային ճանապարհից հեռու ընկած մի փոքր քաղաք: Այդ հետ ընկած վայրում Չերժինսկին վարձվեց մախրիկայի Փարրիկայում, կապվեց բանավորների հետ և շարունակում էր այն աշխատանքը, վորի համար աքսորվել էր: Նոլինսկում Չերժինսկին մնաց ընդամենը միայն չորս ամիս: Տեղական իշխանությունները չուտով իմացան նրա դործունեյության մասին: Վոստիկանական ղեկույցներում ասվում էր, թե նա «քաղաքական տեսակետից յերևան բերեց ծայրահեղ անբարեհուսութուն» և կարճ ժամանակամիջոցում կարողացավ «ազդեցութուն ձեռք բերել միջանի անձանց վրա, վորոնք մինչև այժմ լիովին բարեհույս են յեղել»:

Պետք էր «անխնաս դարձնել» Չերժինսկուն, և վոստիկանությունը վորոչեց բել նրան այնպիսի մի խուլ տեղ,





վորտեղ նա չկարողանար «իր աղբեցութիւնը տարածել շըր-  
ջապատողներէ վրա»:

Ֆելիքս Եղմունդովիչն ինքնակենսագրութեան մեջ հա-  
ղորդում է «...Ըմբոստ բնավորութեանս և վոստիկանու-  
թեան հետ ունեցածս սկանդալի համար, ինչպես և այն բա-  
նի համար, վոր վորպես Եղիչ (набойщик) սկսեցի աշխատել  
մախորկայի գործարանում, ինձ աքսորում են 500 վերսա  
ալիլի հետո դեպի հյուսիս»:

Նրան ուղարկեցին Կայդորոգսկոյէ գյուղը: Իշխանու-  
թիւններէ կարծիքով, վորոնք լայլ էյին ճանաչում այդ  
վայրը, այստեղ անհնար էր շարունակել հեղափոխական  
գործունէութիւնը: Այդ այն տեղերից մեկն էր, ուր մար-  
դու վտար չէր դիպել կամ ինչպես այն ժամանակ էյին  
ասում, «ղուչն իր թևով, ոճն իր պորտով չէր հասել»:

Բայց Ֆելիքս Եղմունդովիչը, վորին որգանապես ան-  
տանելի յեր պարապութիւնը, այստեղ էլ նա կապ հաստա-  
տեց տեղական գյուղացիներէ հետ, նրանց համար խնդրա-  
գրեր ու գանդաւաններ էր գրում իրենց գովող չինովնիկներէ  
ու կուլակներէ վրա, վորոնք ստիպում էյին նրանց աշխատե-  
լ ստրկական պայմաններով:

Մինչդեռ աքսորյալներէ վերաբերյալ կանոնադրու-  
թիւնն արդէլում էր նույնիսկ այդպիսի գործունէութիւ-  
նը: Նահանգապետն ողտվեց դրանից և Ֆելիքս Եղմունդո-  
վիչին դատի տվեց: Չերժինսկու գլխին կախվեց նորից բանտ  
ընկնելու կամ ե՛լ ավելի սարսափելի տեղեր ուղարկվելու  
սպառնալիքը: Բացի դրանից Ֆելիքսի ակտիւ բնավորու-  
թիւնը կենդանի, մեծ գործ էր պահանջում: Կայդորոգ-  
սկոյէյում, պատմում էր նա, տաղտկութիւնը ինձ չափադանց  
տանջեց»: Նա կտրված էր այն բոլորից, ինչով ապրում էր՝  
հեղափոխական գործունէութիւնից, ընկերներից, մերձա-  
վորներից: Դրսից տեղեկութիւններ համարյա չէյին հաս-  
նում: Յարական իշխանութիւնները բոլոր միջոցները ձեռք

էյին առնում, վորպեսզի փոքրազույն տեղեկութիւն այն  
մասին, թե ինչ է կատարվում յերկրում, չհասնէր աքսո-  
րյալներին: Վոչ մի կուլտուրական կյանքի մասին խոսք չէր  
կարող լինել: Նույնիսկ լրացրերն ու ժուռնալները տեղ էյին  
հասցվում անկանոն կերպով:

Այս բոլոր միջոցները, վորոնք ընդհանուր են քաղաքա-  
կան աքսորյալների համար, նպատակ ունէյին թուլացնել  
հեղափոխականների կենսական յեռանդը, առաջացնել վհա-  
տութիւն, ստիպել նրանց դավաճանել հեղափոխական դրո-  
շին և ցարին խնդրադիր տալ՝ ներում շնորհելու մասին, վի-  
ճակը մեղմելու մասին: Լինում էյին դեպքեր, յերբ ցարա-  
կան կառավարութիւնը հասնում էր իր ստոր նպատակին:  
Բայց «խնդրարկունները» (այդպես էյին կոչում խնդրագիր  
տվողներին) համար այդպիսի խայտառակ արարմունքից  
հետո այլևս տեղ չկար հեղափոխականների շարքերում:

Չերժինսկու՝ աքսորավայրից ուղարկած նամակները  
չնչում են արիւթյամբ, դեպի իր ուժերն ունեցած խորը  
համալտով:

«Արդեն կարող եմ ինձ անվանել հասուն մարդ հա-  
տատուն հայացքով, և կյանքն ինձ կարող է միայն վոչըն-  
չացնել այնպես, ինչպես վոր փոթորիկը դետին է դլորում  
հարյուրամյա կաղնիներին, բայց յերբեք չի փոխի ինձ: Յեռ  
չեմ կարող վոչ ինձ փոխել, վոչ էլ փոխվել: Կյանքի պայ-  
մաններն ինձ այնպիսի ուղղութիւն են տվել, վոր այն հո-  
սանքը, վորն ինձ հափշտակել է, միայն նրա համար է  
դուրս գցել ինձ այս ամայի ափը, վորպեսզի հետո նոր ու-  
ժով հափշտակի ինձ և իր հետ ավելի ու ավելի հեռուն տա-  
նի, մինչև վոր յես մինչև վերջը կմաշվեմ պայքարում,  
այսինքն իմ պայքարի վերջը միայն գերեզմանը կարող է  
լինել»:

«Ասա Ռուդոլֆիկին, — գրում է նա ջրովը, — վոր մեր  
չնորհիլ նրան լավագույն վիճակ է սպասում, վոր նա կկա-



բողանա ավելի ազատ չնչել, յեթե ուզենա աջակցել այն բանին, վոր մարդկությունը անասուն չլինի, վոր մի քանիսը չճշչեն մյուսներին և չապրեն նրանց հաչլին, վոր վոչնչանա խղճի վաճառվածությունը և այն խավարը, վորը պատում է մարդկությանը... Նա արդեն ստիպված չի լինի թաղնվել իր աշխատանքով, վորպես մի ավաղակ, վորովհետև վոչ վոք նրան չի հետապնդելու: Յեթե այս բոլորն արձագանգ չգտնի նրա հոգում, յեթե նա ապրելու յե բացառապես իր համար և հոգալու յե միայն իր բարոյության մասին, — այն ժամանակ վա՛յ նրան... Մի՛ բարկանար ինձ վրա իմ հավատի համար, մի՛ բարկանար, վոր յես ցանկանում եմ նրան-այն, ինչ համարում եմ բարձրադույն բարիք, ինչ ինձ համար սուրբ է»:

Չերթինսկին Կաղարոսկոյեյում յերկար չմնաց: 1899 թվի ոգոստոսին նա նավակով փախավ, չվարանելով ճանապարհի դժվարությունների առաջ և չսարսափելով անխուսափելի հետապնդումներից:

Փախավ, թեպետ և գիտեր, վոր հատուկ հսկիչը ամեն որ ստուգում է, թե արդյոք բոլոր աքսորյալները տեղումն են, վոր տան տերերը պարտավոր են հազորդել նրա բացակայության մասին: Փախավ, չնայած այդ հսկողությանը, չնայած այն բանին, վոր փախուստը վտարի յե հանում վոստիկանական բոլոր վորսկաններին, վորոնք փախստականներին բռնելով կարյերա եյին ստեղծում: Փախավ, խմանալով, վոր ինքը պետք է հարյուրավոր կիլոմետր ճանապարհ կտրի անանցանելի վայրերով, վոր ամեն քայլափոխում հետամտում է մահը՝ քաղցից կամ ցրտից, գիշատիչ կենդանուց, պատահած թափառաչրջիկից, հետապնդողների գրեղակներից:

Չերթինսկուն սկսեցին կրնկկոխ հետապնդել: Գալատական իսպրապնիկը, հանկարծ սթափվելով, առանց առգնապը ծածկելու իշխանությանը հաղորդում է, վոր Չերթինսկին «ինքնազուլս կերպով հեռացել է իր այժմյան բնակավայրից

Կամա գետի հոսանքով իբր թե Նոլինսկ քաղաքը... Չերթինսկու նշանները՝ միջահասակ, գլխի և հոնքերի մաղերը բաց խարտյաչ, դեմքը մաքուր, բեխ ու մորուք չունի»:

Վոստիկանության դեպարտամենտը կարգադրում է. «խուզարկել, ձերբակալել և ուղարկել Վյատկայի նահանգապետի անորինության տակ...»:

Բայց այնքան ել հեշտ չէր Չերթինսկուն բռնելը, վորը նեավում էր դեպի ազատութուն, դեպի աշխատանք, դեպի բնիկները:

Մինչև վոր վոստիկանական խուզարկու չները իբրար կանցնեյին, Չերթինսկին արդեն հեռու յեր աքսորավայրից: Նա վերադարձավ Վիլնո:

IV

Վոչ միայն տաղտկությունը և վոչ միայն հեղափոխական գործունեյության ծարափն էր, վոր դրդեց Չերթինսկուն փախչել աքսորավայրից: Նրան անհանդստացնում էյին լիտվական սոցիալ-դեմոկրատական կուսակցության մեջ այն ժամանակ տեղի ունեցող դեպքերը:

Դեռ մինչև աքսորվելը Չերթինսկին փնտրական պայքար էր մղում նացիոնալիզմի դեմ: Լիտվական սոցիալ-դեմոկրատների մի մասը տատանվում էր նացիոնալիզմի կողմը: Ֆելիքս Եղմունդովիչի ձերբակալումից հետո նրանք չհաղադեցին ողտվել նրա բացակայությունից և լեհական բուրժուա-նացիոնալիստական շարժմանն աջակցելու ուղղությունը բռնեցին: Լիտվական ոստրոսունիսաները, հակառակ լեհական կապիտալիստների ու կալվածատերերի կողմից կեղեքված լիտվական բանվորների ու գյուղացիների ուղղակի շահերի, պաշտպանում էյին անկախ Լեհաստանի համար մղելիք պայքարի լողունները, այդ պայքարը չկապակցելով լիտվական բանվորների ու գյուղացիների դասակարգային պահանջների հետ: Զարմանալի չէ, վոր նրանք չմտան



ՌՄԴԻԿ մեջ և սկսեցին բանակցութիւններ վարել լեհական սոցիալիստական կուսակցութեան (ՊՊՍ) հետ միավորվելու մասին :

Ներկայումս բոլորին հայտնի յե ՊՊՍ-ի, լեհական այդ Փաշիզմի դործակալութեան, ռեակցիոն եյութիւնը: Բայց 1899 թվին վոչ բոլոր բանվորներն էյին ըմբռնում այդ կուսակցութեան ուսուցողական եյութիւնը: Պրոլետարական լողուններով վարպետներն ժոնգլորութիւն անելով, ՊՊՍ-ն ընդամին մի նպատակ եր հետապնդում՝ մասսաներին ներքաշել կարլամատներէրի ու կապիտալիստների՝ Լեհաստանի, շահագործման ու բռնութեան Լեհաստանի, մյուս ազդութիւններին ստրկացնող Լեհաստանի համար մղելիք պայքարի մեջ: Բանվորներէր հետամնաց մասը և կրկնակի՝ սոցիալական ու աղղային անհավասարութեան ճնշման տակ հեծող այլ աշխատողներէր մի նշանակելի խավ յերբեմն հավատում էյին ՊՊՍ-ի խաբուսիկ լողուններին:

ՊՊՍ-ի հետ միավորվելու փորձերի դեմ Ձերթինսկին բողոքում եր դեռես բանտում՝ մինչև իրեն հյուսիս ուղարկելը: Նա չեր կասկածում, վոր լիտվական սոցիալ-դեմոկրատական կուսակցութեան՝ դեպի նացիոնալիզմ հակված դեկալարները չեն հասպողի ողտվել իր կալանավորումից՝ իրենց պլաններն իրագործելու համար: Այդ բանը նրա համար առանձնապես ծանր եր դարձնում աքսորալայրում մընայր: Փեղիքս Եղմունդովիչը վառվում եր կուսակցութեանը մոլար քայլ անելուց դդուշացնելու ցանկութեամբ, և, փախչելով Կայդորդսկոյէյից, նա սլացավ Վիլնո:

Գրեթե յերկու տարի յեր անցել Ձերթինսկու ձերբակալման մոմենտից: Այդ ժամանակ ընդհատակի կյանքում շատ փոփոխութիւններ էյին տեղի ունեցել: Վոմանք, մնալով նույն քաղաքում, անցել էյին անլեղալ դրութեան, փոխել անձնագրերն ու կուսակցական մականունները: Մյուսները կոնսպիրատիվ նկատառումներով տեղափոխվել էյին իրենց քաղաքներից: Միքանիսը ձերբակալվել էյին, աքսորվել:

Պային և այնպիսիները, վորոնք ձեռք էյին քաշել հեղափոխական պայքարից և կրակից ավելի շատ, վախենում էյին կուսակցական աշխատանքի նախկին ընկերներին հանդիպելուց: Վերջիվերջո, յերբ Փեղիքս Եղմունդովիչը յեկավ Վիլնո, նա կարող եր կապվել միայն նացիոնալիստական խումբակի հետ, վորն արդեւք եր հանդիսանում նրա շիմանը բանվորներէր հետ: Սումբը հույս ուներ Ձերթինսկուն խրկել արտասահման և այդ ճանապարհով ազատվել նրա՝ բանվորներէր վրա ունեցած անմիջական ազդեցութեանից:

Իր ինքնակենսադրութեան մեջ Փեղիքս Եղմունդովիչն այդ ժամանակի մասին գրում ե.

«Վերադառնում եմ Վիլնո: Լիտվական սոցիալ-դեմոկրատիային դառնում եմ ՊՊՍ-ի հետ միավորման մասին բանակցութիւններ վարելիս: Յես նացիոնալիզմի ամենաթունդ թշնամի էյի և մեծազույն հանցանք էյի համարում, վոր 1898 թվին, յերբ յես նստած էյի բանտում, լիտվական ս.-դ. չմտալ Ռուսաստանի միացյալ ՄԴԻԿ մեջ, վորի մասին և գրեցի բանտից լիտվական ս.-դ. այն ժամանակվա զեկալար դոկտոր Դոմաչեովիչին: Յերբ յես յեկա Վիլնո, հին ընկերներն արդեն աքսորումն էյին—դեկալարում եր ուսանողական յերիտասարդութիւնը: Ինձ բանվորներէր մոտ չթողին և շտապեցին խրկել արտասահման, վորի համար ինձ կցեցին մաքսանենդներէր հետ, վորոնք ինձ տարան հրեական «բարադորայով»... Յես ծանոթացա մի ջահել տղայի հետ, և նա 110 ուրբով ավաններից մեկում ինձ համար անձնաղիր ճարեց: Այն ժամանակ հասա մինչև յերկաթուղու կայարանը, տոմս վերցրի և մեկնեցի Վարչապլա, վորտեղ յես մի բունդականի հասցե ունեյի»:

Վարչապլա կատարած այդ ուղևորութիւնը շատ հասկանչական ե Ձերթինսկու համար: Վիլնոյում նրան չհաջողվեց պայքար մղել դեպի նացիոնալիզմ հակված մարդկանց



դեմ: Յեւ մահա նա գնում է Վարչապա—նացիոնալիզմի բույնը, —վորպեսզի նույն պայքարը վարի, թեպետ այդ քաղաքում նրա միակ կապը—բունդակահանն է, աշխինքն նույնպես նացիոնալիստ, միայն հրեական: Բայց այդ նրան չի շփոթեցնում և չի վհատեցնում: Նա այնուամենայնիվ հուշուների այդ բունդակահանի միջոցով կապեր հաստատել բանվորների հետ:

«Վարչապետում, —պատմում է Ֆելիքս Եղմունդովիչը, —այն ժամանակ սոցիալ-դեմոկրատական կազմակերպություն չկար: Միմիայն ՊՊՍ-ն և Բունդն էին: Սոցիալ-դեմոկրատական կուսակցությունը ջախջախված էր: Ինձ հաջողվեց կապ հաստատել բանվորների հետ և շուտով վերահանգնել մեր կազմակերպությունը, ՊՊՍ-ից անջատելով սկզբում կոչկակարներին, իսկ հետո հյուսիսների, մետաղագործների, կաշեգործների, բուլկեգործների ամբողջ խումբեր: Սկզբից մի կատարել կռիվ ՊՊՍ-ի դեմ, վորը շարունակ վերջանում էր մեր հաջողությամբ, թեպետ մենք վոչ միջոցներ ունեյինք, վոչ գրականություն և վոչ էլ ինտելիգենցիա: Բանվորներն այն ժամանակ ինձ անվանում էին «Աստղաբաշխ», «Ճրանկ»:

Չպետք է մոռանալ, վոր Ֆելիքս Եղմունդովիչն անլեզու էր, վոր նրա համար ամենևին էլ անփասնոց չէր ամենտեղ յերևալ, և վոր ամենագլխավորն է, նա և մյուս ընկերները ստիպված էին լինում պայքարել մի կուսակցության դեմ, վորը հինգ տարի արդեն գոյություն ուներ, ուներ կազմակերպական կապեր և բուրժուազիայի նյութական ուժանդակությունը, վորը հրատարակում էր ընդհատակյա որդան:

Լեհաստանում ամբիլի առաջ գոյություն ունեցող սոցիալ-դեմոկրատական կուսակցությունը ջախջախված էր: Ապագա Փաշիստների կուսակցությունը—ՊՊՍ-ն («սոցիալիզմի գաղափարների կուսակցությունը», ինչպես նրան կոչում էր ին), —ոգտվելով ցարական մոստիկանություն կողմից սոցիալ-դեմոկրատիային հասցված հարվածներին, փորձում էր գրավել բանվորական շարժման ղեկավարությունը և բանվոր դասակարգին թունավորել նացիոնալիզմի թունով:

Չերժինսկին յեռանդուն կերպով ձեռնամուկ յեղավ սոցիալ-դեմոկրատական կազմակերպության վերահանգնմանը: Նրան չէր կանգնեցնում այն, վոր նա գրեթե մենակ էր: Նա ՊՊՍ-ից հետ խլելով հեղափոխականների խմբերը մեկը մյուսի հետևից, միքանի ամսվա ընթացքում վերահանգնեց սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունը:

Նա վոչ մի բույն աչքաթող չէր անում այն նացիոնալիստական վտանգը, վորը սպառնում էր լիտվական սոցիալ-դեմոկրատիային նրա՝ ՊՊՍ-ի հետ միաձուլվելու դեպքում, և լարեց բոլոր ջանքերը, վորպեսզի լիտվական սոցիալ-դեմոկրատիայի կուսակցությունը միավորի լեհական սոցիալ-դեմոկրատիայի հետ: Չերժինսկին ջերմորեն պաշտպանում էր այդ միավորման գաղափարը և պահանջում էր միասնական ծրագիր մշակել: Նա անդադրում համոզում էր, վոր Լեհաստանի ու Լիտվայի սոցիալ-դեմոկրատները, միավորվելով, կկարողանան մեծ հաջողությամբ պայքար ծափալել բանվոր դասակարգի շահերի համար: Տեղական սոցիալ-դեմոկրատները՝ 1899 թ. նոյեմբերին Վիլնոյում կայացած խորհրդակցությանը Ֆելիքս Չերժինսկին իրեն հատուկ կրքոտությամբ մերկացրեց ՊՊՍ-ին և հանդես յեկավ հանուն Լեհաստանի ու Լիտվայի ամուր սոցիալ-դեմոկրատական կազմակերպության ստեղծման:

Յեւ Չերժինսկին հաջողեցրեց այդ միավորումը: 1900 թ-ի հունվարին Լեհաստանի ու Լիտվայի սոցիալ-դեմոկրատները միավորվեցին մի միասնական կուսակցության մեջ:

Այսպես անխոնջ ու անհողզող էր պայքարում Ֆելիքս



Չերթինսկին հանուն մասսայական սոցիալ-դեմոկրատական կուսակցութեան:

Լինելով անընդհատ գործողութեան մարդ, Չերթինսկին աշխատում է անդուլ, մինչև ուժատուրում: Գործարանից գործարան, խմբակից խմբակ, խորհրդակցութեանից խորհրդակցութեան եր շրջում: Նա ամեն տեղ հասնում է, ամեն բանի համար ժամանակ է գտնում, միայն հանդատի ու քնի համար ժամանակ չունի:

Այդ վեհ, բարեկազմ, վառվող աչքերով, սրտիկուն ու կրքոտ լեզու ունեցող յերիտասարդը շրջապատողներին վրա անընդհատ տպավորութեան եր թողնում: Արդեն այն ժամանակ նրա մեջ զգացվում եր հեղափոխութեան մեծ մարտիկը, իսկական ասպետը:

Չերթինսկու անձնական հմայքը շատ ուժեղ եր: Չերկարելի նրան չհավատալ: Նա նվաճում եր իր գործի ճշմարիտ լինելու նկատմամբ ունեցած անհողողող համոզվածութեամբ, հեղափոխական պայքարում հանդես բերած արիութեամբ ու խիզախութեամբ: Չերթինսկու շրջապատողներին մեջ այն համոզվածութեանն եր առաջ գալիս, թե նա իր կյանքի ուղին կանցնի, բոլոր ուժերը նվիրելով հեղափոխութեանը: Յեւ նա իրոք վառվում եր աշխատելիս:

«Յես յերկար չապրեցի, բայց ապրեցի»,—գրում եր հետո Չերթինսկին իր աշխատանքի այդ ժամանակաշրջանի մասին մի նամակում:

Ինչքան ել հեղափոխականը զգուշ լինեք, ընդհատակում յերևան բերած այդպիսի յեռանդուն գործունեյութեանը յերկար չեք կարող շարունակել՝ մշտական վտտիկանական հետապնդման ու սրտովհատորների մատնութեանների պայմաններում:

1900 թ. փետրվարին Չերթինսկին բանվորների ժողովում բռնվեց վտտիկանութեան կողմից:

Թշնամիները գիտակցում եյին, թե Չերթինսկին իրենց

համար ինչպիսի մեծ վտանգ եր ներկայացնում, և նրան նրատեցրին վարչախաչի միջնաբերդ—բանտի X պավիլիոնը, վորտեղ 1861—1863 թվերի ապստամբութեան ժամանակից պահվում եյին միայն ամենաաչքի ընկնող հեղափոխականները: Շատերը մահապատժի եյին յենթարկվել նույն միջնաբերդում, վիսլա դետի ավին:

Բացառապես քաղաքական բանտարկյալներին համար նախորդված, այդ բանտի յուրաքանչյուր կամերայում փակցված եյին կալանավորների վարքի կանոնները: Դրանք չկատարելու համար սարսնում եյին ուսպրեսիաներով: Կետերից մեկը ասում եր, թե այդ բանտն ընկնողը պետք է մոռանա թե ով է յեղել ինքը, և միայն հիշի, վոր նա կալանավոր է:

Չերթինսկին բանտում մնաց այնպես, ինչպես ե'ր նա ազատութեան մեջ,—հեղափոխական, կուսակցութեան անդամ, բանվոր դասակարգի ազատութեան գործի մարտիկ: Այստեղ, իսկ ընտնութեանը վերջանալուց հետո նաև Սեդեցի բանտում, Ֆելիքս Երմոնկովիչը շարունակում եր իր յեռանում, Ֆելիքս Երմոնկովիչը շարունակում եր իր յեռանում գործունեյութեանը, ձեռք եր բերում գիտելիքներ, ստան գործունեյութեանը, և նրա եր բերում պատրաստվում եր սպառա պայքարի համար, նշում եր հետագա աշխատանքի պլանները: Ամբողջովին կլանված պայքարի վերարբերյալ մտքով, նա վոչ մի բոպե չեր մոռանում նրանց, ովքեր աղաղայում պետք է ողտվեն պայքարի պտուղներով,—յերեխաներին:

«Յես հանդիպել եմ կյանքում յերեխաների,—գրում ե նա բանտից,—իոքրիկ, տկարավուն յերեխաների՝ ծերունու աչքերով ու խոսվածքով: Ոհ, այդ սոսկալի յե: Կարիքը, բնտանեկան ջերմութեանը, մոր բացակայութեանը, միայն փողոցի ու դարեջրատան դաստիարակութեանն այդ յերեխաներին դարձնում եյին նահատակներ, վորովհետև նրանք իրենց մեջ կրում եյին կյանքի թույնը, վիչացածութեանը՝ իրենց մատաղ մարմնի մեջ: Այդ սոսկալի յե...»:

Մի տարի անց նա սրտաշարժ անկեղծութեամբ գրում է.



Ձերթինակին հանուն մասսայական սոցիալ-դեմոկրատական կուսակցութեան:

Լինելով անընդհատ գործողութեան մարդ, Ձերթինակին աշխատում է անդուլ, մինչև ուժասպառում: Գործարանից գործարան, խմբակից խմբակ, խորհրդակցութեանից խորհրդակցութեան եր շրջում: Նա ամեն տեղ հասնում է, ամեն բանի համար ժամանակ է գտնում, միայն հանգստի ու քնի համար ժամանակ չունի:

Այդ վեհ, բարեկազմ, վառվող աչքերով, պոռթկուն ու կրքոտ լեզու ունեցող յերկասարդը շրջապատողների վրա անջնջելի տպավորութեան եր թողնում: Արդեն այն ժամանակ նրա մեջ զգացվում եր հեղափոխութեան մեծ մարտիկը, իսկական ասպետը:

Ձերթինակու անձնական հմայքը շատ ուժեղ եր: Ձեր կարելի նրան չհասկատալ: Նա նվաճում եր իր գործի ճշմարիտ լինելու նկատմամբ ունեցած անհողողող համողվածութեամբ, հեղափոխական սրայքարում հանդես բերած արիութեամբ ու խիզախութեամբ: Ձերթինակու շրջապատողների մեջ այն համոզվածութեանն եր առաջ գալիս, թե նա իր կյանքի ուղին կանցնի, բոլոր ուժերը նվիրելով հեղափոխութեանը: Յե՛վ նա իրօք վառվում եր աշխատելիս:

«Յես յերկար չապրեցի, բայց ապրեցի»,—գրում եր հետո Ձերթինակին իր աշխատանքի այդ ժամանակաշրջանի մասին մի նամակում:

Ինչքան ել հեղափոխականը զգուշ լինեք, ընդհատակում յերևան բերած այդպիսի յեռանդուն գործունեությունը յերկար չեր կարող շարունակվել՝ մշտական վտտիկանական հետապնդման ու պրովոկատորների մատնութեանների պայմաններում:

1906 թ. փետրվարին Ձերթինակին բանվորների ժողովում բռնկեց վտտիկանութեան կողմից:

Թշնամիները գիտակցում էին, թե Ձերթինակին իրենց

համար ինչպիսի մեծ վտանգ եր ներկայացնում, և նրան նրստեցրին Վարչախալի միջնաբերդ—բանտի X պալլիլինոնը, վորտեղ 1861—1863 թվերի ապստամբութեան ժամանակից պահվում էին միայն ամենաաչքի ընկնող հեղափոխականները: Շատերը մահապատժի էին յենթարկվել նույն միջնաբերդում, Վիսլա դետի ամին:

Բացառապես քաղաքական բանտարկյալների համար նախորոշված, այդ բանտի յուրաքանչյուր կամերայում փակցված էին կալանախորների վարքի կանոնները: Դրանք չկատարելու համար սարսոնում էին ուսպրեսիաներով: Կետերից մեկը ասում եր, թե այդ բանտն ընկնողը պետք է մոռանա թե ով է յեղել ինքը, և միայն հիշի, վոր նա կալանախոր է:

Ձերթինակին բանտում մնաց այնպես, ինչպես ե'ր նա ազատութեան մեջ,—հեղափոխական, կուսակցութեան անդամ, բանվոր դասակարգի ազատութեան գործի մարտիկ: Այստեղ, իսկ քննութեանը վերջանալուց հետո նաև Սեդլեցի բանտում, Սեվիլքս Եղմունդովիչը շարունակում եր իր յետուն գործունեությունը, ձեռք եր բերում դիտելիքներ, պատրաստվում եր ապագա պայքարի համար, նշում եր հետագա աշխատանքի պլանները: Ամբողջովին կլանված պայքարի վերաբերյալ մտքով, նա վոչ մի բոպե չեր մոռանում նրանց, ովքեր ապագայում պետք է ողտվեն պայքարի պտուղներով,—յերեխաներին:

«Յես հանդիտել եմ կյանքում յերեխաների,—գրում է նա բանտից,—փոքրիկ, տկարալուն յերեխաների՝ ծերունու աչքերով ու խոսվածքով: Ոհ, այդ սոսկալի յե: Կարիքը, ընտանեկան ջերմութեանը, մոր բացակայութեանը, միայն զոդոցի ու դարձրատան դաստիարակութեանն այդ յերեխաներին դարձնում էին նահատակներ, վորովհետև նրանք իրենց մեջ կրում էին կյանքի թույնը, փչացածութեանը՝ իրենց մատաղ մարմնի մեջ: Այդ սոսկալի յե...»:

Մի տարի անց նա սրտաչարժ անկեղծութեամբ գրում է.



«Չգիտեմ, ինչու յես յերեխաներին սիրում եմ այնպես, ինչպես ուրիշ վոչ վոքի: Յես յերբեք չեյի կարողանա այնպես սիրել կնոջը, ինչպես նրանց եմ սիրում, և յես կարծում եմ, վոր յես չեյի կարողանա սեփական յերեխաներիս ամէլի սիրել, քան վոչ սեփական յերեխաներին... Հաճախ, հաճախ ինձ թվում է, վոր մայրն իսկ այնպես ջերմորեն չի սիրում, ինչպես յես»:

Յերեխաների հանդեպ տաճած այդ սերը Ֆելիքս Եղմունզովիչի մոտ մնաց ամբողջ կյանքի ընթացքում: Նրան դբադեցնում է նրանց դաստիարակութայն վերաբերյալ միտքը: Քրոջն ուղարկած նամակներից մեկում, հենց այն ժամանակ, նա խոսում է յերեխաների հանդեպ ունենալիք ներբազդացութայն մասին, յերեխաներին պատիժներ տալու անթույլատրելիութայն մասին:

«Յերեխաների ծեծն ու պատիժը—այդ նորվք է մարդկութայն համար: Ահ տալով, յերեխայի մեջ կարելի յե դարգացնել միայն ստորություն, փչացածություն, կեղծավորություն, ստորաքարչ վախշուկություն, կարեբերիք: Ահ տալը չի սովորեցնի շարք բարուց տարբերել, վորովհետև այսոր շարք բարուց ամէլի ուժեղ է, վորովհետև միայն չարն ունի ահ տալու ուժը: Նա, ով վախենում է ցալից, միշտ անձնատուր կլինի չարին... Դու հիշում ես իմ կատաղի համառությունը, յերբ յես յերեխա եյի: Միայն շնորհիվ այդ համառության և շնորհիվ այն բանի, վոր ինձ չեյին ծեծում, այսոր յես ուժ ունեմ պայքարելու չարի դեմ, վոչ մի բանի ուչք չդարձնելով: Մի պատեք և մի ծեծեք ձեր յերեխաներին, թող այդ բանից ձեզ փրկի նրանց հանդեպ տաճած ձեր սերը...»

Յես ինքս հիշում եմ, թե ինչպես մի անգամ դժուրյուններ արեցի, իսկ մայրս ինձ շրմփացրեց, սարսափելի տանջված լինելով մեր բոյորի մասին՝ բացառապես նրա վրա ընկած հոգացողությունից և դբաղված տնային անտեսությամբ: Վոչ դու, վոչ Ստասը և վոչ ել Յաղվիտյան չկա-

չիք—դուք արդեն այն ժամանակ, կարծեմ վիլնոյումն եյիք: Յես սկսեցի ամբողջ ուժով գոռալ և դայրույթից լալ, իսկ յերբ արցունքներս չբավեցին, մոտ ծաղիկներով դարբարված ետաժերկայի տակ՝ անկյունը, և դուրս չեկա, մինչև մթնելը: Հրաշալի հիշում եմ, թե ինչպես մայրս ինձ այնտեղ գտավ, ամուր սեղմեց կրծքին և պաշպչեց այնպես ջերմ ու սրտապին, վոր յես նորից լաց յեղա: Բայց այդ արդեն մեղմիկ, հաճելի արցունքներ եյին, արդեն վոչ թե դայրույթի արցունքներ, ինչպես առաջ, այլ յերջանկության, բերկրության և հանդստացման արցունքներ...»:

Ֆելիքս Եղմունզովիչը յերեխաներին սիրում էր վորպես մարդկութայն սպադան: Այդ սպադայով նա սպրում էր, զգում այն: Ահա թե ինչու վոչ մի տեսակ ուսուցիչական չկարողացավ կոտրել նրա կամքը:

Գրեթե յերկու տարի պահեցին Չերժինսկուն բանտում: Ապա հետևեց «բարձրագույն հրամանը» հինգ տարով վերյույսի—Յակուտսկից չորս հարյուր վերստ հեռու—աքսորելու մասին:

Նա գնում էր այնտեղ, վորտեղ գրեթե յերկու տասնամյակ տանջվում էր Ն. Գ. Չերնիչեյսկին, դեպի մի յերկիր, վորտեղ չատ ամիսներով կյանքը կանդ է աւնում, կաշկանդված լինելով քառասունհիսուն աստիճանի սառնամանիքներով, մի յերկիր, վորը կարծես ստեղծված է նրա համար, վորպեսզի սառեցնի ու ցրտահար անի մարդկութայն յերջանկութայն համար պայքարող մարտիկների ջերմ սրբտերը: Բայց և այդ մոռյլ աքսորալայրը Չերժինսկին դնում էր, վորպես հերոս, վորի մասին յերգվում է.

В груди его вера святая живет,  
Что правда сильнее булата.<sup>1</sup>

1 Նրա կրծքում ապրում է սուրբ մի հավատ,  
Վոր ճշմարտությունն ուժեղ է, քան պողպատ:



Նույնիսկ ամենախաղաղ ժամանակ շատ ծանր և հարկադրաբար կարվելը հեղափոխական աշխատանքից, բայց այն առանձնապես ծանր և պայքարի յեռուն շրջանում: Յեվ հենց մի այդպիսի ժամանակ Ձերթինսկուն քշում եյին աքսորի՝ ավելի ու ավելի հեռու հեղափոխական մարտերի ասպարեզից: Ձերթինսկու նման մարդուն, վորը գեպի կյանք, գեպի դործունեյություն, գեպի պայքար և նեւ-վում, քշում եյին, հուսալով, վոր յեթե ուսուցանաներով չկարողանան սպանել, ապա գոնե կընկճեն ու կկոտրեն նրան:

Հեղափոխական շարժման վերելքին ցարական կառավարությունը հակադրում էր աքսորյալներին հալածանքի ուժեղացմամբ, նա հեղափոխականներին պրովոկացիա յեր անում յելույթներ ունենալու, վորպեսզի նրանց հետ ավելի հեշտ դատապարտան տեսնի: Այդ ուսուցանանքը հենց միանգամից տեղացին Ձերթինսկու դրսին: Առաջին միջադեպը տեղի ունեցավ աքսորի ճանապարհին:

Նավազնացության բացվելուն սպասելու ժամանակ Ֆելիքս Եղմունդովիչը հանկարծ ընկավ Իրկուտսկի մոտ գլխուքով Ալեքսանդրովի կենտրոնական բանտը:

Բանտերում վարչական աքսորյալները յերբեք չեն հավասարեցվում քննության տակ գտնվող կալանավորներին կամ դատավճռով վորոշված կալանքի ժամկետն անցկացնողներին հետ: Նրանք համարվում եյին կիսադատներ: Կարող եյին այցելել միմյանց, անարգել կերպով անցնելով մեկ կամերայից մյուսը: Նրանց կամերաներն այնպես շուտ չեյին փակվում, ինչպես կալանավորների կամերաները: Ուղարկվող աքսորյալներից մեկը, վորը սովորաբար ընտրվում էր վորպես ավադ, իրավունք ուներ պահպանել ուղեկցությամբ քաղաք, գնալ, բոլոր աքսորականների համար գնումներ կատարելու:

Այդ «արտոնություններն» Ալեքսանդրովի կենտրոնական բանտի վարչությունն անակնկալ կերպով վերացրեց: Բանտը հուզվեց: Ձերթինսկու նախադահությամբ ժողով գումարվեց, վորտեղ վորոշեցին պահանջել մտցված տահմանափակումները վերացնել: Բանտի վարչությունը մերժումով պատասխանեց:

Այն ժամանակ Ֆելիքս Եղմունդովիչի առաջարկությամբ բանտում գտնվող բոլոր տասը սրահապաններին հրելով գուրս շարտեցին բանտի շրջապարսպի մյուս կողմը, բանտի դարպասը մարտապատեններով փակեցին: Գարպասի վրա պարզած դրոշակի վրա փայլին էր տալիս մի կարճ մահադրուժյուն՝ «Ալատություն»: Այդ յուրակերպ հանրապետության պաշտպանությունը կազմակերպելու համար և դործերը ղեկավարելու համար ընտրվեց մի յեռյակ Ձերթինսկու գլխավորությամբ:

Բանտային իշխանությունները չեյին սպասում այդպիսի բռուն բողոքի, և սիրտ չանելով իրենց պատասխանատվությամբ դործելու հարցում արին Իրկուտսկ: Բանտապետին Իրկուտսկից հեռադրով կարգադրություն արին բանակցությունների մեջ մտնել սպասամբած բանտի հետ և փորձել խաղաղ կերպով հարթելու կոնֆլիկտը:

Հավաքութեամ կալանավորները մի յեռյակ ընտրեցին և նրա վրա դրին իշխանությունների հետ վարելիք բանակցությունների դիվանագիտական խնդիրը:

1926 թվի «ОГОНЕК» ժուռնալում մասնակիցներից մեկի խոսքերով հաղորդվել են այդ միջադեպի մանրամասնությունները:

«Բանակցությունները վարվում եյին ցանկապատի փոքրիկ անցքի միջով՝ մարտական գորասյուներով շարված սպառազինված զինվորների աչքի առաջ: Բանտի վերակացու Լյասկովիչը զինվածներ էր անում, բայց անբավականաչափ: Բանտը չէր հանձնվում: Յերեկոյան դեմ բանակցու-



թիւններն ընդհատվեցին: Դրութիւնը բարդանում էր: Վրա հասավ տաղնապալից գելշերը: Կալանալորներէ մեծամասնութիւնն արթուն էր»:

Առաւելոյս զեւ իրեւուտակից Ալեքսանդրով յեկավ արտակարգ լիազօրութիւններ ստացած փոխ-նահանգապետը: Կալանալորները համոզված էյին, վոր կսկսվի սպանդ, մանավանդ վոր զինալորները, հրացանները հորիզոնադիր բռնած, պատրաստ կանգնած էյին կրակելու համար:

Սակայն բանը դրան չհասավ: Փոխ-նահանգապետին առընթեր հատուկ հանձնարարութիւններէ շինուլնիկը բանակցութիւններ էր վարում կալանալորներէ հետ: Այն արտոնութիւնները, վորոնք իշխանութիւնները փորձում էյին վոչնչացնել, վերականգնվեցին: Ապստամբելու համար ուսպրեսիաներ չկիրաւովեցին: «Առգաղութիւնը» վերականգնվեց, դրաչալը հանվեց, բարիկաղները վերացվեցին: Նախկին իշխանութիւնը հանձին փոխ-նահանգապետի, կալանալորներէ թուլլավութեամբ նորից մտավ բանտի տերիտորիան:

Ձերթինսկին հիվանդ էր: Բանտը քայքայել էր նրա առողջութիւնը: Բայց այս անգամ ևս, ինչպես և հարյուրավոր անգամ հետագայում, Փիլիկական վիճակը չէր ազդում նրա յեռանդի ու ձեռներեցութեան վրա: Նրա բոլոր մտքերը կենտրոնացած էյին մի բանի վրա—ի՛նչպես դուրս պրծնել թշնամիների ձեռքից և նորից կանգնել հեղափոխութեան համար պայքարող մարտիկների շարքերում:

Լենայով նախազնացութիւնը բացվելուն պես Ձերթինսկուն և բոլոր նրանց, վորոնց վորոչել էյին աքսորել Վիլյուլայի, ուղարկեցին Վերխուլենսկ: Այնտեղից հատուկ բեռնանավերով—գետային նավերով—նրանք պետք է Լենայի հոսանքով գնային մինչև Յակուտսկ և ապա Վիլյուլայ: Բայց Ձերթինսկին անցավ այդ ճանապարհի միայն առաջին ետապը:

Նա Վերխուլենսկից փախավ:

Այդ փախուստը Ձերթինսկին նկարագրել է 1902 թվի նոյեմբերի «Կարմիր դրոշակում» (Czerwony Standar):

Գիշերվա ժամի 12-ը խփեց յեկեղեցու փողրիկ աշտարակի վրա: Յերկու աքսորականներ հանդերին իրենց խրճիթի կրակը, և վորպեսզի չարթնացնեն տանտերերին, պատուհանից թափուկ դուրս սողացին բակը: Յերկար ու վտանգավոր ճանապարհ էր կանգնած նրանց առաջ, նրանք պետք է ընդմիջտ հրաժեշտ տային այդ վայրերին, վորոնք չքնաղ էյին, բայց ամայի, համակված մահով, խորթութեամբ ու անաղատութեամբ: Վորպես չարադործներ, նրանք զիչերով դաղտագողի անցնում էյին խրճիթների կողքով, ուղադրութեամբ դիտելով, թե մոտերքում հո մարդ չկա, հո չեն հետևում իրենց: Ծուրջը խաղաղ էր, դյուղը՝ քնած: Նրանք մի նավակ դտան, կամացուկ մտան նրա մեջ, դրալով իրենց մեջ ուժ ու հավատ, վոր կծլիվեն: Նրանց սրտերը ցավից ճմլվում էյին, յերբ հիշում էյին, վոր նույն դյուղում տանջվում են իրենց յեղբայրները, սրտանդվում ու տեղեկութիւնների սպասում պայքարի դաշտից, ուր նրանք, փախստականները, այժմ շտապում են, չնայած ցարական հրամաններին, պահպանութեանը և լրտեսների մըշտական հսկողութեանը: Այդ դրացմունքը, սակայն, չարուհակվեց միայն մի պահ: Նրանք պետք է նավակով անցնեյին սրընթաց ու լայն Լենայի մյուս ափը, փոքրադույն աղմուկ անդամ չհանելով:

Շունչը կտրվեց... Ուրախութիւնից սիրտը ճմլվում էր, վոր նրանք արդեն լողում են, վոր դյուղն արագորեն ծածկվում է: Յեյ նա շուտով բոլորովին ծածկվեց մթութեան մեջ:

Ուրախութեան ձիւր դուրս թռալ յերկամյա բանտարկութիւնից տանջված փախստականների կրծքից: Նրանք սպում էյին մեկ-մեկու դրկել, աշխարհով մեկ բարձրա-



ձայն աղաղակել իրենց ուրախութեան մասին, յայն մասին, թե իրենք, վոր դրանից հինգ բոպե առաջ աքսորական եյին, — դադարեցին այդպիսին լինելուց, զգացին իրենց խեղապես ազատ»:

Այս տողերը—խեղական հիմն են, ուղղված աղատութեանը...

Здесь штык или пуля,  
Там—воля святая...  
Эй, темная ночь, выручай!

Մութ դիշերը փրկեց, բայց այն դետը, վորով նրանք լողում եյին, քիչ եր մնում փախտականներին թաղեր իր ալիքներէ մեջ:

Հանգուցյալ ընկ. Միցկևիչ—Կապուտկանս այսպէս և սրատմում Ֆելիքս Եգմունդովիչի բերանից այդ վտանգավոր ձեռնարկութեան մասին.

«Արդեն Ալեքսանդրովի կենտրոնական բանտում յեղած ժամանակ, չնայած այն բանին, վոր յես այն ժամանակ հիվանդ եյի և ինձ ներարկումներ եյին անում, յես ամբողջ ժամանակ մտածում եյի փախուստի մասին: Մենք վորոշեցինք փախչել ճանապարհից, բայց այդ պլանը չհաջողվեց իրադրոծել: Յեւ մենք նախկնով վերխոլենսկից փախչում եյինք Չնամյոնկա դյուղի ուղղութեամբ: Մեծ մտախուղ եր: Գիշերը նախկը բաղվեց ծառին, և յես ընկա ջուրը: Յես կառչեցի նախկին, բայց նա ընկողմեց ջրի մեջ և սկսեց սուղլել: Մլադկոպեվցեվը (Չերժինսկու ուղեկիցը.—Ֆ. Կ.) թռավ ծառի վրա և մի կտոր փայտ դրեց ինձ: Այդ ինձ փրկեց: Մենք ափ դուրս յեկանք, խարույկ վառեցինք, տաքացանք: Սայլակով դետի ափով անցնող դյուղա-

1 Այստեղ—սին կամ դեղակ,  
Այնտեղ — սուրբ աղատութեան...  
եյ, մութ դիշեր, դու փրկիր:

յուն մենք խնդրեցինք պատահած դժբախտութեան մասին հայտնել դյուղում: Ծուտով այն ափին, վորտեղ մենք դրոնրվում եյինք, նախկնով լողալով մոտեցան դյուղացիները և մեզ տարան իրենց հետ: Մենք յերեսներին խաչ հանեցինք ու դռնութեան հայտնեցինք ասածուն կյանքներս փրկելու համար, ընդամին պատմելով դյուղացիներին, վոր մենք վաճառականներ ենք և դնում եյինք Յակուտսկ մամոնաի վոսկոր գնելու համար, բայց մեզ դժբախտութեան պատահեց և նախկն այն բոլորով, ինչ մենք ասում եյինք մեզ հետ, ջրասույգ յեղավ... Մենք «վիճում եյինք» Մլադկոպեվցեվի հետ, թե ինչ անենք սրանից հետո: Յեւ մենք վորոշեցինք Բալազանսկի վրայով «հետ» դառնալ Իրկուտսկ «հոր» մոտ փողի համար, իսկ այնուհետև նորից գնալ Յակուտսկ: Գյուղացիները մեզ արձակեցին: Ճանապարհին մենք հանդիպեցինք իսպրապիսիկին և դեմսկի պետին: Արդեն միջնում եր, և մենք անցանք նրանց կողքից, սայլ վրա պառկած: Տայգայի հետևը դանվող դյուղում ամբողջ, լսելով դանդակի ձայնը, վաղեց—նետվեց մեր կողմը: Ինչ վար մի ծերուկ կանգնեց ծնկներէ վրա, իսկ հետո դոտաց.

—Ո՞վ եք: Ո՞ւր: Ի՞նչու:

Մենք ձևացանք վերալորված աղաներ:

Յես թուղթ պահանջեցի և սկսեցի գրել «դանդառ գեներալ—նահանգապետին», միաժամանակ հարցումորձ անելով ներկա յեղող դյուղացիներին հայտնել նրանցից յուրաքանչյուրի անուն—ազգանունը:

Գյուղացիները վախեցան և փոխեցին մեր նկատմամբ ունեցած իրենց վերաբերմունքը: Մերուկը մեզ տարալ իր բնակարանը: Մենք նրան հաշոյեցինք և հայտնեցինք, վոր այդպիսի մի մարդու մոտ, վորպիսին նա յե, մենք մի բողբոջ եյլ չենք մնա:

Դրանից հետո մենք փոխադրվեցինք մի մարդու բնակարան, վորը ծանոթ եր մեզ բերող դյուղացու հետ: Այնու-



հետև մենք արդեն բարեհաջող կերպով շարունակեցինք մեր ճանապարհը» :

VI

Աքսորավայրից փախչելուց հետո, տանջված, քայքայված այն ամենից, ինչ քաշել էր, Ֆելիքս Եղմունդովիչը հիվանդացավ : Նա կարիք ուներ հանդատի ու բուժման : Քայց վրա յեր հասնում 1902 թիվը : Լենինյան «Искра»-յի ազդեցութունն որեցոր աճում էր : Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատիան սլատրատովում էր II Համադումարին : Ֆարական Ռուսաստանի պրոլետարիատը պայքարի յեր յեղում : Գործադուլային ալիքն ընդգրկել էր թե՛ Լիտվան և թե՛ Լեհաստանը : Այդպիսի մոմենտին վոչինչ չէր կարող ստիպել Չերժինսկուն մտածել իր մասին, իր հանդատի մասին, բուժվելու մասին : Նա դիտովին թաղվեց աշխատանքի մեջ :

Չերժինսկու փախուստը արքայավայրից վտարի հանեց քարական վոստիկանությանը : Վոստիկանության դեպարտամենտը պահանջարկան բաժանմունքներին ուղարկեց նրա նշանների մանրամասն նկարագրութունը և լուսանկարը, խտրիվ հրամանագրելով «փնտռել-գտնել և հանձնել» : Այդ հայտնի յեր Չերժինսկուն և ստիպեց նրան ե՛լ ավելի մեծ կոնսպիրացիա պահպանել, բայց ամենևին չազդեց այն բանի վրա, վոր նա հողուտ անձնական անվտանգության, ափելի պակաս յեռանդուն աշխատանք տաներ :

Ֆելիքս Եղմունդովիչը արագորեն գտնում էր սոցիալ-դեմոկրատական կազմակերպության աշխատանքում դոյութուն ունեցող թույլ տեղերը—անբավարար կապը կուսակցության՝ արտասահմանում գտնվող ղեկավարության հետ : Իր ինքնակենսագրության մեջ նա հաղորդում է . «Այս անգամ մեկնեցի արտասահման, անցումն ինձ համար դլուբ բերին ծանոթ բունդականները» :

Արտասահմանում էր գտնվում լեհական սոցիալ-դեմո-

կրատիայի ղեկավար կենտրոնը : Չերժինսկին նրա հետ պետք է վճուր կուսակցական աշխատանքում յեղած թերությունները վերացնելու հարցը :

Նրա Բեռլին ուղևորվելը հսկայական նշանակութուն ունեցավ : Լեհական սոցիալ-դեմոկրատիայի արտասահմանյան ղեկավարները վաղուց արդեն լայն հուշակ եյին վայելում, առանձնապես Ռոզա Լյուքսեմբուրգը : Բայց, դտնվելով Բեռլինում, նրանք ասլրում էյին կուսակցությունից կտրված : Թե՛ Բեռլինում և թե՛ Լեհաստանում դիտակցում էյին այդպիսի կտրվածության վտանգը, բայց դա համարելով տխրահուշակ «որչեկտիվ պայմանների» հետևանք, սահմանափակվում էյին այդ պայմանների դեմ արած դանդառներով :

Չերժինսկին, վորն որդանապես չէր տանում անգործունեյությունը, չէր կարող հաշտվել կազմակերպության մեջ դոյութուն ունեցող իրերի այդպիսի դրության հետ : «Յեզգինվեցի՛ կուսակցության՝ Լեհաստանում յերևան բերած անգործունեյության դեմ»,—գրում է նա կուսակցության ղեկավարների հետ ունեցած իր հանդիպման մասին : Նա յելք է փնտռում ստեղծված դրությունից : Ծուտով նրա Բեռլին գալուց հետո գումարվեց Լեհաստանի ու Լիտվայի սոցիալ-դեմոկրատական կուսակցության կոնֆերենցիան :

Կոնֆերենցիայում Չերժինսկին հարց է դնում ստեղծել կուսակցության ընդհատակյա «Czerwony Standart» («Կարմիր դրոշակ»)՝ որդան : Կոնֆերենցիան Չերժինսկուն ընտրեց կուսակցության Գլխավոր վարչության (ղեկավար կենտրոնի) անդամ : Այսպիսով, Չերժինսկին դարձավ կենդանի, կապող ողակ ղեկավարության ու կուսակցության միջև, սկզբում Կրակովից (ուր նա յեկավ ընդհատակյա՝ որդան կազմակերպելու համար), իսկ հետո ուսական Լեհաստանում :

Կոնֆերենցիայից հետո կուսակցական բարեկամները



պնդում եյին, վոր Չերժինսկին հանդուսանա, բուժվի, վոր  
րոմբէսեռ բանտն ու արտորը խիստ քայքայել եյին նրա  
առողջութիւնը: Բայց Ֆելիքս Եղմունդովիչը լսել անդամ  
չէր ուզում հանդստի մասին: Նա անմիջապէս մեկնեց Կրա-  
կով, վորպէսզի կազմակերպի կուսակցական դրականութեան  
հրատարակումն ու փոխադրումը ուսական Լեհաստան:

Դժվար է պատկերացնել այն աննկուն յեռանդը, վորով  
Ֆելիքս Եղմունդովիչն աշխատում էր Վարչաւլայում: Նա  
համարյա չէր հանդստանում, և հաճախ էր պատահում, վոր  
հարկ էր լինում զոռով ստիպել նրան մի բան ուտել: Որվա  
մեջ 18—20 ժամ աշխատելով, Ֆելիքս Եղմունդովիչը Վար-  
չաւլայից Լոձ էր նետւում և Լոձից Չենսոխով, կազմակեր-  
պելով տեղական կուսակցական կոմիտեներ ու կոնֆերեն-  
ցիաներ, հանդէս դալով բանվորական միտինգներում:

Տասնյակ անդամներ նա դադարի անցնում էր սահմանը,  
աչքի առաջ ունենալով այն վտանգը, վոր կարող է սպանվել  
սահմանային պահակազորի կողմից: Այդ ժամանակ Յուզե-  
ֆին (այդ մականունով էր աշխատում այն ժամանակ Չեր-  
ժինսկին) գիտեցին ամբողջ բանվորական Վարչաւլան ու  
Լոձը, ամբողջ Դոմբրովայի քարածխային ավազանը: Չու-  
նենալով ոթեան, առավոտյան վտահ չլինելով, թե գիշերը  
հանկարծ բանտ չի դրվի, Յուզեֆը, վոր այն ժամանակ  
արդեն տառապում էր թոքախտով, շարունակում էր լինել  
ամենուրեք, վորտեղ հարկավոր էր մասսաներին վտաքի հա-  
նել առաջիկա հեղափոխական գոտեմարտի համար:

Բանվորների ցույցերը, վոստիկանութեան, ժանդարմ-  
ների, կազակների և զինվորների հետ տեղի ունեցող ընդ-  
հարումները հաճախակի յերևութ եյին դառնում:

Վախենալով, վոր ճնշված ազդութիւնների ժողո-  
վուրդները կարող են գենքը ձեռքին դուրս գալ իրենց սարը-  
կացնողներին դեմ, ցարական ուղղամտիները մշակեցին իրենց  
զինված ուժերը դասավորելու հատուկ սխտեմք: Զինվորնե-  
րին յերեք չէյին թողնում ծառայելու իրենց բնակութեան

վայրում: Ռուսներին ու թաթարներին փոխադրում եյին  
Լեհաստան, լատիշներին—թաթարներով բնակված տեղերը,  
և այլն և այլն: Այդ սխտեմի առկայութեան դեպքում ցա-  
րական կառավարութիւնը ոռւս զինվորներին ոգտագոր-  
ծում էր Լեհաստանի շարժումը ճնշելու համար, իսկ լեհ  
զինվորներին՝ Ռուսաստանի բանվորների հետ դատաստան  
տեսնելու համար:

Պետք էր պայքարել ինքնակալութեան այդ տակտիկայի  
դեմ: Այդ հարցն առանձնապէս սուր ձևով կանգնեց Լեհաս-  
տանի ու Լիտվայի սոցիալ-դեմոկրատիայի ղեկավարների  
առաջ, և մասնավորապէս, Չերժինսկու առաջ: Նա իրեն  
պարզ հաշիվ էր տալիս այն մասին, վոր ոռւս զինվորները  
կարող են անխտահութեամբ վերաբերվել լեհերի կողմից  
արվող դիմումներին: Զինվորական իշխանութիւնը բոլոր  
միջոցներով համոզում էր զինվորներին, վոր լեհերը—դա-  
վաճաններ ու խռովարարներ են, վոր այն լեհերը, վորոնք  
դիմում են նրանց բարեկամական խոսքերով ու խորհուրդ-  
ներով, դադարաբար մտադրվում են իշխանութիւնը դրավել  
և ինքնուրույն լեհական պետութիւն կազմել:

Աքտորումներից հետո հրաշալի տիրապետելով ոռւսե-  
րեն լեզվին, Չերժինսկին ոռւսերեն խոսող ընկերներից կազ-  
մեց հատուկ մի «ռազմա-հեղափոխական կազմակերպու-  
թիւն»: Այդ կազմակերպութիւնը պետք է գործեր վորպէս  
ՌՄԴԲԿ մասը, վորպէսզի զինվորները հասկանային, վոր  
նրանց հետ զրույցներ են ունենում ոռւսական հեղափոխա-  
կան կուսակցութեան անդամները:

Յույցերի ու բանվորների զինված յելույթների հաջո-  
ղութեանը շատ էր խանդարում այն, վոր նրանք միաժամա-  
նակ տեղի չէյին ունենում, գոնե խոշորադույն արդյունա-  
բերական կենտրոններում: Դրանից ոգտւում էր ցարական  
կառավարութիւնը և շարժումը ճնշում էր մի տեղում,  
նախքան նա կսկսվեր մի այլ տեղում:



Լեհաստանում, ուր պաները տասնյակ տարիներ ատե-  
լություն եյին սերմանում դեպի ուուսները՝ վորպես  
ճնշողներ, սոցիալ-դեմոկրատները կատաղի դիմադրու-  
թյան եյին հանդիպում ոուս բանվորների և ոուս  
գլխավորների հետ համատեղ յեղույթներ կազմակերպելու  
յուրաքանչյուր փորձի ժամանակ: ՊՊՍ-ի առաջնորդը—  
Իոսիֆ Պիլսուդսկին—համատեղ յեղույթներ ունենալու առա-  
ջարկի առթիվ, հայտարարեց.

—Յես ամբողջ կյանքումս պատրաստվել եմ ոուսներին  
դեմ պայքարելու համար, իսկ այժմ ինձ առաջարկում են  
հանդես դալ նրանց հետ միասին:

Բայց վորչափ ոուս բանվորների ուժեղացող յեղույթնե-  
րի վերաբերյալ լուրերը թափանցում եյին Լեհաստանի  
Փարբիկաներն ու դործարանները, նույնչափ լեհական սո-  
ցիալ-դեմոկրատիայի կուսակցական ղեկավարութանն  
այլելի ու այլելի յեր հաջողվում լիկվիդացիայի յենթարկել  
լիտի նացիոնալիստների ազդեցությունը:

## VII

Վրա հասավ 1905 թիվը:

Լենինը դրում եր, վոր 1905 թվի հունվարի 9-ին «պրո-  
լետարիատի հեղափոխական յեղույթի առաջին ամպրոպը  
վորոտաց: Այդ ամպրոպի վորոտները տարածվեցին ամբողջ  
Ռուսաստանով մեկ, մինչև այդ չտեսնված արադությամբ  
վիթխարի կովի հանելով մեկ միլիոնից այլելի բանվորնե-  
րի: Պետերբուրգին հետևեցին ծայրերկրները, վորտեղ ազ-  
գային ճնշումը սրել եր առանց այն ել անտանելի քաղաքա-  
կան ճնշումը: Ռիդան, Լեհաստանը, Որեսսա, կովկասը  
հերթով դարձան ապստամբության ոջախներ, վորը լայնու-  
թյամբ ու խորությամբ աճում եր ամսե-ամիս, շարթե-չա-  
բաթ»<sup>1</sup>:

1905 թվի հեղափոխությունն ալեկոծեց Լեհաստանի  
բանվոր դասակարգին: Յեվ, ինչպես Ռուսաստանի բոլոր  
արդյունաբերական կենտրոնների բանվորները, այնպես ել  
Լեհաստանի պրոլետարիատը փողոց դուրս յեկավ, միանա-  
լով ոուս դասակարգային յեղբայրակիցների հետ: Պրոլե-  
տարիատի ահտիվ պայքարի այդ մոմենտներին, Ֆելիքս Եդ-  
մունդովիչը մեկեն աճեց ու դարձավ առաջնորդ, վորը մաս-  
սաներին իր հետևից ե տանում: Նա կազմակերպում եր ժո-  
ղովներ, յեղույթներ եր ունենում բանվորների առաջ, նրանց  
մարտի կոչելով ինքնակալության դեմ, մերկացնելով բան-  
վոր դասակարգի թշնամիներին:

1905 թ. մայիսի 1-ին Չերժինսկին գլխավորում ե վիթ-  
խարի ցույցը Վարչավայում: Լեհաստանն առաջին անգամ  
տեսավ այդպիսի մասշտաբի մի ցույց: Գլխավոր մագիս-  
տրալին, Ույազլովի ծառուղուն հարող բոլոր փողոցներն  
ու միջափողոցները լեփլեցուն եյին մարդկանցով:

Յուշարարները յենթարկվեցին վայրենի դատաստանի:  
Հեծյալ ժանդարմերիան զնդակահարում եր անդեն բանվոր-  
ներին, կանանց, յերեսխաներին: Տասնյակ սպանվածներ ու  
վիրավորներ իրենց արյունով ներկեցին Վարչավայի սալար-  
կը:

Չերժինսկուն չսասանեցրին այդ վայրենի ռեպրեսիանե-  
րը: Նա համարձակ մարտակոչ ե նետում ցարական սատ-  
րապներին—կազմակերպում ե բողոքի ընդհանուր դործադուլ:  
Գործադուլավոր բանվորները հանդես են բերում հազվա-  
դյուս տոկոսություն ու համառություն: Լեհական բուր-  
ժուական մամուլը տաղնապով հազորդում եր.

«Բանվորները քաղցում են խանդավառությամբ...»:

Այդ որերին հեղափոխական շարժումը մեծ թափ ստա-  
ցավ: Վարչավայի հետևից վոտըի յելան Լոճի և Լեհաստա-  
նի մյուս արդյունաբերական կենտրոնների բանվորները:  
Լոճի փողոցներում սկսվեցին ժողովուրդի իսկական փողո-

<sup>1</sup> Լենին, Յերկ. Հ. VIII, հայ. հրատ., էջ 395:



ցային կախիմներ դորքի դեմ, ճակատամարտեր բարիկազների վրա: Լենինն այն ժամանակ խոսում էր «հերոսական Լեհաստանի հերոսական պրոլետարիատի» մասին, վորը «պրոլետարական հերոսության ու ժողովրդական խանդավառության որինակներ» ցույց տվեց:

Չերժինսկին այդ որերին անցքերի կենտրոնումն էր, բոլորի աչքի առաջ, մասնակցելով ամեն տեսակ ժողովներին, խորհրդակցություններին, կոնֆերենցիաներին, մշտապես ուսկի յենթարկելով կյանքը: 1905 թ. հուլիսին ժանդարմները բռնեցին նրան Վարչավայի մոտի անտառում տեղի ունեցող կոնֆերենցիայում:

Նրան նորից նստեցրին Վարչավայի միջնաբերդի՝ իրան արդեն ծանոթ X պալիլիոնը: Նա բոլորովին մեկուսացված էր արտաքին աշխարհից: Այդ ժամանակ, չնայած ցարական կառավարության փորձերին՝ հեղափոխական շարժումը սկսվեցին արդեն ու կեղծ խոստումներով կանգնեցնելու, հեղափոխությունն ավելի ու ավելի յեր աճում:

Ռուսաստանում բռնկվեց ընդհանուր գործադուլ: Կանգ առան յերկաթուղիները, երեկտրոքարչերը, գործադուլ արին կառապանները, աշխատանքը դադարեցրին Փարբիկաները, գործարանները, տպարանները, թերթերը լույս չտեսան, բայց առ բոլոր կարող եյին գործելուց դադարել երեկտրականությունն ու ջրմուղը: Վոչ մի ուսուցիչ չէր կարող կանգնեցնել այդ վեհապանձ ու հուժկու շարժումը, և ցարական կառավարությունը հարկադրված էր դիջումներ անել: Նա հրատարակեց այսպես կոչված 1905 թվի հոկտեմբերի 17-ի «Սահմանադրական մանիֆեստը»:

Բայց հոկտեմբերի 17-ի մանիֆեստը ցարական կառավարության խորամանկությունն էր լուի, վորով հույս ուներ յարեւ ժողովրդական մասսաներին, թմրեցնել նրանց զոհնությունը: Մոտքով ազատություն խոստանալով, ցարական կառավարությունն իրականում էյական վոչինչ չտվեց:

Սպասվող լայն քաղաքական ներման վոխարեն, ներում չնորհվեց քաղաքական կալանավորների աննշան մասին միայն:

Չերժինսկին, բանտից դուրս գալով, անհապաղ գնում է բանվորների մոտ: Նա հրաշալի հասկանում էր, վոր այժմ, յերբ ցարի կողմից ժողովները «թույլատրված են», միտինդներում կհայտնվեն բոլոր նրանք, ովքեր բանվոր դասակարգի այդ առաջին հաղթանակը կկամենան ոգտադործել իրենց դասակարգային շահերի համար, ովքեր կապացուցեն, վոր այժմ «սահմանադրական Ռուսաստանում» բանվորը կարող է «որինականացրած» ճանապարհով ձեռք բերել իր իրավունքները: Նա դիտեր, վոր այդ մոմենտից կարող են ոգտվել պեպեսնականները, վորպեսպի նոր փորձեր անեն հեղափոխական շարժումը բուրժուա-նացիոնալիստական խնդիրներին յենթարկելու: Շո՛ւտ այնտեղ, դեպի միտինդները, բանվորները մոտ, խաբեյությունը մերկացնելու, նոր պայքարի կոչելու նրանց...

Ժողովները, միտինդները, ցույցերը լիակատար յեռուդուի մեջ էյին:

Յերբ Չերժինսկին յերեւաց ցուցարարների մեջ, բանվորներին ուղղած նրա առաջին խոսքերն էյին.

«Մի հավատաք ցարական վոգորմություններին: Մի հավատաք բուրժուազիային: Նա արդեն ընդառաջ է գնում ցարիզմին և ցարիզմի հետ միասին կպայքարի բանվորների դեմ: Գուք ձեր նպատակներն ունեք, և դուք պետք է հույս դնեք միայն ձեզ վրա, ձեր ուժերի վրա»:

Լեհաստանի պրոլետարիատն արդեն համարյա մի քառորդ զար պայքարում էր սոցիալիզմի՝ դրոշակի տակ, և բուրժուական կուսակցությունների համար հեշտ չէր նրան բացահայտորեն իր հետևից քաշել-տանել: Բայց պեպեսականները լուրջ վտանգ էյին ներկայացնում: Բուրժուազիայի այդ գործակալները, սոցիալիստական Ֆրադյուրդիայով



քողարկվելով, ձգտում էյին խորտակել լեհական պրոլետարիատի համերաշխությունը ուսական պրոլետարիատի հետ: Ռուսական դեմոկրատական հեղափոխությունը նրանց ուրախացնում էր վորպես Ռուսաստանի թուլացման միջոց. նրանք կարծում էյին, թե հասել է իրենց մտադրած՝ Լեհաստանին Ռուսաստանից անջատելու բարեհաջող մոմենտը: Ուստի փոխանակ ուսական բանվորական շարժմանն աջակցելու, նրանք կոչ էյին անում «ամբապնդել» Լեհաստանը, դադարեցնել դասակարգային պայքարը, միավորել բոլոր դասակարգերին՝ «մոսկալներին» դեմ պայքար մղելու համար: ՊՊՄ-ն ամեն կերպ վիժեցնում էր միասնական բանվորական Փրոնտը և ամենավճուկան ձևով հանդես էր գալիս ընդդեմ բանվորների, յերբ նրանց պահանջներն ուղղվում էյին լեհական կապիտալիստների դեմ:

Այս տեսակետից խիստ բնորոշ են Գալլիցիայի պեպեեսականների պարազուլուս Իգնատի Դաշինսկու խոսքերը: Իմանալով, վոր ընդհանուր գործադուլի կապակցությամբ յերկաթուղային յերթեկուցությունը կանդ է առել նաև Վարշավա-Վիեննա յերկաթուղու վրա, վորը պատկանում էր մասնավոր անձանց, նա դայրույթով հայտարարեց.

«Գործադուլը կառավարական ճանապարհների վրա— այդ հասկանալի յե, խելացի յե, նպատակահարմար է, բայց մասնավոր ճանապարհների վրա»:

Նմանապես դավաճանաբար պահեց իրեն այդ կուսակցությունը նաև 1905 թվի գեկտեմբերին տեղի ունեցած Մոսկվայի զինված ապստամբության փամանակ: Սոցիալ-դեմոկրատները բանվորներին գործադուլի էյին կոչում, վորպեսզի դեներալ-նահանգապետ Սկալնին հնարավորություն չտան Լեհաստանում գտնվող ուղմական ուժերի մի մասը ուղարկել Մոսկվայի ապստամբ բանվորներին ճնշելու համար: ՊՊՄ-ը բոլոր ուժերով հակադրում էր գործադուլի հայտարարմանը:

Գործադուլն անհրաժեշտ էր ինչ գնով էլ լիներ անց—

կացնել: Ձերժինսկին ուղևորվեց Դոմբրովայի քարածխային ավազանը: Ուրիշ ընկերների հետ միասին նա ուժով մտալ ամենախոշոր գործարանը, միտինգ գումարեց և բանվորներին պայքարի կոչեց: Ադմինիստրացիան, պեպեեսականների լուլյայն համաձայնությամբ, իմաց տվեց վոստիկանությանը:

Գործարան ներխուժեցին զինվորները... ճառաստուությունը կեսին ընդհատելով և թաղնվելով բանվորների հոծ բազմության մեջ, Ձերժինսկին բարձրաձայն, ամբողջ գործարանով մեկ գոռաց.

— Շչա՛կ:

Շչակներն աղղանշան էյին ծառայում գործադուլի համար:

Միքանի վայրկյան անց հնչեց թնդաձայն, յերկարաձիգ շչակը, վոր հանքագործներին կոչ էր անում պայքարի յելնել բարեկադների վրա կովող Մոսկվայի բանվորների հետ միասին:

Գործն արված էր: Գործարանները կանդ առան: Սկսվեց գործադուլը:

Կատաղած վոստիկանությունը նետվեց Ձերժինսկուն վորոնելու: Վոստիկանական խուզարկանքները դես ու դեն էյին վաղվղում գտնելու, բայց բանվորները բոլոր միջոցները ձեռք առան նրան փրկելու համար, և Ձերժինսկին բարեհաջող կերպով դուրս պրծավ Դոմբրովայի ավազանից...

Վորքան ավելի էյին վեր բարձրանում հեղափոխության ակիբները, այնքան ավելի ցավադին էր զիտակցում Ձերժինսկին, վոր Լեհաստանի և Լիտվայի սոցիալ-դեմոկրատական կուսակցության գործունեյության մեջ յեղած խոշորագույն թերությունները կապված են Լենինի կուսակցությունից, ուսական բոլշևիկներից կտրված լինելու հետ:

Դրա հետ Ձերժինսկին հաշտվել չեր կարող: Նա արդեն վաղուց էր բոլշևիկների կողմը:



1905 թվի ապրիլի 12-ից մինչև 27-ը տեղի ունեցավ ՌՄԴԲԿ բոլշևիկյան III համադումարը, վրոտեղ բանաձևեր ընդունվեցին ղինված ապստամբության, ժամանակաշար հեղափոխական կառավարության, դյուրացիական շարժման հանդեպ ունենալիք վերաբերմունքի հարցի շուրջը: Այդ համադումարում ընդունվեց նաև մի բանաձև «դեպի աղապին սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունները ունենալիք վերաբերմունքի մասին», վորը բոլոր սոցիալ-դեմոկրատական կազմակերպություններին կոչ եր անում միավորփելու:

Բոլշևիկյան համադումարի վորոշումը Ձերժինսկին ընդունեց իբրև կոչ: Նա ամենուրեք պրոպագանդա յե անում միավորման դադախարը, և լեհական սոցիալ-դեմոկրատիան նրան պատվիրակ ե ուղարկում ՌՄԴԲԿ Ստոկհոլմում հավաքված IV միավորիչ համադումարին: Այստեղ Ձերժինսկին առաջին անգամ հանդիպեց Լենինին ու Ստալինին:

Ձերժինսկու ակտիվ մասնակցությամբ համադումարը վորոշում ընդունեց՝ Լեհաստանի ու Լիտվայի սոցիալ-դեմոկրատական կուսակցությունը, վորպես բաղկացուցիչ մաս՝ ՌՄԴԲԿ մեջ մտնելու մասին: Ձերժինսկին մտցվեց ՌՄԴԲԿ Կենտրոնական Կոմիտեյի կազմի մեջ: 1906 թվի ուղտատաին և հոկտեմբերին Ձերժինսկին վորպես Կենտկոմի անդամ աշխատում ե Պետերբուրգում:

Վրա հասան սեակցիայի տարիները: Յարական կառավարությունը դաժանաբար հալածում ե հեղափոխականներին: Սկսվեցին մասսայական ձերբակալությունները, կուսակցական ու պրոֆեսիոնալ կազմակերպությունների ջախջախումները:

Ձերժինսկին տեղեկանում ե, վոր Վարչավայում ձերբակալվել են կազմակերպության շատ անդամներ, քարուքանդ են արվել ընդհատակյա կուսակցական տպարանները: Նա շտապով մեկնում ե Վարչավա, հաստատում ե կապերը, նորից կարգավորում կուսակցական կազմակերպությունը:

1906 թվի դեկտեմբերին, մտնելով կոնսպիրատիվ բճակարանը, Ձերժինսկին ընկավ վոստիկանության դարանը և մի խումբ կուսակցական աշխատողների հետ ձերբակալվեց:

Բանտերն այն ժամանակ այնքան լեփ-լեցուն եյին, վոր վարչավայի ոստուչայում, ուր ձերբակալությունից անմիջապես հետո ուղարկում եյին կալանավորներին, կամբարաներում տեղ չկար վոչ միայն պառկելու, այլ նույնիսկ նստելու: Մյուս բանտերում կալանավորներն ավելի քիչ եյին, բայց և այնպես յուրաքանչյուր կամերայում այնքան մարդ եյին խցիկ, վոր բանտային ռեժիմի պահպանման մասին խոսք չեր կարող լինել: Կամերաներն ամբողջ որը բաց եյին, կալանավորներն ազատ կերպով այցելում եյին մեկ-մեկու: Այդպիսի շփումը թույլ եր տալիս ավելի մոտիկից ուսումնասիրել իր և ոտար բանակի մարդկանց:

Այդ այն ժամանակն եր, յերբ մասսայական հեղափոխական շարժումը սկսեց թուլանալ: Հեղափոխականների նկատմամբ կիրառված դաժան դատաստանը չեր կարող չանդարդառնալ անկայուն, տատանվող, թույլ, հեղափոխության հորձանուտում պատահաբար ընկած մարդկանց վրա: Ե՛լ ավելի ու ավելի եյին լիտիաբար հանդես գալիս մենշևիկ-լիկվիդատորները, կոչ անելով «լեզալ գործունեյության», ձգտելով վոչնչացնել ընդհատակյա աշխատանքը և դրանով իսկ նաև բանվոր դասակարգի հեղափոխական կուսակցությունը: Այդ «իդեոլոգիան» իր համար ավելի ու ավելի կողմնակիցներ եր գտնում հեղափոխության մեջ պատահաբար ընկած մարդկանց մեջ, վորոնք «պտաշաճ» պատրվակ են փնտում հետ կանդեկու համար: Ձերժինսկին անողորմաբար կովում եր իրենց դասավորությունը դադախարապես հիմնավորել վորձող այդ ազանդավորների դեմ

Ռատուչայում նա յերկար չմնաց և շուտով փոխադրվեց այն բանտը, վորը հայտնի յեր «Պավիակ» անունով:



Դրսում տեղի ունեցող՝ առանձին ժարդկանց և ամբողջ խմբերի՝ հեղափոխությունից հետ քաշվելը տաք դիսկուսիաների առարկա չէր հանդիսանում բանտերում։ Պավիակում, վորտեղ հանկարծ ընկավ Չերժինսկին, այդ առթիվ թունդ վիճարանություններ էլին տեղի ունենում։

ՊՊՍ-ի շովինիստական Փրակցիայի անդամները Ռուսաստանում կատարված հեղափոխության պատմության մեջ տեսնում էլին Ռուսաստանի՝ վորպես բարբարոս յերկրի՝ նկատմամբ իրենց ունեցած հայացքների հաստատումը, յերկիր, վորտեղ վոչ մի հեղափոխություն չի կարող լինել, և զայրանում էլին նրանց դեմ, ովքեր խանդարում էլին իրենց՝ «մոսկալների» դժվարին դրությունը ազդայնական նպատակներով ոգտադործելու։ Սոցիալ-դեմոկրատների (առանձնապես ուսմ մենչևիկներին մոտ կանգնածներին) մեջ լավում էլին Պլեխանովի—«Հարկավոր չէր գենը վերցնել»—հայտարարության արձագանգները։

Չերժինսկին սուր կերպով հարձակվեց պանիկյորների և թերահավատների վրա։ Նա այն ժամանակ հայտարարեց․

«Միայն պարտությունների միջոցով, միայն գործողությամբ ու պայքարով բանվոր դասակարգը կմոտենա հաղթանակին․․․»

Թե ինչքան պիտի նստեր բանտում, Չերժինսկին, իհարկե չզիտեր։ Յերկյուզ կար, վոր կալանավորների հոծ բազմության առկայության դեպքում նա տարիներով կնստի բանտում, մինչև վոր քննչական իշխանությունները կսկսեն նրա գործի քննությունը։ Բայց հենց այդ հանգամանքն էլ փրկեց Չերժինսկուն։ Բանտերը լեփլեցուն էլին և, վորպեսզի տեղ ազատվեր նոր կալանավորների համար, հարկ յեղավ ավելի առաջ կալանավորվածներին ազատել դրավականով։ Շնորհիվ դրան Չերժինսկին 1907 թվի մայիսին նորից ազատվեց։

Չերժինսկին 1907 թվի մայիսին նորից ազատվեց։

Չերժինսկին 1907 թվի մայիսին նորից ազատվեց։

Չերժինսկին 1907 թվի մայիսին նորից ազատվեց։

Կարմիր ուրվականից սարսափած, ուռաական բուրժուազիան վոչ միայն հաշտվում էր ինքնակալության հետ, այլև սկսեց բացահայտորեն աջակցել ինքնակալությանը։ Նույնը տեղի չէր ունենում նաև Լեհաստանում, առանձնապես նրա խոչորազույն արդյունաբերական կենտրոնում՝ Լոձում։ Արդեն հեղափոխության ամենաբուռն շրջանում Լոձի կապիտալիստները, ամեն տեպակ Պոդնանսկինները, Շայքլերները և ուրիշ․․․ «մոսկալների կառավարության» ոգնությամբ բոլոր ուժերով փորձում էլին ճնշել բանվորական շարժումը։ Հենց վոր կապիտալիստների համար պարզ դարձավ, վոր ինքնակալությունը հարվածից կազդուրվեց և դարձյալ ի վիճակի չէ զինված ուժով պաշտպանել իրենց, նրանք սկսեցին բանվորներին մասսայաբար արձակել։ Լոձում քսանյերեք հազար մանածագործներ փողոց չպրտվեցին։

Մի ձեռնարկության մեջ սպանվեց նրա տերը։ Լոձի գեներալ-նահանգապետն այդ սպանության համար դատաւորեն դատաքտան տեսավ բանվորների հետ։ Նրա անձնական հրամանով, սուանց վորեւե դատի, գնդակահարվեցին յոթ բանվոր և մեկ բանվորուհի․․․

Այդ սպանությունների լուրը տարածվեց կայծակի արագությամբ։ Չերժինսկին սլացավ Լոձ, թչնամու դեմ հեղափոխական հակահարված կազմակերպելու հաստատուն



վորոշմամբ: Նա հանդես եր գալիս Փարբիկաներում ու գործարաններում, բանվորներին կոչ եր անում ընդհանուր գործադուլ անելու: Այս անգամ նրան չհաջողվեց բանվորներին վտարի հանել մասսայական հեղափոխական յեյուրթի:

Բայց Չերժինսկին իրեն չկորցրեց ժամանակավոր անհաջողութունից: Պարտութունը չեր կարող ընկճել այս յերկաթե մարդուն: Նա յերբեք չեր կորցնում հավատը դեպի վերջնական հաջողութունը:

«Մենք արինք այն, ինչ պարտավոր եյինք անել,— հայտարարեց նա հանդիստ կերպով:—Այս անգամ չհաջողվեց, մի ուրիշ անգամ կհաջողվի»:

### VIII

Շուտով Չերժինսկին նորից ընկավ ցարական պահտորդական բաժանմունքի ձեռքը: 1908 թվի ապրիլին նա նորից հայտնվեց Վարչավայի միջնաբերդի X պալիլիոնում:

X պալիլիոնը տառացիորեն «մեռյալ տուն» եր: Մեռելային լուսթյունը ճնշում եր ուղեղը: Կայանավորվածներից ամեն մեկը գիտեր, վոր հենց այստեղ, կողք-կողքի, մյուս կամերաներում, նստած են բարեկամները, գործակից ընկերները, բայց մարդկային ձայնի հնչյունը չեր հասնում կայանավորներին:

1908 թվին մի ձայն համակեց ամբողջ X պալիլիոնը— չլթաների սարսափելի ձայնը: Շատ դադաղ-կամերաներում, չլթաներով կապկապված, գտնվում եյին մահվան դատապարտվածներ: Այդ չլթաների ձայնը բոլոր նրանց, վոր նստած եյին նույնպիսի դերեզմաններում, բայց դեռ չեյին դատապարտված, հիշեցնում եր, վոր նրանց սպասում ե համանման վիճակ... Առավոտները, լույսբացին ձայն եր լսվում միջանցքից՝ մարդկանց տանում եյին մահապատի... Պատահում եր, վոր բարձրանում եր իրա-

րանցում, հրհրոց, վորն արագորեն հանդարտվում եր... Այդ դատապարտվածներն եյին անհույս փորձ անում դիմադրելու:

«Յերբ ինձ մտցրին այն կամերան, վորտեղ յես նստել եյի սրանից արդեն յոթ տարի առաջ,—գրում ե Չերժինսկին իր որագրում,—առաջին ձայնը, վոր յես լսեցի, այդ չլթաների ձայնն եր, վոր հասնում եր հարևան կամերայից: Այդ ձայնն արձագանդ ե տալիս չլթայլածի յուրաքանչյուր շարժման ժամանակ: Սառն, անողորմ յերկաթը միացած ե մարդկային կենդանի մարմնին—յերկաթ, վորը հավերժ ծարափի յե ջերմության, վորը յերբեք չի կարող հազնալ, և վորը միշտ հիշեցնում ե դերությունը: Իմ միջանցքում այժմ չլթայլած ե մեծամասնութունը՝ տասներեքից յոթը: Յերբ նրանք դուրս են գալիս գրասանքի բանտային ամբողջ լուսթյունը համակվում ե այդ կրքձայնով, վոր թափանցում ե մինչև հոգու խորքը»:

Բանտի ծանր, ճնշող իրադրություն: Այստեղ ամեն ինչ արված ե այն հաշվով, վոր ընկճեն հեղափոխականի վողկն: Բայց Ֆելիքս Չերժինսկին անհողողոց ե: Որագրի հուզիչ տողերի միջից մեր առջև ե կանգնում քաջարի մարտիկի, հեղափոխության ասպետի կերպարը:

Բանտում ղեմավորելով նոր, 1909 թիվը, Չերժինսկին իր որագրում գրում ե.

«Բանտում յես հասունացա մենության տառապանքների մեջ, աշխարհի և կյանքի կարոտի տառապանքների մեջ: Յեյ, չնայած դրան, հոգումս յերբեք կասկած չեր առաջանում գործի նկատմամբ: Յեյ այժմ, յերբ, թերևս, յերկար տարիներով բոլոր հույսերը թաղված են արյան հեղեղների մեջ, յերբ նրանք խաչված են կախաղանի սյունների վրա, յերբ ազատության համար պայքարող տասնյակ հազարավոր մարտիկներ տառապում են գնդաններում կամ



նեամբ են Սիբիրի ճյուղապատու ղրանները,—յես հպարտանում եմ: Յես տեսնում եմ արդեն շարժման մեջ գրված վիթխարի մասսաներ, վորոնք սասանեցնում են հին կարգը,—մասսաներ, վորոնց մեջ պատրաստվում են նոր ուժեր նոր պայքարի համար: Յես հպարտ եմ նրանով, վոր յես նրանց հետ եմ, վոր յես տեսնում, գզում, հասկանում եմ և վոր յես ինքս ել շատ եմ տառապել նրանց հետ միասին: Այստեղ, բանտում, հաճախ ծանր ե լինում, ժամանակ առ ժամանակ—նույնիսկ սոսկալի... Յեմ, այնուամենայնիվ, յեթե յես կյանքը նորից սկսելու լինեյի, յեզ կսկսեյի այնպես, ինչպես սկսել եմ: Յեմ վոչ իրրև պարտք, վոչ իրրև պարտականություն: Այդ ինձ համար որդանական անհրաժեշտություն ե»:

Այդ որդաիրը Ձերթինսկին վարում եր գրեթե օրեցօր: Ես սկսված եր դեռ մինչև Ձերթինսկու դատը և ավարտված արդեն դատից հետո:

«Դատում են,—դրում ե Յեկլիքս Եզմունդովիչն ինքնակենսագրության մեջ,—հին ու նոր գործով յերկու առգամ, յերկու անգամն ել տալիս են աքսորաբնակություն և 1909 թվի վերջին աքսորում են Սիբիր—Տասեյովկա»:

Յարական պահնորդական բաժանմունքը յուրահատուկ կերպով եր տալիս Ձերթինսկու հեղափոխական գործունեյության ատեստացիան: Սկզբում ազմինխտրատիվ աքսորում դեպի Յեվրոպական Ռուսաստանի հյուսիսը, ապա ազմինխտրատիվ աքսորում դեպի Յակուտիա, հետո արդեն աքսորում ցմահ աքսորաբնակության բոլոր իրավունքների զրկմամբ, իսկ արդեն այնուհետև—տաժանակիր աշխատանքներ:

Բայց ինչպես առաջ, այնպես ել այս աքսորից Ձերթինսկին հնարք գտալ փախչելու: «Մնալով այնտեղ (Տասեյովկայում) յոթ օր,—դրում ե նա ինքնակենսագրության մեջ,—փախչում եմ և վարչավայի վրայով գնում արտա-

սահման: Նորից բնակություն եմ հաստատում Կրակովում, մեկ-մեկ դիպչելով ռուսական Լեհաստան»:

Յերեք ծանր տարիներ Ձերթինսկին մնաց աղատության մեջ: Ապրելով արտասահմանում—Կրակովում, նա սերտորեն կապված ե Լեհաստանում յեղած կուսակցական կազմակերպությունների հետ: Կուսակցությունը խոր ընդհատակ եր անցել: Պահանջվում եր խստադույն կոնսպիրացիա, կուսակցական աշխատանքը տանելու հմտություն, չնայած ցարական կառավարության դաժան հալածանքներին:

Ձերթինսկին տառացիորեն ձգտում եր նետվել կուսակցական աշխատանքի: «Հայտնում եմ ձեզ,—դրում ե նա 1912 թվին կուսակցության դեկավարությանը,—վոր վեցյոթ օր անց այստեղից մեկնում եմ Լեհաստան: Դուք պետք ե հաշվի առնեք այդ, վորպես փաստ: Ռուսի խընդրում եմ տալ ցուցումներ, դիրեկտիվներ և այլն: Խընդրում եմ ձեզ, չհամոզեք ինձ: Ձեմ հնազանդվի: Հետագայում արտասահմանում մնալս ինձ համար կլինեյ թե՛ Ֆիդիկական և թե՛ կուսակցական մահ: Կարծում եմ, վոր, քանի դեռ կլինեմ կենդանի,—այնտեղ ողտակար կլինեմ»:

Արհամարհելով իրեն սպառնացող վտանգը, Ձերթինսկին անխեղալ կերպով անցնում եր սահմանը և այստեղ, ռուսական Լեհաստանում, աղչեցուցել համառությամբ կապերը կանոնավորում, ղեկավարում կուսակցության ընդհատակյա աշխատանքը: 1912 թվի սեպտեմբերի 1-ին Ձերթինսկուն ձերբակալեցին վարչապա ժամանելու ժամանակ:

Այդ այն ժամանակ եր, յերբ բանտոր դասակարգը նոր ուժեր հայաբաձ, հեղափոխական վճռական պայքարի յեր յեղում:

Ձերթինսկին բանտում նստեց ավելի քան մեկ ու կես տարի, իսկ այնուհետև, նոր դատից հետո ուղարկվեց տա-



Ժանակիր աշխատանքի: Նրան տվին յերեք տարի, իսկ գրանից անմիջապես հետո ավելացրին ևս վեց տարի:

Տաժանակրուժյան ուղարկելը կատարվում էր հեղափոխական շարժման վերելքի պահին և չանցավ առանց միջադեպի, վոր տեղի ունեցավ ուղեկցող պահակախմբի հետ:

Ձերժինսկին ու նրա ընկերներն ուղարկվելու ժամանակ հեղափոխական յերգեր էյին յերգում:

Славься, свобода и честный наш труд.  
Пусть нас за правду в темницу задрут.  
Пусть нас пытают и жгут нас огнем.  
Мы песню свободы в темницах споём <sup>1</sup>.

Ի հատուցումն, պահակախմբի պետը կալանավորներին զրկեց որապարենից:

Աքսորյալների՝ որապարեն տալու պահանջին նա պատասխանեց:

—Թող քաղցից սատկե՛ն:

Ձերժինսկին ընկերների հանձնարարությամբ բացատրություն պահանջեց որապարենն ապորինարար չտալու առթիվ, բայց պահակախմբի շափ ու սահմանն անցած պետը լիտիարար հայտարարեց, վոր, յեթե քսորյալները հանդիմեն բողոքել, նա կհրամայի կրակել:

—Կրակեցեք, — կուրծքը բաց անելով, / գոռաց Ձերժինսկին, — բայց մենք մեր պահանջներից չե՛նք նահանջի:

Պահակախմբի պետը քար կտրեց: Տիրեց մեռելային լուռություն: Ամենքը զգացին կատաստրոֆայի մոտ լինելը: Պետին չըջապատող սարժանիկների ու գինյորների սիրերթ-

<sup>1</sup> Փառավորվե՛ր, ազատություն և մեր ազնիվ աշխատանք:  
Թող մեզ ի սե՛ր հիմարտության նեանն բանալ ու փակեն:  
Թող մեզ տանջեն ու չարչարեն և հրով ել մեզ այրեն,  
Ազատության յե՛րգն ուրախ գնդաններում մենք կերգենք:

նա՞ծ գեմքերին սաստիկ անհանդստություն յերևաց: Ձերժինսկու շուրջը խոնվեցին կալանավորները: Պետի աչքերը հանդիպեցին Ձերժինսկու ցասումով լեցուն հայացքին: Այդ մի յուրատեսակ մենամարտ էր, և հաղթող դուրս յեկավ Ձերժինսկին: Պետը չդիմացավ նրա հայացքին, շուտ յեկավ, հեռացավ և հենց նույն օրը տվեց պահանջված որապարենը:

Նեո շատ այդպիսի ընդհարումներ էր սպասում Ձերժինսկուն: Նրան ուղարկեցին Որյոլի կենտրոնական բանտը, վորն ամբողջ աշխարհում հռչակված էր կալանավորների հետ տեսած իր դաժան դատաստաններով: Այստեղ նա դարձավ քաղաքական կալանավորների ամբողջ մասսայի հոգին ու վողեշնչողը:

Կենտրոնական բանտի պետը հրամայեց Ձերժինսկուն չղթայակապ անել:

Ձերժինսկին այդ մասին չի հիշատակում իր ինքնակենսագրության մեջ: Նրա հաղորդումներն այդ ժամանակաշրջանի մասին խիստ ժլատ են: «Պատերազմը սկսվելուց հետո փոխադրում են Որյոլ, վորտեղ և տաժանք կրեցի, ուղարկում են Մոսկվա, վորտեղ դատում են 1916 թվին՝ 1910—1912 թվերի ժամանակաշրջանի կուսակցական աշխատանքի համար և ավելացնում են տաժանքի ևս վեց տարի»:

Վերին աստիճանի հետաքրքրական է այդ ժամանակին վերաբերող մի եպիգրա, վոր հրապարակել է ընկ. Ա. Ի. Միկոյանը:

«Յերբ Ձերժինսկին աշխատում էր ԺՏԳՈ՝ում, մի շարք ընկերների ներկայությամբ Ֆելիքս Եղմուկովիչի մոտ յեկավ մի մարդ, վորի մասին Ձերժինսկին ասաց.

—Ահա յեկավ իմ «ստրուկը»:

Պարզվեց, վոր նա նախկին ետեր, այժմ արդեն մեր կուսակցության անդամ ընկ. Կ. —ն էր, վորի հետ Ձերժին-



Ինքնակալության տապալումը բոլշևիկյան կուսակցու-  
թյունը զիտում էր վորպես առաջին ետապը՝ սոցիալիստա-  
կան հեղափոխության համար մղվող պայքարի ճանապար-  
հին:

Յարական կառավարությանը փոխարինելու յեկալ  
բուրժուական Ժամանակափոք կառավարությունը: Մենչև-  
իկիներն ու եսերները խորհուրդներում հաճոյակատարու-  
թյուն են անում կապիտալիստների կառավարության առաջ:  
Լենինն այդ ժամանակ գտնվում էր հեռավոր Շվեյցարիա-  
յում: Յե՛վ այնտեղից նա ղեկավարող ցուցումներ է տալիս  
բոլշևիկյան կուսակցությանը:

«Նոր կառավարությունը չի կարող տալ վո՛չ Ռուսաս-  
տանի ժողովուրդներին (վո՛չ էլ այն աղքերին, վորոնց հետ  
մե՛զ կապել է պատերազմը) վո՛չ խաղաղություն, վո՛չ  
հաց, վո՛չ էլ լիակատար ազատություն, և այս պատճառով  
բանվոր դասակարգը պետք է շարունակի իր պայքարը հա-  
նուն սոցիալիզմի ու հանուն խողաղության, պետք է դրա  
համար ողտազործի նոր դրությունը և այն պարզաբանի  
ժողովրդական ամենալայն մասսաների համար»<sup>1</sup>:

«Նամակներ հեռվից»-ում, գիժելով Ռուսաստանի  
պրոլետարիատին, Լենինը գրում է. «Բանվորներ, դուք  
պրոլետարական, ժողովրդական հերոսության հրաշքներ  
գործեցիք ցարիզմի դեմ մղվող քաղաքացիական պատերազ-  
մում, դուք պետք է պրոլետարական ու համաժողովրդա-  
կան կազմակերպության հրաշքներ գործեք, վորպեսզի նա-  
խապատրաստեք մեր հաղթությունը հեղափոխության  
յերկրորդ ետապում»<sup>2</sup>:

Ընկեր Ստալինը հենց նոր էր վերադարձել Տուրուխա-  
նի արտերից: Անցնելով Կենտկոմի բյուրոյի ու «Правда»-

ի գլուխը, նա հետևողականորեն անց էր կացնում հեղա-  
փոխության հետագա զարգացման ու խորացման լենինյան  
քաղաքականությունը:

Ֆելիքս Զերժինսկին նրբազգացորեն ըմբռնում էր կու-  
սակցության առաջնորդներ՝ Լենինի ու Ստալինի յուրա-  
բանչյուր ցուցումը: Մոսկվայում նա անդուլ կերպով աչ-  
խատում էր բոլշևիկյան կազմակերպության շարքերի հա-  
մախմբման վրա:

Ապրիլի 3/16-ին եմբռացիայից վերադարձավ հեղափո-  
խության առաջնորդ Լենինը: Նրա՝ Պետրոզրադ ժամանումը  
և «Правда»-յում նրա հռչակավոր «Ապրիլյան թեղիսները»  
հրատարակումը՝ վճռական դեր խաղացին կուսակցության  
կողմից նոր ետապում պայքարի պարզորոշ, հստակ ծրա-  
գիր մշակելու գործում:

Կուսակցական կազմակերպությունը Ֆ. Ե. Զերժին-  
սկուն պատվիրակ է ուղարկում բոլշևիկների Ապրիլյան կոն-  
ֆերենցիային: Այստեղ Ֆելիքս Եղմունդովիչն աշխատում է  
անմիջականորեն Լենինի ու Ստալինի հետ, ակտիվ մաս-  
նակցություն է ունենում հեղափոխության բոլոր հիմնա-  
կան հարցերի վերաբերյալ կոնֆերենցիայի հանած պատմա-  
կան վորոշումների մշակման մեջ:

Քաղաքական իրադրությունը յերկրում ավելի ու ավե-  
լի շիկանում էր: Ժամանակավոր կառավարությունը հա-  
մաձայնողականները—մենչևիկների ու եսերների աջակցու-  
թյամբ—բացահայտորեն հակահեղափոխական քաղաքակա-  
նություն էր վարում, փորձում էր խեղդել հեղափոխու-  
թյունը: Աշխատավոր մասսաների աճող դժգոհությունը  
տարեբայնորեն դուրս էր հորդում մի շարք խոշոր յերլոյթ-  
ներով: Ապրիլի 20—21-ի, այնուհետև հունիսի 18-ի և,  
վերջապես, հուլիսի 3—5-ի ցույցերն անցան բոլշևիկյան  
յողունգների տակ, ցույց տալով բոլշևիկների հարաճուն  
հեղինակությունը բանվորների ու զինվորների մասսաների

<sup>1</sup> ЛЕНИН, собр. соч. т. XX стр. 9—10

<sup>2</sup> Նույն տեղում էջ 19:



մեջ: Հուլիսյան սրբերից հետո, զազանացած բուրժուազիան-  
եսերնների ու մենչեիկների ոգնությամբ հարձակվեց բոլշե-  
վիկյան կուսակցութեան վրա: Բոլշեիկները դատան հալա-  
ծանքի յենթարկվեցին, նրանց հետապնդում, ձերբակա-  
լում, սպանում ելին:

Լենինի դեմ նողկալի զրպարտանք բայ թողին: Ժամա-  
նակալոր կառավարութեան կողմից հետապնդվելով, Լենի-  
նը հարկադրված եր թաղնվել ընդհուպ մինչև Հոկտեմբե-  
րը: Բոլշեիկների կուսակցութունը կիսալեզալ դրութեան  
մեջ եր գտնվում:

Այսպիսի իրադրութեան մեջ, հուլիսի վերջին գումար-  
վեց բոլշեիկյան կուսակցութեան VI համագումարը: Փ. Ե.  
Չերժինսկին համագումարի պատվիրակ եր Մոսկվայի բոլ-  
շեիկների կողմից:

VI համագումարը բացառիկ նշանակութուն ունի կու-  
սակցութեան պատմութեան մեջ: Այդ՝ Հոկտեմբերյան սո-  
ցիալիստական Մեծ հեղափոխութեան մարտական նախա-  
պատրաստութեան համագումարն եր: Նա կուսակցութունն  
ուղղեց դեպի զինված ապստամբութունը, դեպի հակահե-  
ղափոխական բուրժուազիայի իշխանութեան տապալումը:

Լենինը չեր կարող համագումարում լինել: Բայց նա  
ընդհատակից ղեկավարում եր համագումարի ամբողջ աշ-  
խատանքն իր աշակերտների ու զինակիցների՝ Ստալինի,  
Սվերդլովի, Մոլոտովի, Որջոնիկիձեյի միջոցով:

Վորպես առաջին հարցերից մեկը, համագումարում  
քննարկվեց Լենինի՝ դատարանին ներկայանալու հարցը:  
Դավաճաններ Տրոցկին, Կամենևովը, Ռիկովը դեռևս մինչև  
համագումարը պահանջում ելին, վոր Լենինը կամավոր  
կերպով իրեն հանձներ ժամանակավոր կառավարութեան  
ձեռքը: Այսպիսով, նրանք դիտակցարար հակահեղափոխու-  
թեան հարվածի տակ ելին դնում կուսակցութեան առաջ-

նորդին, ոգնում ելին բուրժուազիային՝ հեղափոխութունը  
զլխատելու նրա փորձերի մեջ:

Այդ հարցի մասին համագումարին ղեկուցում արեց  
Սերգո Որջոնիկիձեն: Նա կտրականապես դեմ արտահայտ-  
վեց, վոր Լենինը ներկայանա դատարանին: Սերգո Որջոնի-  
կիձեյեց անմիջապես հետո խոսք վերցրեց Չերժինսկին:

«Յես կարճ կկտրեմ, —ասում ե նա:— Ինձնից առաջ խո-  
սող ընկերն արտահայտեց նաև իմ տեսակետը: Մենք պետք  
ե պարզ ու վորոշակի ասենք, վոր լավ են արել այն ընկեր-  
ները, վորոնք խորհուրդ են տվել ընկեր Լենինին չձերբա-  
կալվել: Մենք պետք ե պարզորոշ պատասխանենք բուր-  
ժուական մամուլի հալածանքին, վորն ուղում ե բանվոր-  
ների շարքերը քայքայել: Հալածանքն ընդդեմ Լենինի—այդ  
հալածանք ե մեր դեմ, կուսակցութեան դեմ, հեղափոխա-  
կան դեմոկրատիայի դեմ: Մենք պետք ե ընկերներին պար-  
զարանենք, վոր մենք չենք վստահում ժամանակավոր կա-  
ռավարութեանն ու բուրժուազիային, վոր մենք չենք հանձ-  
նի Լենինին... Մենք պետք ե համագումարի անունից հա-  
վանութուն տանք ընկեր Լենինի վարժունքին»:

Համագումարը դեմ արտահայտվեց Լենինի՝ դատարան  
ներկայանալուն, դրանով իսկ հաստատելով ընկեր Ստալի-  
նի դիրքը, վորը նա բռնել եր հուլիսյան դեպքերից անմի-  
ջապես հետո:

Փ. Ե. Չերժինսկին Լենինի և Ստալինի հավատարիմ  
զինակիցն եր: VI համագումարը նրան ընտրեց բոլշեիկյան  
կուսակցութեան կենտրոնական կոմիտեյի անդամ: Համա-  
գումարում ընտրված կուսակցութեան կենտրոնական կոմի-  
տեն Լենինի ու Ստալինի ղլխավորութեամբ, այնպիսի պրո-  
ֆեսիոնալ հեղափոխականների կազմով, ինչպես Սվերդլովի  
ու Չերժինսկին ելին, հանդիսանում եր պրոլետարական Մեծ  
հեղափոխութեան շտաբը:

VI համագումարից հետո կուսակցութունը Չերժին-



մեջ: Հուլիսյան որերից հետո, գաղանացած բուրժուազիան ետերների ու մենչեկիկների ոգնութամբ հարձակվեց բոլշևիկյան կուսակցութեան վրա: Բոլշեիկիները դատան հալածանքի յենթարկվեցին, նրանց հեռապնդում, ձերբակալում, սպանում ելին:

Լենինի դեմ նողկալի զրպարտանք բաց թողին: Ժամանակավոր կառավարութեան կողմից հեռապնդվելով, Լենինը հարկադրված եր թաղնվել ընդհուպ մինչև Հոկտեմբերը: Բոլշեիկիների կուսակցութունը կիսալեզալ դրութեան մեջ եր գտնվում:

Այսպիսի իրադրութեան մեջ, հուլիսի վերջին գումարվեց բոլշևիկյան կուսակցութեան VI համագումարը: Ֆ. Ե. Չերտինսկին համագումարի պատվիրակ եր Մոսկվայի բուրժեիկիների կողմից:

VI համագումարը բացառիկ նշանակութուն ունի կուսակցութեան պատմութեան մեջ: Այդ՝ Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ հեղափոխութեան մարտական նախապատրաստութեան համագումարն եր: Նա կուսակցութունն ուղղեց դեպի զինված ապստամբութիւնը, դեպի հակահեղափոխական բուրժուազիայի իշխանութեան տապալումը:

Լենինը չեր կարող համագումարում լինել: Բայց նա ընդհատակից ղեկավարում եր համագումարի ամբողջ աշխատանքն իր աշակերտների ու զինակիցների՝ Ստալինի, Սվերդլովի, Մոլոտովի, Որջոնիկիձեյի միջոցով:

Վորպես առաջին հարցերից մեկը, համագումարում քննարկվեց Լենինի՝ դատարանին ներկայանալու հարցը: Դավաճաններ Տրոցկին, Կամենեվը, Ռիկովը դեռևս մինչև համագումարը պահանջում ելին, վոր Լենինը կամավոր կերպով իրեն հանձնեք ժամանակավոր կառավարութեան ձեռքը: Այսպիսով, նրանք դիտակցարար հակահեղափոխութեան հարվածի տակ ելին դնում կուսակցութեան առաջ-

նորդին, ոգնում ելին բուրժուազիային՝ հեղափոխութիւնը գլխատելու նրա փորձերի մեջ:

Այդ հարցի մասին համագումարին ղեկուցում արեց Սերգո Որջոնիկիձեյն: Նա կտրականապես դեմ արտահայտվեց, վոր Լենինը ներկայանա դատարանին: Սերգո Որջոնիկիձեյնց անմիջապես հետո խոսք վերցրեց Չերտինսկին:

«Յես կարճ կկտրեմ, —ասում ե նա:—Ինձնից առաջ խոսող ընկերն արտահայտեց նաև իմ տեսակետը: Մենք պետք ե պարզ ու վորոշակի ասենք, վոր լավ են արել այն ընկերները, վորոնք խորհուրդ են տվել ընկեր Լենինին չձերբակալվել: Մենք պետք ե պարզորոշ պատասխանենք բուրժուական մամուլի հարձանքին, վորն ուղում ե բանվորների շարքերը քայքայել: Հալածանքն ընդդեմ Լենինի—այդ հարձանք ե մեր դեմ, կուսակցութեան դեմ, հեղափոխական դեմոկրատիայի դեմ: Մենք պետք ե ընկերներին պարզաբանենք, վոր մենք չենք վստահում ժամանակավոր կառավարութեանն ու բուրժուազիային, վոր մենք չենք հանձնի Լենինին... Մենք պետք ե համագումարի անունից համոզութուն տանք ընկեր Լենինի վարժուներին»:

Համագումարը դեմ արտահայտվեց Լենինի՝ դատարան ներկայանալուն, դրանով իսկ հաստատելով ընկեր Ստալինի դիրքը, վորը նա բռնել եր հուլիսյան դեպքերից անմիջապես հետո:

Ֆ. Ե. Չերտինսկին Լենինի և Ստալինի հավատարիմ զինակիցն եր: VI համագումարը նրան ընտրեց բոլշևիկյան կուսակցութեան կենտրոնական կոմիտեյի անգամ: Համագումարում ընտրված կուսակցութեան կենտրոնական կոմիտեն Լենինի ու Ստալինի գլխավորութեամբ, այսպիսի պրոտեն Լենինի ու Ստալինի ղլխավորութեամբ, ինչպես Սվերդլովի՝ Ֆեսխոնալ հեղափոխականների կազմով, ինչպես Սվերդլովի ու Չերտինսկին ելին, հանդիտանում եր պրոլետարական Մեծ հեղափոխութեան շտաբը:

VI համագումարից հետո կուսակցութիւնը Չերտին-



սկուն, վորպես Կենտրոնական Կոմիտեյի անդամի, հանձնարարում է աշխատել հեղափոխական պրոլետարական կենտրոնում—Պետրոգրադում: Տեղիքս Եղմունդովիչն աշխատում է Ստալինի հետ ձեռք-ձեռքի աված, նրա անմիջական ղեկավարութեամբ:

Վրա հասան վճռական որերը: Կուսակցութեանը մասնակցներին պատրաստում է զինված ապստամբութեան: Շարժումը ծախյալվում է տառաջիտրեն որեցոր, ժամ առ ժամ:

Սեպտեմբերի 15-ին բուլչեիկները Կենտրոնական Կոմիտեյի նիստում քննարկվում էյին Լենինի նամակները զինված ապստամբութեան մասին: Վորպեսզի ավելի մոտիկ լինի ղեկավարների կենտրոնին, Լենինը սեպտեմբերի 17-ին Հելսինգֆորսից տեղափոխվեց Վիբորգ, իսկ հոկտեմբերի 7-ին ուղևորվում է Պետրոգրադ:

Հոկտեմբերի 10-ին Լենինը ղեկուցումով հանդես է գալիս Կենտրոնական Կոմիտեյի նիստում: Նա ասում է, վոր յերկրում քաղաքական իրադրութեանը հասունացել է ալըստամբութեան համար և հարց է դնում անհապաղ զինված ապստամբութեան նախապատրաստելու մասին: Ստալինը, Սվերդլովը, Չերժինսկին ջերմորեն սրաշտպանում են Լենինին: Լենինի դեմ հանդես են գալիս անարգ մատնիչներ ու դավաճաններ Կամենեֆն ու Ջինովյեֆը: Տրոցկին այդ նիստում թեպիտ և ուղղակի դեմ չբլեարկեց Կի-ի բանաձևին, բայց նա բանաձևի նկատմամբ մի այսպիսի ուղղում առաջարկեց, վորը վերջին հաջովով պետք է վիժեցներ ապստամբութեանը: Տրոցկին առաջարկում էր չսկսել ապստամբութեանը մինչև Սորհուրդների II համադումարի բացումը: Իսկ այդ նշանակում էր—ձգձգել ապստամբութեան դործը, վազորոք բացահայտ դարձնել ապստամբութեան որը և, այսպիսով, նախադրուչացնել ժամանակավոր կառավարութեանը:

Կենտրոնական Կոմիտեն վճռական հակահարված տվեց կապիտալիստներին:

Հոկտեմբերի 16-ին տեղի յե ունենում Կենտրոնական Կոմիտեյի ընդլայնած նիստը կուսակցական կազմակերպութեանները, խոշոր դործարանների, պրոֆիտիթյունների, զինվորական կազմակերպութեան ներկայացուցիչների հետ: Լենինը խոսում է յերկրում տիրող քաղաքական դրութեան մասին, հիմնավորում է զինված ապստամբութեան անհրաժեշտութեանն ու անխուսափելիութեանը: Լենինի դեմ նորից յերույթ են ունենում Ջինովյեֆն ու Կամենեֆը: Ընկեր Ստալինը խիստ հակահարված տվեց վախորդներին ու դավաճաններին: Լենինին ու Ստալինին լիովին սրաշտպանեցին Սվերդլովն ու Չերժինսկին: Սուր ու անհաշտ կերպով հանդես յեկալ Ֆելիքս Չերժինսկին դավաճանների դեմ: Նրա ձայնը զայրույթից դողում էր, յերբ նա մերկայանում էր մանր, վախկոտ մարդուկներին, վորոնք իրենց դավաճանութեանը քողարկում էյին դավադրութեան մասին բարձրացրած ճշան աղաղակով:

Կենտրոնական Կոմիտեն կոչ արեց «բոլոր կազմակերպութեաններին և բոլոր բանվորներին ու զինվորներին՝ ամենակողմանի ու ամենաուժեղացրած կերպով նախապատրաստվելու զինված ապստամբութեանը»: Ապստամբութեան պրակտիկ ղեկավարման համար ստեղծվեց կուսակցական կենտրոն ընկեր Ստալինի գլխավորութեամբ: Այդ կենտրոնի համար կուսակցութեանը առաջադրեց նաև Ց. Ս. Չերժինսկուն:

Կուսակցական կենտրոնը, ընկեր Ստալինի գլխավորութեամբ, հանդիսանում էր Պետրոգրադի խորհրդին կից Ռնդմա-հեղափոխական կոմիտեյի ղեկավար կորիզը և պրակտիկ կերպով ղեկավարում էր հոկտեմբերյան զինված ապստամբութեան ամբողջ նախապատրաստումն ու կատարումը:

Լենինի—Ստալինի կուսակցութեան կողմից նախապատրաստված ու անցկացված հոկտեմբերյան զինված ապստամ-



բուժյունն ավարտվեց բանվորների ու գյուղացիների հաղթութեամբ:

Ընկեր Ստալինը, վոր հրաշալի ճանաչում ու սիրում էր Ձերթինսկուն, նրան անվանեց «Հոկտեմբերի Հերոս»: Այդ—Հոկտեմբերյան ապստամբութեան իսկական հերոսն էր, վոր բացառիկ յեռանդամ ու անվեհերութեամբ աշխատում էր Լենինի ու Ստալինի հետ Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ հեղափոխութեան ամենապատասխանատու ու վճռական տեղամասերում:

Նոյեմբերի 7-ին (հոկտեմբերի 25-ին) հրապարակվում է Լենինի գրած և «բանվորների ու գինվորների ղեկուսատաների Պետրոգրադի Խորհրդին կից Ռազմահեղափոխական կոմիտեյի»—ստորագրած կոչը՝ «Ռուսաստանի քաղաքացիներին»:

«Փամանակավոր կառավարութեանը տապալված է: Պետական իշխանութեանն անցել է Պետրոգրադի պրոլետարիատին և կայսգործին գլխավորող բանվորների ու գինվորների ղեկուսատաների Պետրոգրադի Խորհրդի որդան Ռազմահեղափոխական կոմիտեյի ձեռքը:

Այն գործը, վորի համար կոչվում էր ժողովուրդը—գեմոկրատական հաշտութեան անհապաղ առաջարկում, հողի նկատմամբ կարվածատիրական սեփականութեան վերացում, բանվորական վերահսկողութեան արտադրութեան վրա, խորհրդային կառավարութեան ստեղծումն,—այդ գործն ապահովված է:

Կեցեցե՛ք գինվորների, բանվորների և գյուղացիների հեղափոխութեանը»:

Չինված ապստամբութեանը Պետրոգրադում հաղթեց:

## X

Կարվածատերերի ու կապիտալիստների իշխանութեանը տապալվեց: Խորհուրդների Համառուսաստանյան II հա-

ժաղումարը նոյեմբերի 7-ին (հոկտեմբերի 25-ին) հայտարարեց ամբողջ իշխանութեանը խորհուրդների ձեռքն անցնելու մասին:

Մեր մեծ յերկրի բանվորներն ու գյուղացիներն իշխանութեանն իրենց ձեռքը վերցրին: Սոցիալիստական հեղափոխութեանը հաղթանակ հաղթանակի հետևից էր տանում ամբողջ յերկրում:

Բանվորների ու գյուղացիների թշնամիները մոլեղին կատաղութեամբ դրոհի նետվեցին խորհրդային իշխանութեան գեմ: Միասնական Փորնտով միավորվեցին Հոկտեմբերյան դրոհի որերին մարտերում ջախջախված կապիտալիստներն ու կարվածատերերը, ցարական չինովնիկներն ու գեներալները, սևհարյուրակային սպայութեանը, կադետները, մենչևիկները, ևսերները բոլոր հակահեղափոխական կուսակցութեանները: Նրանք բացահայտ գինված պայքար սկսեցին աշխատավորների իշխանութեան գեմ: Միաժամանակ հակահեղափոխութեանը դիմում էր վնասարարութեան ու դիվերսիայի՝ զանազան քողարկված ձևերով: Ժողովրդի թշնամիները, բանվոր-գյուղացիական կառավարութեան կազմվելու առաջին իսկ որերից, պետական ապարատում կատարած ապրտաժի միջոցով, սպեկուլացիայի կատարելի զարգացման, տրանսպորտի քայքայման, ձեռնարկութեանների աշխատանքի թուլացման միջոցով, դեպի քաղաքներն ուղղվող պարենի ու վառելանյութի մատակարարումը կրճատելու միջոցով ձգտում էին վիժեցնել խորհրդային պետութեան հզորութեանն ու ժողովրդական մասսաների ունեցած մատահոթութեանը նրա հանդեպ:

Բոլշևիկյան կուսակցութեանը Լենինի գլխավորութեամբ՝ խորհրդային իշխանութեան հաղթանակի հետևյալ որն ամենակենսական խնդիրը համարեց պրոլետարիատի զիկատաուրայի պաշտպանութեանը հակահեղափոխութեան բոլոր ու ամեն տեսակ մեքենայութեաններից:



1917 թվի դեկտեմբերի 20-ին հրատարակվեց մի դեկրետ հակահեղափոխութեան, սպեկուլացիայի ու սաբոտաժի դեմ սլաքարող Համառուսաստանյան արտակարգ հանձնաժողով ստեղծելու մասին: «Այդ որդանը,—ասում է ընկեր Ստալինը,—ստեղծվեց Հոկտեմբերյան հեղափոխութեան հաջորդ որը, այն բանից հետո, յերբ հայտարարվեցին ուսուսական ու արտասահմանյան կապիտալիստները կողմից Փինանսավորվող ամեն տեսակ դավադրական, տեռորիստական ու լրտեսական կազմակերպութիւնները»:

Համառուս. Ա. Հ.-ը (ԲՊԿ) հակահեղափոխութեան հարվածներին պետք է սլատասխաններ ե՛լ ավելի ահարկու, վոչնչացնող հարվածներով, սլատասխաններ, ըստ Լենինի ցուցումի, «անողոր, արադ, անհապաղ ռեպրեսիայով, վորը հենվում է բանվորների ու գյուղացիների համահրութեան վրա»:

Համառուս. Ա. Հ.-ի (ԲՊԿ-ի) վիթխարի նշանակութիւնը հակահեղափոխութեան դեմ մղվող սլաքարում սլահանջում էր, վոր կուսակցութեան կողմից Համառուս. Ա. Հ.-ի գլուխ դրվեր միայն նրա լավադույն զավակներից լավադույնը:

Կուսակցութեան այդպիսի հլանալի, տոկուն զավակն էր Ֆելիքս Չերժինսկին:

Կուսակցութիւնը հրաչալի դիտեր և բարձր էր դնահատում Ֆելիքս Եղմունդովիչին, վորը սլատկանում էր այն մարտիկներին, վորոնց վողջ կյանքն ամբողջովին ու անբաժանելիորեն նվիրված է ժողովրդին ծառայելուն: Նրա բոլքեիկյան կուսակցականութիւնը, սկզբունքայնութիւնը, բյուրեղային աղնութիւնը, նսլատակասլացութիւնը, նրա ամբողջ դաժան կյանքն իր համար վիթխարի հեղինակութիւն ստեղծեցին կուսակցութեան ու ժողովրդի մեջ: Ահա թե ինչու կուսակցութիւնը հենց Չերժինսկուն առաջ քաչեց խորհրդային հետախուղութեան առաջին ղեկավարի

սլոստում: Այդ մարտական սլոստում Ֆելիքս Եղմունդովիչն անհերթափոխ մնաց մինչև իր կյանքի վերջը:

Յերբ Չերժինսկին ձեռնամուխ էր լինում Համառուս. Ա. Հ.-ի (ԲՊԿ-ի) սլարատի կազմակերպմանը, նա ղեկավարվում էր Լենինի հիանալի խորհուրդներով, վորոնք շարադրված են այն յերկտողում, վորը նրան գրեց Վլադիմիր Իլյիչը 1917 թվի դեկտեմբերի 19-ին: Վլադիմիր Իլյիչի յերկտողը գրված է Չերժինսկու առաջիկա ղեկուցման կապակցութեամբ, վոր նա անելու յեր ժողովրդական Կոմիտարների Խորհրդին տարտաժնիկները ու հակահեղափոխականների դեմ կովելու միջոցների մասին:

Լենինը հանձարեղ սլարդորոշութեամբ ձեակերպեց այն քաղաքական սլաքարը, վոր ջախջախված դասակարգերը մղում էին խորհուրդների դեմ:

«Բուրժուալիան, կալվածատերերը և բոլոր հարուստ դասակարգերը հուսահատ ջանքեր են թափում վիժեցնելու այն հեղափոխութիւնը, վորը սլետք է սլահուլի բանվորների, աշխատավորների և շահագործվող մասսաների շահերը:

Բուրժուալիան դիմում է ամենակատաղի վոժրագործութիւնները, կաշառելով հասարակութեան թափթիուկներին և լքված տարրերին, գողելով նրանց ջարգերը նսլատակները համար: Բուրժուալիայի կողմնակիցները, առանձնասլես բարձրաստիճան ծառայողներից, բանկային շինովնիկներից և այլն, սարտաժի յեն յենթարկում աշխատանքը, գործադույններ են կազմակերպում, վորպեսզի վիժեցնեն կառավարութիւնը նրա այն միջոցների մեջ, վորոնք ուղղված են սոցիալիստական փոխակերպութիւնների իրականացմանը: Բանը հասնում է նույնիսկ սլարենավորման աշխատանքի տարտաժին, վորը միլիոնավոր մարդկանց սլառնում է սովի մատնել:

Անհրաժեշտ են շուտափուլթ միջոցներ հակահեղափոխականների ու սարտաժնիկների դեմ կովելու»:



Այնուհետև Լենինը զարգացնում էր հակահեղափոխականների ու սաբոտաժիկների դեմ մղվելիք պայքարի կոնկրետ պլանը:

«Շուտափուլյի» բառը Լենինի յերկտողում, «արտակարգ» բառը Համառուս. Ա. Հ.—ի անվան մեջ ընդգծում էյին այն խնդիրների հեղափոխական անհետաձգելիութունը, վորոնք դրվում էյին Ձերթինակու վրա: Հիշեցնենք թեկուզ ամենադժբախտը:

Պորհրդային իշխանությունը ջարդում էր բուրժուական պետական ասպարառը և նրա տեղ ստեղծում էր խորհրդային պետության նոր ասպարառ: Համառուս. Ա. Հ.—ը (ԲՎԿ—ն) պետք է մերկացներ ու պատժեր սաբոտաժիկներին, կազմալուծիչներին, ողներ խորհրդային պետական հիմնարկները ամբաստանում:

Պորհրդային իշխանությունը կործանում էր գառային կարգի մնացորդները և ազգային ճնշման ուժով, լիկվիդացիայի յեր յենթարկում հակահեղափոխական «հասարակական» կազմակերպությունները: Ջախջախված բուրժուական մամուլն ու բուրժուական կազմակերպություններն ընդհատակ էյին քաշվում: Համառուս. Ա. Հ.—ը (ԲՎԿ—ն) պետք է հայտարարեր նրանց և վոչնչացներ:

Կապիտալիստներն ու նրանց կամակատարները փորձում էյին վիժեցնել խորհրդային իշխանության տնտեսական ամբաստանողական գործը, խանդարում էյին արդյունաբերության ազգայնացմանը, դիմում էյին միասարաբության ու դիվերսիաների: Համառուս. Ա. Հ.—ը պետք է ջարդուիչուր աներ բուրժուազիայի տնտեսական շտաբները և ողներ ժողովրդական տնտեսության խորհուրդներին՝ տիրապետելու յերկրի արդյունաբերության կառավարմանը:

Կուսակցությունն ու բանվոր դասակարգը ստեղծում էյին Կարմիր բանակ ու Կարմիր Նավատորմ: Համառուս. Ա. Հ.—ը պետք է ստեղծեր յերկրի նոր զինված ուժերի շինարարության մեջ ներդրաված մասնադեմոններին, վորով-

հետև այդ մասնադեմոնների մեջ Տրոցկին և նրա ձեռնասունները փաղաքել էյին խորհրդային իշխանության վոչնչեթշնամիներին:

Պորհրդային իշխանությունը բոլոր ուժերը ջարում էր, վորպեսզի յերկրը պատերազմի վիճակից դուրս բերեր և խաղաղության հասներ: Յեկ այտեղ Համառուս. Ա. Հ.—ին բաժին ընկան մեծադույն կարևորություն ունեցող և դժվարություն ներկայացնող խնդիրներ—ջախջախել խաղաղության գործը վիժեցնել փորձող դավադիրներին:

Արդեն Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ հեղափոխության հենց սկզբին Համառուս. Ա. Հ.—ը (ԲՎԿ—ն), Ձերթինակու դեկավարությամբ, հեղափոխության նվաճումները պաշտպանեց մի շարք խոշորագույն դավադրություններից ու խռովություններից—դարձալ, Ստալինի արտահայտությամբ՝ «բուրժուազիայի սարսափը, հեղափոխության արթուն պահակը, պրոլետարիատի մերկացրած սուրը»:

«Յերկաթե Տեկլիքսի» առաջին իսկ քայլերն ուղղված էյին մի ասպարտ ստեղծելուն, վորն ահարկու լինի բուրժուազիայի համար, հստակ, ոպերատիվ կերպով աշխատի ու արթուն կերպով պահակ կանգնած լինի հեղափոխությանը:

Այդ ամենարդե աշխատանք էր:

Պորհրդային հետախուզությունն իր գոյության առաջին իսկ րրերից բաղվալից վտանգավոր և ուժեղ թշնամուհետ, վորն իր պայքարը տարել է ու տանում է խարդախ մեթոդներով, խորը և խնամքով դիմակալութիւնով, տարածելով իր գաղտնի գործակալությունը, ուղարկելով մեղ մոտ լրտեսներ, դիվերսանտներ, տեղորիստներ: Հակահեղափոխության բոլոր ուժերը միավորվեցին այն բանի համար, վորպեսզի խեղճեն պրոլետարական հեղափոխությունը և արյան մեջ թաղեն նրան: Տեղորով, դիվերսիայով և



դավադրութիւններէ սխտեմով նրանք փորձում եյին հողս ցնդեցնել Խորհրդային յերկիրը:

Բողբեհիկյան կուսակցութեան, մեր յերկրի բոլոր աշխատավորներէ համար շատ ծանր փորձութիւն հանդիսացան Բրեստի հաշտութեան օրերը:

1918 թվականի փետրվարի 10-ին դավաճան Տրոցկին ընդհատեց հաշտութեան բանակցութիւնները Բրեստ-Լիտովսկում: Հայտարարելով Խորհրդային հանրապետութեան հաշտութիւն կնքելուց հրաժարվելու մասին, նա միաժամանակ հրեշտով մի հայտարարութիւն արեց, թե Խորհրդային հանրապետութիւնը բանակը զորացրում է և չի շարունակելու պատերազմը: Այս հայտարարութիւնը բարոյալքեց Վին բանակի մնացորդներին, և դերմանացիները, դրեթե խոչընդոտներ չհանդիպելով, ներխուժեցին Խորհրդային յերկիրը: Գերմանական իմպերիալիզմի ներկայացուցիչ գեներալ Գոֆմանը մատնիչ Տրոցկու մեջ տեսնում էր իր դաշնակցին: Նա ցինիկարար հայտարարում էր, թե յեթե Տրոցկին մի ամիս էլ մնա իր պոստում, ապա գերմանական զորքերը կգրավեն Պետրոգրադը: Այդ հաշիվները կրախի յենթարկվեցին միայն կարմիր-դաշնակական ջոկատների մեծ խանդավառութեան շնորհիվ, վարոնք դերմանացիներին վճռական հակահարված տվին Նարվայի և Պսկովի տակ:

Տրոցկու և «ձախ» կոմունիստների դավաճանական մտադրութիւնը ջախջախվեց: Հաշտութեան կարճատև դադարը վիժեցնելու, Բրեստի հաշտութիւնը վիժեցնելու պրովոկացիոն փորձը մտնում էր 1918 թվին Համառուս. Ա. Հ. -ի կողմից յերեան հանված և լիկվիդացիայի յենթարկված իմպերիալիստական հետախուզութիւնների՝ իր չափերով խոչորադույն դավադրութեան—Լոկիարտի դավադրութեան—պլաններէ մեջ:

Լոկիարտը Պոլ Դյուկսի և Սիդնեյ Բեյլիի հետ մեկտեղ անդլիական խոչորադույն հետախուզներ եյին: Նրանց

խնդիրն այն էր, վոր Խորհրդային յերկիրը ներքաշեյին կորստարեր պատերազմի մեջ, առաջացնելին խորհրդային զինվորական մասերի պրովոկացիոն ապստամբութիւն, ձերբակալելին խորհրդային կառավարութիւնն ու սպանելին Լենինին, անդլիական եքսպեդիցիոն կորպուսի համար ճանապարհ բանային Մուրմանսկից դեպի Մոսկովա: Լոկիարտի դավադրութեան բաղկացուցիչ մասերն եյին՝ չեխոպրովակներէ ապստամբութիւնը, սովինկոլյան «Հայրենիքի» ու ազատութեան պաշտպանութեան միութեան» հակահեղափոխական կազմակերպութեան զինվորական խռովութիւնները Յարոսլավլում, Մուրոմում, Ռիբինսկում, «ձախ» եսերների հակահեղափոխական խռովութիւնը, Ուրլիցու և Վոլոգարսկու սպանութիւնը, մահափորձը Վլադիմիր Իլյիչ Լենինի կյանքի դեմ:

Դավադրութեան պլանները ջննարկվում եյին ոտարերկրյա զիվանադետներէ խորհրդակցութիւններում. ըստ ելութեան այդ—համաշխարհային իմպերիալիզմի բոլոր հետախուզութիւնների դավադրութիւնն էր: Այժմ հաստատված է, վոր այդ դավադրութեան թելերը գնում եյին դեպի Տրոցկին և նրա բուխարինյան պոչուկը: Ուստի Լոկիարտի դավադրութեան ջախջախումը Համառուս. Ա. Հ. -ի (ВЧК-ի) ամուր հարվածն էր, ուղղված կուսակցութեան ներսում թաղնված թշնամիներէ—Տրոցկու, Բուխարինի և նրանց համախոհների դավաճանական դործունեյութեանը:

Այդ դավադիրներէ նողկալի ախտերից մեկը «ձախ» եսերների ապստամբութիւնն էր, վորին խրախուսում ու զաղտնաբար աջակցում եյին Տրոցկին ու Բուխարինը: Ժողովրդի այդ յերդվալ թշնամիներն իրենց նպատակ եյին գրել—վիժեցնել Բրեստի հաշտութեան դաշնադիրը, ձերբակալել Վ. Ի. Լենինին, Ի. Վ. Ստալինին, Յա. Մ. Սվերդլովին, սպանել նրանց և բուխարինականներից, տրոցկիստներից ու «ձախ» եսերներից նոր կառավարութիւն կազմել:



Այս բոլոր հրեշտակները չարազործությունները ժամանակին կանխվեցին շնորհիվ Զերթինսկու դիւսալորած փառասրանծ չեկիւսաների դործողությունների :

«Ձախ» եսերների սպասամբությունը հարմարեցվում էր խորհուրդների Համառուսաստանյան V համադումարի ժամանակին :

1918 թվի հուլիսի 4-ին Մոսկվայում բացվեց խորհուրդների Համառուսաստանյան V համադումարը : Համադումարում «ձախ» եսերները բացահայտորեն հանդես յեկան լենինի դեմ, խորհրդային իշխանության քաղաքականության դեմ : Նրանք սահանջում էին դադարեցնել սլաւաբարձ կուլակության դեմ և հրաժարվել բանվորական սլաւոնային ջոկատները դուրս ուղարկելուց : «Ձախ» եսեր Ալեքսանդրովիչը համադումարին կոչ էր անում, գերմանական դեսպան կոմս Միրբախին արտաքսել Մոսկվայից և անհատապէս ուղարկելու գործողություններ սկսել գերմանացիներին դեմ :

Համադումարը վճռականապէս մերժեց «ձախ» եսերներին այդ բոլոր առաջարկությունները : Յերբ «ձախ» եսերները համոզվեցին, վոր իրենց դիժը խիստ դիմադրության է հանդիպում համադումարի մեծամասնության կողմից, նրանք Մոսկվայում գինոված խռովություն կազմակերպեցին :

Խռովությունը սկսվեց նոդկալի պրովակացիայով : «Ձախ» եսեր Բլյումկինը (հետագայում Տրոցկու դործակալը) Համառուս. Ա. Հ.-ի նախագահի տեղակալ «ձախ» եսեր Ալեքսանդրովիչին հետ կեղծ փաստաթուղթ սարքեցին : Համառուս. Ա. Հ.-ի (ԲՎԿ-ի) նախագահ ընկեր Զերթինսկու ստորագրությունը կեղծեցին, իսկ կնիքը դրեց դաւաճան Ալեքսանդրովիչը : Այդ կեղծ փաստաթղթով Բլյումկինին իբր թէ հանձնարարվում էր «...խոսել գերմանական դեսպանի հետ մի դործի առթիւ, վորն անմիջական առընչություն ունի սլաւոն դեսպանի հետ» :

1918 թվի հուլիսի 6-ին Բլյումկինը կարողացավ մտնել գերմանական դեսպանատունը : Դեսպան Միրբախն ընդունեց :

Նարանում հայտնվելուն պէս Բլյումկինը ատրճանակից կրակեց նրա վրա, բայց վրիպեց : Այն ժամանակ նա նետեց ումբրը, վորով Միրբախը սպանվեց : Բլյումկինն անհայտացավ :

Միրբախի այս սպանությամբ «ձախ» եսերներն ուղում էին Գերմանիայի դեմ պատերազմի պրովոկացիա անել : Բայց խորհրդային կառավարությանը հաջողեց ջախջախել դավադիրներին և կանխել պատերազմը :

Բերենը «ձախ» եսերների խռովության միջանի մանրամասնություններ, վորի լիկվիդացիայի մեջ Ֆելիքս Երմոևովիչին սլաւոնում է աչքի ընկնող դեր :

Խռովարարներն իրենց գինոված ուժերը կենարոնացրին Պոկրովսկայա փողոցի շրջանում, Տրյոխովյատիտելի նըրբանցքում :

Խռովության որը ջոկատում կար մոտ 2 հազար մարդ, վորոնք գինոված էին ատրճանակներով, հրացաններով և ումբրներով : Դրանք գլխավորապէս եսերներ, անարխիստներ, բարոյալքված տարրեր էին : «Ձախ» եսերների Կենտկոմի առաջադրանքով դավաճաններ Ալեքսանդրովիչն ու Պոպովը նախորդ կազմել էին այդ ջոկատը, «մաքրելով» այն խորհրդային իշխանությանը նվիրված կարմիր-բանակայիններէից :

Վորպեսդի բարձրացնեն խռովարարներին վորդին, «ձախ» եսերները բոլորին տվին յերկուական զույգ կոշիկ, սահաճոներ, շաքար և ողի : «Ձախ» եսերների պարադոլսները—Սպիրիդոնովան, Կարելինը, Կամկովը, Պոռչյանը և ուրիշները—անընդհատ միտինգներ էին անում ջոկատում :

Խռովարարների յերույթը սկսվեց անմիջապէս այն բանից հետո, յերբ լուր յեկավ Միրբախի սպանության մասին :

Սպանության դործի բաց անելը իր վրա վերցրեց անձամբ ընկեր Զերթինսկին : Ֆելիքս Երմոևովիչն անհատապէս



մեկնեց դերմանական դեռապանատուն: Նա այնտեղ ուշադիր կերպով ըննության յենթարկեց սպանության պարագան: Ընկեր Ձերթինսկին այստեղ հայտարերեց Համառուս. Ա. Հ.—ի կեղծված փաստաթղթերը: Ժողկամխորհին արած իր գեկուցման մեջ Ֆելիքս Եղմունդովիչը դրում էր. «...տեսնելով Արտակարգ Հանձնաժողովի կեղծված փաստաթղթերը, յես իսկույն գլխի ընկա, վոր այդ կարող էր «ձախ» ետերների արածը լինել: Պետք էր վայրկյանաբար, իսկույն ևեթ մեկնել Պոպովի ջոկատը... ուր մարդասպանը կարող էր թաղնվել»:

Ֆելիքս Եղմունդովիչն առանց մի պահակախմբի մեկնում է Պոպովի աղստամբած ջոկատը:

— Վորտե՞ղ է գտնվում Բլյումկինը, — հարցնում է առաջին հերթին Ձերթինսկին:

— Նա ջոկատում չէ, դուր էք փնտռում, Բլյումկինը սարանել է Միրբախին «ձախ» ետերների առաջադրանքով, — այս էր լիտի պատասխանը:

«Ի պատասխան այդ հայտարարության, — դրում է ընկեր Ձերթինսկին, — յես Պոռչյանին ու Կարելինին ձերբակալված հայտարարեցի, ասելով այնտեղ ներկա յեղող ջոկատի պետ Պոպովին, վոր յեթե նա, վորպես իմ ստորադրյալ, չհնադանդվի և չհանձնի նրանց, ապա յես վայրկյանաբար կդնդահահարեմ նրան, վորպես դավաճանի»:

Այդ խոսքերն ասվեցին այն պատճառով, վոր «ձախ» ետերների պարադուլսները — Պոռչյանն ու Կարելինը, — վորտեք սկզբում հայտարարեցին, թե յենթարկվում են Ձերթինսկու հրամանին, փոխանակ նրա ամտոմբելը նստելու, մտան հարեան սենյակը, վորտեղ նիստ էր անում «ձախ» ետերների Կենտկոմը: Նրանք այնտեղից դուրս կանչեցին մի խումբ իրենց համախոհների, այդ թվում Սաբլինին և մարտական դրուժինայի պետ Փիլմանին:

Ձերթինսկուն շրջապատեցին նավաստիները: Սաբլինը

նրան հրամայեց հանձնել զենքը: Ֆելիքս Ձերթինսկին զենքը չհանձնեց: Նա դիմեց իրեն շրջապատող նավաստիներին այսպիսի խոսքերով.

— Թույլ կտա՞ք դուք արդյոք, վոր ինչ վոր մի պարոն զինաթափի ինձ, Ա. Հ.—ի նախագահիս, վորի ջոկատում դուք գտնվում եք:

Նավաստիները տատանվեցին:

Այն ժամանակ Սաբլինը նորից միջանի զինված մարդերեց հարեան սենյակից և ընկեր Ձերթինսկուն զինաթափ արին:

— «Ձախ» ետերների կուսակցության Կենտկոմի վորոշմամբ, — հայտնեցին նրան, — Սպիրիդոնովան («ձախ» ետերների Կենտկոմի անդամ. — Փ. Կ.) այժմ ևեթ մեկնում է խորհուրդների Համառուսաստանյան համագումարի նիստը, վորտեքտեղ այնտեղ հանդես դա պաշտոնական գեկուցումով և հաղորդի, վոր կուսակցությունը վորոշեց յերկրի յերեսից ջնջել Միրբախին և վոր «ձախ» ետերների կուսակցության կամքով ոուս ժողովուրդն աղատադրված է Միրբախից: Դուք այստեղ մնում եք վորպես պատանդ: Դուք մեղ յերաշխիք կժառայեք Սպիրիդոնովայի անխտանդության համար:

Դրան Ձերթինսկին պատասխանեց.

Այդ դեպքում դուք պետք է ինձ նախորդ գնդակահարեք, վորովհետև, յեթե Սպիրիդոնովային ձերբակալեն, յես առաջինը կպահանջեմ, վոր նրան վոչ մի դեպքում չազատեն...

Յերբ խոսվարարները տեղեկացան, վոր խորհուրդների Մ համագումարի վորոշմամբ «ձախ» ետերները հեռացված են խորհուրդներից, իսկ Մ համագումարի «ձախ» — ետերական Ֆրակցիան կալանավորված է, նրանց մեջ խուճապ բարձրացավ:

Ձերթինսկու մոտ ներս վազեցին Սաբլինն ու Պոպովը: Նրանք սպանալիքներ տեղացին:



մեկնեց դերմանական դեռսպանատուն: Նա այնտեղ ուշադիր կերպով քննութեան յենթարկեց սպանութեան պարագան: Ընկեր Ձերթինսկին այստեղ հայտարերեց Համառուս. Ա. Հ.—ի կեղծված փաստաթղթերը: Ժողկոմխորհին արած իր գեկուցման մեջ Ֆելիքս Եղմունդովիչը դրում եր. «...տեսնելով Արտակարգ Հանձնաժողովի կեղծված փաստաթղթերը, յես իսկույն գլխի ընկա, վոր այդ կարող եր «ձախ» եսերների արածը լինել: Պետք եր վայրկյանաբար, իսկույն ևեթ մեկնել Պոպովի ջոկատը... ուր մարդասպանը կարող եր թաղնվել»:

Ֆելիքս Եղմունդովիչն առանց մի պահակախմբի մեկնում ե Պոպովի ապստամբած ջոկատը:

— Վորտե՞ղ ե դանվում Բլյոմկինը,—հարցնում ե առաջին հերթին Ձերթինսկին:

— Նա ջոկատում չե, դուր եք փնտռում, Բլյոմկինը սպանել ե Միրբախին «ձախ» եսերների առաջադրանքով,—այս եր լիտի պատասխանը:

«Ք պատասխան այդ հայտարարութեան,—դրում ե ընկեր Ձերթինսկին,—յես Պոռչյանին ու Կարելինին ձերբակալված հայտարարեցի, ասելով այնտեղ ներկա յեղող ջոկատի պետ Պոպովին, վոր յեթե նա, վորպես իմ ստորադրյալ, չհնադանդվի և չհանձնի նրանց, ապա յես վայրկյանաբար կզնդակահարեմ նրան, վորպես դավաճանի»:

Այդ խոսքերն ասվեցին այն պատճառով, վոր «ձախ» եսերների պարադուլները—Պոռչյանն ու Կարելինը,—վորոնք սկզբում հայտարարեցին, թե յենթարկվում են Ձերթինսկու հրամանին, փոխանակ նրա ամտամորիչը նստելու, մտան հարևան սենյակը, վորտեղ նիստ եր անում «ձախ» եսերների Կենտկոմը: Նրանք այնտեղից դուրս կանչեցին մի խումբ իրենց համախոհների, այդ թվում Սարլինին և մարտական դրուժինայի պետ Ֆիլմանին:

Ձերթինսկուն շրջապատեցին նավաստիները: Սարլինը

նրան հրամայեց հանձնել զենքը: Ֆելիքս Ձերթինսկին զենքը չհանձնեց: Նա դիմեց իրեն շրջապատող նավաստիներին այսպիսի խոսքերով.

— Թույլ կտա՞ք դուք արդյոք, վոր ինչ վոր մի պարոն զինաթափի ինձ, Ա. Հ.—ի նախադահիս, վորի ջոկատում դուք դանվում եք:

Նավաստիները տատանվեցին:

Այն ժամանակ Սարլինը նորից միջանի զինված մարդերեց հարևան սենյակից և ընկեր Ձերթինսկուն զինաթափ արին:

— «Ձախ» եսերների կուսակցութեան Կենտկոմի վորոշմամբ,—հայտնեցին նրան,—Սպիրիդոնովան («ձախ» եսերների Կենտկոմի անդամ.—Փ. Կ.) այժմ ևեթ մեկնում ե խորհուրդների Համառուսաստանյան համազումարի նիստը, վորպեսզի այնտեղ հանդես գա պաշտոնական գեկուցումով և հաղորդի, վոր կուսակցութեանը վորոշեց յերկրի յերեսից ջնջել Միրբախին և վոր «ձախ» եսերների կուսակցութեան կամքով ուսս ժողովուրդն ազատագրված ե Միրբախից: Ինք պատեղ մնում եք վորպես պատանդ: Ինք մեզ յերաշխիք կծառայեք Սպիրիդոնովայի անվտանգութեան համար:

Դրան Ձերթինսկին պատասխանեց.

Այդ զեպքում դուք պետք ե ինձ նախորդ զնդակահարեք, վորովհետև, յեթե Սպիրիդոնովային ձերբակալեն, յես առաջինը կպահանջեմ, վոր նրան վոչ մի զեպքում չազատեն...

Յերբ խոսվարարները տեղեկացան, վոր խորհուրդների Վ համազումարի վորոշմամբ «ձախ» եսերները հեռացված են խորհուրդներից, իսկ Վ համազումարի «ձախ»—եսերական Ֆրակցիան կալանավորված ե, նրանց մեջ խուճապ բարձրացավ:

Ձերթինսկու մտտ ներս վազեցին Սարլինն ու Պոպովը: Նրանք սպառնալիքներ տեղացին:



— Մենք կկործանե՛նք Կրեմլը, Մեծ Թատրոնը, Լուբյանկան... — աղաղակում եյին նրանք:

— Մի տվեք ինձ ձեր ատրճանակը, յես ձեզ կշնչակա-  
հաբեմ վորպես անդամների, — հայտարարեց Յեկիլքս Եդ-  
մունդովիչը, դիմելով Պոպովին:

Պոպովը հետ ցատկեց և փախուստի դիմեց:

— Դուք վախկո՞տ եք, անա՛րդ վախկոտ, — դռուաց նրա  
հետևից Ձերթինսկին:

Այդ ժամանակ նիստ եր անում խորհուրդների Վ համա-  
գումարը: Ձերթինսկու ձերբակալման օրը համադումարի  
դելեգատները տաղնապով տեղեկություններ եյին սպա-  
սում նրա մասին: Ձերթինսկու կյանքի նկատմամբ յեղած  
յերկյուղները շատ լուրջ եյին: Լենինը հրամայեց հայտնել  
եսերներին, վոր Յեկիլքս Ձերթինսկու սպանվելու դեպքում  
նրանց ամենադատման պատիժ ե սպասում: Լենինն ու  
Սվերդլովին անձամբ եյին դեկավարում «ձախ» — Եսերական  
խուզությունը ճնշելու ուղղությամբ ձեռք առնվող բոլոր  
միջոցառումները:

Համագումարի բուլչեիկյան Փրակցիան հավաքվեց հա-  
ղորդումներ լսելու քաղաքում տեղի ունեցածի մասին:

Այդ պահին անսպասելիորեն հայտնվեց Ձերթինսկին:  
Գունաթափ, հուրված՝ նա հավաքվածներին համառոտակի  
դեկլոցեց ջոկատում պատահած դեպքերի մասին. գինա-  
թափված մնալով թշնամիների մեջ, Ձերթինսկին մի ճառով  
դիմել ե ջոկատի նախատիներին և շուտով ջոկատի գլուխ  
անցած թողել ե այն շենքը, վորտեղ նրան բռնել եյին:

— Այդ ավանտյուրիստական յելույթն արմատից լիկ-  
վորացիայի կենթարկվի, — վերջացրեց Յեկիլքս Եդմունդովի-  
չը համառոտ հաղորդումը, լսելով իր հերոսական վարմուն-  
քի մասին:

Այս եպիգրադում — ամբողջովին Ձերթինսկին ե՝ իր խիզա-  
խությամբ, ազնվությամբ և մեծ համեստությամբ:

Շուտով, «ձախ» Եսերական խուզության ձախողումից  
հետո, ալ Եսերները մի շարք տեղորիստական ակտեր կազմա-  
կերպեցին — սպանվեցին Ուրիցկին և Վոլոդարսկին: Եսե-  
րուհի Կապլանի ստոր դնդակից վիրավորվեց ժողովրդի մեծ  
ուսուցիչ ու առաջնորդ Վ. Ի. Լենինը: Ինչպես այժմ պարզ-  
վել ե, մարդասպանի, ալ Եսերուհի Կապլանի ձեռքին ուղ-  
ղություն եյին տվել ստոր դավաճաններ Բուխարինը, Պյա-  
տակովը և Տրոցկին:

Ձերթինսկու անձնական դեկավարությամբ Համառուս.  
Ա. Հ. — ի որդաններն Եսերական դադանագործիչներին (по-  
рольщиков) ջախջախեցին խորհրդային ամբողջ տերիտո-  
րիայում: Քաղաքականապես Եսերները դադարեցին դո-  
յություն ունենալուց: Նրանց մնացորդները ծառայության  
մասն սպիտակ-դավարդիական բանակներում, բանդիտական  
հրոսակաբերում:

Քաղաքական պատերազմի տարիներին Համառուս. Ա.  
Հ. — ք (ВЧК-ն) Ձերթինսկու գլխավորությամբ շատ անգամ  
ե կանխել յերիտասարդ Խորհրդային հանրապետությանը  
սպառնացող մահացու վտանգը: Այդ տարիները մեզ մի ան-  
ժոռանալի պլակատ են թողել. դեներալների, Փարբիկանտ-  
ների ու անբաներների ժանիքները ցույց տվող, դադանացած  
վոհմակի գլուխների վրա բարձրացած ե պրոլետարիատի  
սուրը — Համառուս. Ա. Հ. — ք: Խորհրդային հետախուզու-  
թյունը սոցիալիստական հեղափոխության հենց այդպիսի  
մերկացրած սուր ե յեղել և մնում ե սոցիալիստական  
առաջին պետության ձեռքում:

«Յեզ գտնվում եմ պալատի բուն կրակի մեջ, — դրում  
եր Յեկիլքս Եդմունդովիչը նամակներից մեկում 1918 թվի  
աշնանը: Ձինվորի կյանք, վորը չունի հանդիստ, վորովհե-  
տև պետք ե փրկել վառվող տունը: Ժամանակ չկա մտածե-  
լու մերոնց և իմ մասին: Աշխատանքն ու պալատը  
գժոխային ե: Բայց սիրտս այդ պալատում մնացել ե կեն-



դանի, նույնը, ինչպես վոր առաջ եր: Իմ ամբողջ ժամանակը՝ դա մի անընդհատ գործողութիւնն է մինչև վերջ պոստում մնալու համար: Յես առաջ եմ քաջված կրակի առաջավոր դժի պոստի վրա, և իմ ցանկութիւնն է՝ պայքարել և բաց աչքերով նայել սպառնալից դրութեան ամբողջ վտանգին և ինքս ել լինեմ անողոք, վորպեսզի, վորպես հալատարիմ պահապան չուն, սպառնալիք թշնամուն»:

Յե՛վ դերմարդկային յեռանդով, որ ու զիշեր, զիշերցերեկ, առանց քնի, առանց կերակրի, առանց փոքրագույն հանգստի աշխատում եր Ձերփինսկին իր պահպանական պոստում:

Յելիքս Եղմունդովիչի համեստ կարիները, հասարակ ամերիկյան սեղանը, վորի մոտ նստած նա աշխատում եր, չիրմայի հետեւը դրված յերկաթե հասարակ մի մահճակալ, վորի վրա նա քնում եր որվա մեջ ընդամենը մի քանի ժամ, — այսպիսի տեսք ունեք Համառուս. Ա. Հ. — ի մարտական զեկավարի աշխատանքային կահավորանքը:

Ձերփինսկու անդուլ կամքը, հեղափոխութեան թշնամիներին նկատմամբ տածած նրա արհամարհանքը, նրա մեծ անողոքութիւնը լավ հայտնի է ինչ թշնամիներին:

«Բուրժուազիան չի իմացել ամէլի ատելի անուն, քան Ձերփինսկու անունն է, վորը պողպատե ձեռքով հետ եր մղում պրոլետարական հեղափոխութեան թշնամիներին հարվածները: Բուրժուազիայի սարսափը — ահա թե ինչ եր Յելիքս Ձերփինսկին» (Ստալին):

Իսկ վորն է Համառուս. Ա. Հ. — ռեժը և հզորութիւնը:

Խորհրդային քաջարի հետախուզութիւնը դարձավ «հատու զենք ընդդէմ անթիվ դավադրութիւններին, խորհրդային իշխանութեան դէմ կատարվող անթիվ վտանգութիւններին», վորովհետև նա յեղել է և է՝ ժողովրդի միտ ու

արյունից, վայելել ու վայելում է ժողովրդի վստահութիւնն ու սերը:

Ձերփինսկին հենվում եր ժողովրդի այդ աջակցութեան ու ողնութեան վրա, նրա մեջ տեսնելով Համառուս. Ա. Հ. — ռեժերի դիսպլոր աղբյուրը:

Ծանր փորձութիւնների որերին, յերբ ինտերվենցիայի ողակը սեղմում եր Խորհրդային յերկիրը, Լենինն ու Ձերփինսկին դիմեցին ժողովրդի ողնութեանը, կոչ էլին անում նրան զգաստ լինել, կոչ էլին անում վճռաբար ու դատանորեն պայքարել լրտեսներին, դավաճաններին, մատնիչներին, դավադիրներին դէմ:

1919 թվի մայիսի 31-ին «Истина»-յում հրատարակվեց Լենինի ու Ձերփինսկու կողմից ստորագրված դիմումը.

«ԶԳՈՒՇԱՅԵՔ ԼՐՏԵՍՆԵՐԻՑ.  
ՄԱ՛Հ ԼՐՏԵՍՆԵՐԻՆ.

Սպիտակ-դավադրականներին հարձակումը Պետերբուրգի վրա ակներևորեն ցույց տվեց, վոր ամբողջ մերձակատային գոտում, յուրաքանչյուր խոշոր քաղաքում, լայնորեն դարգացած են լրտեսութեան, դավաճանութեան, կամուրջներ պայթեցնելու կազմակերպութիւնները, աստատմութիւններին սարքումը թիկունքում, կոմունիստներին և բանվորական կազմակերպութիւններին աչքի ընկնող անդամներին սպանութիւնները:

Ամենքը պետք է լինեն պոստում:

Ամենուրե՛ք կրկնապատկել զգաստութիւնը, կշռադատել և ամենախիստ ձեռով մի շարք միջոցներ կիրառել լրտեսներին և սպիտակ դավադիրներին հետախուզելու և նրանց բռնելու ուղղութեամբ:

Յերկաթուղային աշխատողները և քաղաքական աշխատողներն առանց բացառութեան բոլոր զորամասերում



առանձնապես պարտավոր են կրկնապատկել նախազգուշու-  
թյունը:

Բոլոր զինակից բանվորներն ու գյուղացիները պետք  
է կրճճով պաշտպանեն Սորհրդային իշխանությունը, պետք  
է պայքարի յենեն լրտեսների ու սպիտակ-զվարդիական  
մատնիչները դեմ:

Ամեն մեկը թող լինի պահպանական պոստում—անընդ-  
հատ, զինվորական ձևով կազմակերպված կապ պահպանի  
կուսակցութեան կոմիտեները, արտակարգ հանձնաժողով-  
ները, խորհրդային աշխատողները կարևորագույն և ամե-  
նափորձառու ընկերները հետ:

Բանվոր-գյուղացիական պաշտպանութեան  
Սորհրդի նախագահ՝ Լենին  
Ներքին գործերի ժողովրդական կոմիտե  
Ձերթիմակի՝

Սորհրդային հետախուզությունը միլիտանավոր աչքեր,  
միլիտանավոր ականջներ ունի: Կարմիր-բանակայինները,  
բանվորներն ու գյուղացիները—ամենքն ողնում եյին և ող-  
նում են խորհրդային իշխանութեան փառապանծ պատժիչ  
որդաններին:

Ժողովրդի զգաստությունը—ահա թե վորն է Ա. Հ.-ի  
ուժը:

Քաղաքացիական պատերազմի տարիներին Պետրոգրա-  
դում նյութավող խոշոր զինվորական դավադրություններից  
մեկը բացվեց շնորհիվ մի կարմիր-բանակայինի զգաստու-  
թեան: Նա վերցրեց մի կնոջ կորցրած թղթի փաթեթը, վո-  
րի մեջ գծագրեր գտնվեցին: Հասկանալով, վոր դրա մեջ  
ինչ-վոր լուրջ բան կա ծածկված, կարմիր-բանակայինը  
կնոջը ձերբակալեց և նրան հանձնեց Ա. Հ.-ին:

Այդ գործով կալանավորված Փրանսական լրտեսը  
հարցաքննութեան ժամանակ Ձերթիմակուն լիտիարար հայտ-  
նեց:

— Ի ուր ինձ բռնեցիք միայն պատահականութեան շնոր-  
հիվ:

— Սխալվում եք,—պատասխանեց նրան Ձերթիմակին.—  
յեթե մասսան մեզ չաջակցեր, յեթե յուրաքանչյուր բան-  
վոր, յուրաքանչյուր կարմիր-բանակային չզիտակցեր, վոր  
դավադրությունը բաց անելը—այդ վոչ միայն Համառուս.  
Ա. Հ.-ի, այլև Սորհուրդների Յերկրի բոլոր աշխատավոր-  
ների դործն է, այն ժամանակ այն հանդամանքը, վոր ձեր  
աղջիկը վայր դրեց փաթեթը, չեր հասցնի դավադրութեան  
մերկացմանը: Ձեր աղջիկը պատահաբար է վայր դրել փա-  
թեթը, բայց կարմիր-բանակայինը պատահաբար չէ  
վերցրել այն, վոչ ել պատահաբար ձերբակալել նրան: Շար-  
քային կարմիր-բանակայինի զգաստությունը պատահումի  
չէ: Հենց դրա մեջ է Ա. Հ.-ի ուժը:

Ժողովուրդը հասկանում էր Համառուս. Ա. Հ.-ի խըն-  
դիրները և ողնում չեկիտներ յաշխատանքին: Յերբ 1918  
թվին ետերուհի Կապլանը վիրավորեց Վլադիմիր Իլյիչին,  
Համառուս. Ա. Հ.-ում տեղաց հեռագրերի հեղեղ, վորոնք  
պահանջում եյին զնդակահարել բոլոր հակահեղափոխա-  
կաններին՝ ետերներից մինչև սպիտակ-զվարդիական զենե-  
րալները:

Սորհրդային իշխանությունը ներքին և արտաքին հա-  
կահեղափոխութեան տեւորին ու դավադրություններին պա-  
տասխանեց կարմիր տեւորով, բանվորներին ու գյուղացի-  
ներին կոչ արեց զգաստ լինել, վճռականապես պայքարել  
հակահեղափոխականների դեմ: Ժողովրդական մասսաները  
վոտքի յելան պաշտպանելու իրենց նվաճումները, ողնելով  
Համառուս. Ա. Հ.-ին լիկվիդացիայի յենթարկելու դավա-  
դրությունները:

1923 թվի նոյեմբերին Ֆելիքս Ձերթիմակին դրում էր.

«Յերկար տողանով ձգվում են մերկացված դավադրու-  
թյուններն ու ապստամբությունները: Համառուս. Ա. Հ.-ի



տուր աչքը ամենուրեք թափանցում էր: Համառու. Ա. Հ.-ն աշխատավորներին դիկտատուրայի դեմքն էր: Պրոլետարիատը Ա. Հ.-ում աշխատելու համար դատեց իր լավագույն զավակներին: Յեվ դարձանալի չէ, վոր մեր թշնամիները կատաղորեն ատում էյին Ա. Հ.-ին ու չեկիտներին: Նրանց ատելութունը միանգամայն տեղին էր: Համառու. Ա. Հ.-ը կարող է հպարտանալ նրանով, վոր նա չլսված հալածանքի առարկա չէ յեղել բուրժուազիայի կողմից: Համառու. Ա. Հ.-ը հպարտանում է իր հերոսներով և պայքարում ընկած նահատակներով:

Միայն բանվորների ու գյուղացիների վստահութունն էր, վոր ուժ տվեց Համառու. Ա. Հ.-ին և այնուհետև Պետ-  
ֆադվարչուրայանն ի կատար ածելու հեղափոխության կողմից նրանց վրա դրված խնդիրը: Այդ վստահութունը հարկ յեղավ նվաճել յերկար, համառ, անձնվեր գեղաբերու-  
թյուններով ի պայքարով»:

Ֆելիքս Եղմունզովիչն առաջին ու լավագույն չեկիտներ էր: Կոմիսարներն ու քննիչները նրանից խկական աշխատանք էյին սուլորում: Նա բուլչեիկի տոկունության կերպար էր:

Մի անգամ Ա. Հ.-ի քննիչները մեկը, վորին մի ձերբակալված բանդիտ համբերությունից հանել էր, խփեց նրան: Ձերթինսկին պահանջեց անհապաղ դատ բանալ քննիչի դեմ: Դատավարությունը տեղի յեր ունենում Ա. Հ.-ի բոլոր աշխատակիցների առաջ: Ձերթինսկին ինքը հանդես յեկավ վորպես մեղադրող և պնդում էր քննիչին խիստ պատժի յենթարկելու վրա:

Ա. Հ.-ի մի պատասխանատու աշխատակից ձերբակալեց մի կնոջ, վորը յեկել էր կալանավորված յեղբոր մասին տեղեկություն ստանալու: Իմանալով այդ մասին, Ֆելիքս Եղմունզովիչը կանչեց այդ աշխատողին և նրան խիստ նկատողություն արեց: Կնոջն անմիջապես աղատեցին և Ֆելիքս Եղմունզովիչի մեքենայով տուն ուղարկեցին:

Ֆելիքս Եղմունզովիչն արտակարգ հ. նձնաժողովներին աշխատողներից պահանջում էր բարձր դադափարայնություն, սկզբունքայնություն և խորը ըմբռնողությունն այն բանի, վոր չեկիտների դործունեությունը ծառայում է հեղափոխության շահերին, ժողովրդի շահերին:

1919 թվականին Ֆելիքս Եղմունզովիչը պարզեցատրվեց մարտական Կարմիր դրոշի շքանշանով:

Համառուսաստանյան կենտրոնական գործադիր կոմիտեյի՝ Ֆ. Ե. Ձերթինսկուն Կարմիր դրոշի շքանշանով պարգևատրելու վերաբերյալ վորոշման մեջ ասվում էր.

«Այն պահից, յերբ բանվոր դասակարգի կողմից պարտված բուրժուազիան սկսեց պայքարել Խորհրդային իշխանության դեմ, սկսեց դավադրություններ, տեռորիստական մահափորձեր ու խռովություններ կազմակերպել, հակահեղափոխության դեմ պայքարելու ծանր ու վտանգներով լի խնդիրը Համառու. Կ. Գ. Կ.-ի կողմից դրվեց Ֆելիքս Եղմունզովիչ Ձերթինսկուն վրա:

Նրան հանձնարարված պատասխանատու գործում՝ ընկ-  
Ձերթինսկին վորպես հակահեղափոխության, սպեկուլացիայի ու սարտատժի դեմ պայքարող Համառուսաստանյան Արտակարգ Հանձնաժողովի նախագահ, յերևան բերեց խոշոր կազմակերպչական ընդունակություններ, անխոնջ յեռանդ, սառնարյունություն ու տոկունություն, բանվոր դասակարգի շահերը շարունակ ամենից բարձր դասելով բոլոր մյուս նկատառումներից ու զգացմունքներից: Ընկ. Ձերթինսկուն աշխատանքը, խաղաղ թիկունք ապահովելով, հնարավորություն էր տալիս Կարմիր բանակին վստահաբար կատարելու իր մարտական գործը»:

Համառու. Ա. Հ.-ի մարտական փառապանծ աշխատանքը քաղաքացիական պատերազմում տարած մեր հաղթանակների վճռական գործոններից մեկն էր: «Առանց Համառու. Ա. Հ.-ի մենք չէյինք հաղթանակի քաղաքացիա-



կան պատերազմի Ֆրոնտներում, մենք չեյինք պաշտպանի մեր հայրենիքի ազատությունն ու անկախությունը»<sup>1</sup> :

Մակայն ինտերվենաների ջախջախումը քաղաքացիական պատերազմում չարահասեցրեց ոտարերկրյա հետախուզություններին զելեբրսիոն-բանդիտական աշխատանքի թափը: ԽՍՀՄ-ի արևմտյան սահմաններում յերկար ժամանակ չէր դադարում Լեհաստանի և Ռումինիայի տերիտորիայում ապստամբած պետությունների, սալինիովական և այլ զելեբրսիոն բանդաների գործունեությունը: Անգլիական հետախուզությունը դավադրություններ ու բանդիտիզմ էր ներշնչում Միջին Ասիայում և Հյուսիսային Կովկասում: Կրոնչտադտի ապստամբությունը 1921 թվին և մենչևիկյան ապստամբությունը Վրաստանում 1924 թվին— ոտարերկրյա հետախուզությունների ամենից, ավելի լուրջ փորձերն էին գինված պայքարը վերսկսելու:

Ե այց արդեն Միացյալ Պետքաղվարչության կողմից 1923 թվին ջախջախված «գործողությունների կենտրոնի» և մի շարք այլ գործերի դատավարությունը բավականաչափ պարզությունը ցույց էյին տալիս, վոր հեղափոխություն թշնամիները քաղաքացիական պատերազմի ժամանակաշրջանի ռազմա-դավադրական տակտիկայից անցնում են ավելի խորը կոնսպիրացված հակահեղափոխական աշխատանքի մեթոդներին, տնտեսական հակահեղափոխության, փնասարքությունների, յերկրի տնտեսական վերածնման ուղղությունը խորհրդային իշխանության ձեռնարկած միջոցառումների վթեցման: Միաժամանակ ոտարերկրյա հետախուզությունները չեյին հրաժարվում նաև տեղորի, լրտեսության, դիփերսիաների ու բանդիտիզմի գենքից:

Թշնամիների բոլոր չարագործ մեքենայությունները ժամանակին մերկացվում էյին խորհրդային քաջարի հետա-

խուզության կողմից, վորին դաստիարակել էր Ֆելիքս Եղմոնդովիչ Ձերժինսկին դեպի Լենինի — Մտալինի գործնունեցած անսահման նվիրվածության վորով:

Համառու. Ա. Հ. — Ի գործունեությունը չէր սահմանափակվում միայն հակահեղափոխականներին, սարտոսաթնիկներին, բանդիտաներին ու սպեկուլանտներին դեմ մղած պայքարով:

Պատերազմը, սովի տարիները փողոց նետեցին հարյուր-հազարավոր անապաստան յերեխաներին: Նրանք դբազվում էյին դորությունամբ, հարձակումներով և հաճախ դատում էյին հին գողերին ու բանդիտաներին ձեռնասունները: Ձերժինսկին վորոշեց փրկել փողոց շարտված այդ յերեխաներին:

«Յես ուզում եմ իմ անձնական ուժերի, իսկ վոր դլխավորն է՝ Համառու. Ա. Հ. — Ի ուժերի վորոշ մասը նետել յերեխաների անապաստանության դեմ մղելիք պայքարին, — սասց մի անգամ Ֆելիքս Եղմոնդովիչը ընկեր Լուսնաչարսիու հետ ունեցած գրույցի ժամանակ: — Յես այդ յեղրակացությունը յեկա, յեընելով յերկու նկատառումներից՝ Առաջին, ախր այդ սարսափելի չարիք է: Չե՞ վոր յերրնայում ես յերեխաներին, չես կարող չմտածել, վոր ամենինչ նրանց համար է: Հեղափոխության պտուղները վրջ թե մեզ համար են, այլ նրանց համար: Իսկ մինչդեռ քանիսն են նրանցից բարոյապես այլանդակվել կովից ու կարիքից: Այստեղ հարկավոր է ուղղակի ոգնություն նետվել, ինչպես վոր իտեղվող յերեխաներ տեսնելիս ենք անում: Մենակ Լուսնոգլիմատի ուժերով այն դլուխ չի դա: Պետք է Համառու. ԿԳԿ-ին կից ստեղծել մի լայն հանձնաժողով, ուր կմտնեյին այն բոլոր գերատեսչություններն ու բոլոր կազմակերպությունները, վորոնք կարող են այդ գործում ոգտակար լինել: Յես կուղեյի, վոր ինքս լինեյի այդ հանձնաժողովը դլխավորողը. յես ուզում եմ ռեալ կերպով աչ-

<sup>1</sup> «Правда» от 20 декабря 1937 г. № 348/7314 «К двадцатилетию ВЧК—ОГПУ—НКВД»



խառանքի մեջ ներառնել Համառուս. Ա. Հ. —ի ապարատը...  
 Մենք ալեկի ու ալեկի յենք անցնում խաղաղ շինարարու-  
 թյանը, և յես մտածում եմ՝ ինչո՞ւ մեր մարտական ապա-  
 րատը չողտագործել պայքարելու համար այնպիսի չարիքի  
 դեմ, ինչպիսին անապաստանությունն է...»:

Մանկական հանձնաժողովը ստեղծվեց: Բայց Ֆելիքս  
 Եղմունդովիչը չբավականացավ նրանով, վոր անապաստան-  
 ները պատասպարան ու սնունդ դտան: Նրանց պետք է դաս-  
 տիարակել: Յերկրում ստեղծվեց աշխատանքային կոմունա-  
 ների մի ցանց: Նախկին իրավադանցները, այդ կոմունաների  
 սաները, այժմ դարձել են յերկրի լավադույն մարդիկ,  
 նրանցից շատերը դարձել են շքանշանակիրներ: Այդ կոմու-  
 նաներն ու նրանց սաները—առաջին չեկիստ Չերժինսկու  
 յովազույն հուշարձանն են:

XI

Խորհրդային հետախուզության անխոնջ, անձնազոհ,  
 հերոսական պայքարը հեղափոխական թիկունքի ամրացման  
 համար—բազմապատկում էր Կարմիր բանակի ուժն ու մար-  
 տունակությունը: Խորհրդային հետախուզության ղեկավար  
 Ֆելիքս Չերժինսկին հարազատորեն կապված էր Կարմիր  
 բանակի հետ և քիչ ուժեր չգործադրեց նրա ամրացման  
 համար: Կուսակցությունը բազմիցս ուղարկել է նրան քա-  
 զաքացիական սրտտերազմի Փրոնաների մարտական պատաս-  
 խանատու տեղամասերը:

1918 թվի վերջին կուսակցությունն ընկեր Ստալինի  
 հետ միասին Ֆելիքս Եղմունդովիչին ուղարկում է ռազմա-  
 կան պայքարի ամենապատասխանատու տեղամասը—արե-  
 վելյան Փրոնտը: Այստեղ էլին հավաքված հակահեղափո-  
 խության գլխավոր ուժերը: Կուլչակի բանակը ծավալում  
 էր հարձակումը, գրավեց Պերմը:

Մինչդեռ Պերմի ուղղությունը պաշտպանող Յ-րդ բա-

РОССИЙСКАЯ  
 ФЕДЕРАТИВНО-  
 РАБОТНИЧКАЯ  
 СОВЕТСКАЯ РЕСПУБЛИКА  
 —  
 ПРЕДСЕДАТЕЛЬ  
 СОВЕТА  
 НАРОДНЫХ КОМПССАРОВ  
 —  
 14/16 1918

*Тяжело и по существу  
 парадоксально  
 отношение Черкескину*

*Можете и прости первого и  
 второго денему охоту  
 все охоту и прости  
 и прости и прости и прости  
 и прости и прости и прости  
 и прости и прости и прости*

Վ. Ի. Լենինի հեռագիրը ընկերներ Ի. Վ. Ստալինին և  
 Ֆ. Ե. Չերժինսկուն. արևելյան Փրոնտ



խառանքի մեջ ներառնել Համառուտ. Ա. Հ.—ի ապարատը...  
 Մենք ավելի ու ավելի յենք անցնում խաղաղ շինարարու-  
 թյանը, և յես մտածում եմ՝ ինչո՞ւ մեր մարտական ապա-  
 րատը չողտազործել պայքարելու համար այնպիսի չարիքի  
 դեմ, ինչպիսին անապաստանությունն է...»:

Մանկական հանձնաժողովը ստեղծվեց: Բայց Ֆելիքս  
 Եղմունդովիչը չբավականացավ նրանով, վոր անապաստան-  
 աները պատսպարան ու սնունդ դտան: Նրանց պետք է դաս-  
 թիրակել: Յերկրում ստեղծվեց ասիստանթային կոմունա-  
 ների մի ցանց: Նախկին իրավազանցները, այդ կոմունաների  
 սաները, այժմ դարձել են յերկրի լավագույն մարդիկ,  
 նրանցից շատերը դարձել են շքանշանակիրներ: Այդ կոմու-  
 նաներն ու նրանց սաները—առաջին չեկիստ Ձերժինսկու  
 լավագույն հուշարձանն են:

XI

Խորհրդային հեռախոլղության անխոնջ, անձնագոհ,  
 հերոսական պայքարը հեղափոխական թիկունքի ամրացման  
 համար—բազմապատկում եր Կարմիր բանակի ուժն ու մար-  
 տունակությունը: Խորհրդային հեռախոլղության ղեկավար  
 Ֆելիքս Ձերժինսկին հարազատորեն կապված եր Կարմիր  
 բանակի հետ և քիչ ուժեր չգործադրեց նրա ամրացման  
 համար: Կուսակցությունը բազմիցս ուղարկել է նրան քա-  
 զաքացիական սրտտերաղմի Փրոնաների մարտական պատաս-  
 խանատու տեղամասերը:

1918 թվի վերջին կուսակցությունն ընկեր Ստալինի  
 հետ միասին Ֆելիքս Եղմունդովիչին ուղարկում է ռազմա-  
 կան պայքարի ամենապատասխանատու տեղամասը—արե-  
 վելյան Փրոնտը: Այստեղ էլին հավաքված հակահեղափո-  
 խության գլխավոր ուժերը: Կուլչակի բանակը ծավալում  
 եր հարձակումը, գրավեց Պերմը:

Մինչդեռ Պերմի ուղղությունը պաշտպանող 3-րդ բա-

РОССИЙСКАЯ  
 ФЕДЕРАТИВНО-  
 РАДИКАЛЬНАЯ  
 СОВЕТСКАЯ РЕСПУБЛИКА  
 ПРЕДСЕДАТЕЛЬ  
 СОВЕТА  
 ПАРОДИУМЪ КОММУНАРОВЪ  
 14 № 1917

*Трагор и по ивтому  
 Каропдену  
 Стелуку Державинскому*

*Молодые и старые революционеры  
 революционного движения союзу  
 всех добрых людей республике  
 коммунистическая революционная война  
 на фронтах и в тылу и в  
 городах Ленинграда*

Վ. Ի. Լենինի հեռագիրը ընկերներ Ի. Վ. Ստալինին և  
 Ֆ. Ե. Ձերժինսկուն. արևելյան Փրոնտ



նակում բացահայտորեն անապահով դրուեթյուն եր: Ինչպես մատնանշում է ընկեր Վորոշիլովը, 3-րդ բանակը չուներ վոչ հուսալի ռեզերվներ, վոչ լավ հաղորդակցություն և վոչ էլ կանոնավոր կազմակերպված մատակարարում: Բայց, դիտարկելով, նա ուներ թույլ շտաբ: Անպետք հրամանատարությունը չէր կարողանում բանակում հեղափոխական կարգ հաստատել: Նախկին ստրաներից բազկացած հրամանատարական կազմում շատ դավաճաններ կային, և նրանք դերի էլին տալիս ամբողջ զնդեր: Միայն 20 որվա ընթացքում բանակը 300 կիլոմետր նահանջեց, կորցրեց 18 հազար մարտիկ, տասնյակ հրանոթներ և հարյուրավոր զնդացիներ:

Լենինի առաջարկությամբ Կենտկոմը վորոշում ընդունեց՝ 3-րդ բանակ ուղարկել կուսակցական-քննիչ հանձնաժողով: Սվերդլովի կողմից ստորադրված այդ վորոշումը հեռագրում ձևակերպված է այսպես.

«Նշանակել կուսակցական-քննիչ հանձնաժողով՝ հանձին Կենտկոմի անդամներ Չերժինսկու և Ստալինի, մամրամասնորեն քննելու համար Պերմը հանձնելու, ուրալյան Փրոնտում կրած վերջին պարտությունների պատճառները, ինչպես նաև պարզելու վերը մատնանշված յերևույթների ուղեկցող բոլոր հանգամանքները: Կենտկոմը հանձնաժողովին է վերապահում ձեռք առնել բոլոր անհրաժեշտ միջոցները՝ շուտափույթ կերպով վերականգնելու ինչպես կուսակցական, այնպես էլ խորհրդային աշխատանքը III և II բանակների ամբողջ շրջանում»:

Բայց ընկեր Ստալինը և նրա հետ միասին նաև ընկեր Չերժինսկին չսահմանափակվեցին միայն այդ խնդիրներով:

Ընկեր Ստալինը, ասում է ընկեր Վորոշիլովը, «խր «կուսակցական-քննչական» աշխատանքի ծանրության կենտրոնը փոխադրում է դրությունը վերականգնելու, Փրոնտն ամրացնելու և այդ ուղղությամբ իրական միջոցներ ձեռք առնելու վրա»:

Չսպասելով այնքան, մինչև վոր կենտրոնն իրականացնի Փրոնտն ամրացնելու ուղղությամբ պահանջվող միջոցառումները, ընկերներ Ստալինն ու Չերժինսկին տեղում միթխարի աշխատանք կատարեցին 3-րդ բանակի մարտունակությունը բարձրացնելու վերաբերմամբ:

«Առ 15-ն հունվարի,—կարդում ենք մենք Պաշտպանության խորհրդին ուղարկած նրանց տեղեկագրի մեջ,— Փրոնտ է ուղարկված 1.200 մատահելի սվին ու թուր, մի որ հետո—հեծելազորի յերկու եսկազրոն. 20-ին ուղարկված է 3-րդ բրիգադի 62-րդ դուևդը (նախորդ խնամքով Փիլտրացիայի յե յենթարկված): Այս զորամասերը հնարավորություն տվին կանգնեցնելու հակառակորդի հարձակումը, փոխեցին III բանակի տրամադրությունը և սկսեցին մեր առայժմ հաջող հարձակումը Պերմի վրա: Բանակի թիկունքում տեղի յե ունենում խորհրդային և կուսակցական հիմնարկների լուրջ դտում: Վյատկայում և դավառական քաղաքներում կազմակերպված են հեղափոխական կոմիտեներ: Սկսված է և շարունակվում է հեղափոխական ամուր կազմակերպությունների արմատավորումը դյուևդում: Կուսակցական և խորհրդային ամբողջ աշխատանքը վերակառուցվում է նոր ձևով: Չսված ու բարեփոխված է ոստիկան վերահսկողությունը: Չսված ու կուսակցական նոր աշխատողներով համարված է նահանգական արտակարգ հանձնաժողովը: Կարգավորված է Վյատկայի հանդուցի բեռնաթափումը...» և այլն: Ընկերներ Ստալինի ու Չերժինսկու՝ 3-րդ բանակի տեղամասում ձեռք առած յեռանդուն միջոցներն ուղեկցին, վորով արևելյան Փրոնտի կարմիր բանակները հարձակման անցան և Ուրալի դրավեցին:

1920 թվականի դարնանը քաղաքացիական պատերազմի վճռական Փրոնտ հանդիսացավ արևմտյան Փրոնտը: 1920 թվի ապրիլին լեհական զորքերը ներխուժեցին խորհրդային Ուկրաինայի սահմանները: Լեհական ինտերվենտները, հեն-



վելուլ անդրո-Ֆրանսական իմպերիալիստները աջակցութեան վրա, նպատակ դրին հասիչտակել Խորհրդային Ուկրաինայի աջախնյա մասը, հասիչտակել Բելոռուսիան, այդ ուսումներում վերականգնել լեհական պաների իշխանութիւնը: Աջակցութիւն ստանալով Անտանտայի իմպերիալիստների կողմից, վորոնք մատակարարում էին թե՛ փող, թե՛ զենք, թե՛ զգեստ և թե զինվորական հրահանգիչներ, Պիլսուդսկին զավթում էր քաղաքներն ու գյուղերը և ավելի ու ավելի յեր առաջ խաղում Խորհրդային Ուկրաինայի խորքը: Սպիտակ-լեհերին հաջողվեց գրավել Կիևը: Այդ ժամանակ բարոն Վրանդելի բանակը հարձակման անցավ և սկսեց սպառնալ Դոնբասին: Սպիտակ-լեհերն ու Վրանդելը մի ընդհանուր պլան ունեցին—ջախջախել Կարմիր բանակը և Խորհրդային Ռուսաստանում վերականգնել կալվածատերերի՝ ու կապիտալիստների իշխանութիւնը: Այդ Պիլսուդսկու և Վրանդելի թիկունքում կանգնած Անտանտայի իմպերիալիստների պլանն էր:

Դրութիւնը խիստ լարված էր:

Այդ ժամանակ Ֆելիքս Զերժինսկին հատկապէս նշանակելից հարաւ-արևմտյան Փրոնտի թիկունքի պետ: Զերժինսկին շատ մեծ աշխատանք կատարեց Ուկրաինայի թիկունքը մաքրելու և ամրացնելու ուղղութեամբ: Նրա ղեկավարութեամբ անխնա կերպով ճնշվում էին Կարմիր բանակի թիկունքում մնասելու թշնամական փորձերը: Յերևան հանվեցին ու լիկվիդացիայի յենթարկվեցին շատ հակահեղափոխական կազմակերպութիւններ:

Հեծյալ բանակը, Վորոչիլովի ու Բուդյոննու ղլխավորութեամբ, ճեղքեց սպիտակ-լեհական Փրոնտը և թշնամուն հետ շարտեց խորհրդային տերիտորիայի սահմաններից այն կողմ:

Յերբ կարմիր զորքերը, հետապնդելով նահանջողներին, մտան Լեհաստան, սպիտակ-լեհերը, վորոնք կողոպտչական հարձակում էին գործել Խորհրդային յերկրի վրա, սարս-

փելի վրոնոց բարձրացրին «կարմիր իմպերիալիզմի» մասին, խորհրդային իշխանութեան կողմից լեհական հողերն իբր թե բռնութեամբ հասիչտակելու մտադրութիւնների մասին:

Համոզելու համար լեհական բնակչութեանը, վոր Խորհրդային իշխանութեան մտադրութիւնները խաղաղ բնույթ են կրում, Ռուսաստանում գտնվող լեհ կոմունիստները Կարմիր բանակի հետ միասին մտան Լեհաստանի սահմանները: Ընտրվեց լեհական ժամանակավոր հեղափոխական կոմիտե: Լեհական հեղափոխական կառավարութեան կազմի մեջ մտավ նաև Ֆ. Ե. Զերժինսկին:

1914 թիւին Զերժինսկուն, վորպէս տաժանորդի, Լեհաստանից ջրում-տանում էին Ռուսաստանի խորքը: 1920 թիւին նա, հեղափոխական զորքերի ղլուխ անցած, վերադառնում էր Լեհաստան՝ շարունակելու պայքարը բանվոր դասակարգի ազատագրման համար: Զերժինսկին և կոմիտեյի մյուս անդամները գնում էին, համոզված լինելով, վոր լեհական ժամանակավոր հեղափոխական կոմիտեյի կողմէրը արձագանգ կգտնեն պրոլետարիատի ու չքավոր թյուղացիութեան մեջ: Այդպէս էլ յեղավ:

Վարչաւայում Զինվորական պատգամավորների լեհական խորհուրդը մարտահրավեր նետեց Պիլսուդսկուն, մերկացնելով նրան աշխատավորութեան գործի հանդէպ կատարած մատնչութեան ու զավաճանութեան մեջ, նշաւակելով նրան վորպէս կապիտալիստական Արևմուտքի ժանգարմի:

«Մեզնից ո՞վ կհավատա ջո հավաստիացումներին ու խոստումներին, —սոված էր այդ կողջի մեջ:—Յեւ, յեթե դու, վոր հանդիսանում էս միայն Ռոման Դոմովսկու—լեհական կալվածատերերի ու կապիտալիստների առաջնորդի ստրուկը, նույնիսկ յեթե ուղենայիր, ինչ կարող էիր անել մեզ համար: Մոտենում է և շուտով պետք է հասնի դատաստանի յերկրորդ ժամը, յերբ մենք, զինվորներս, գյուղի ու քաղաքի բանվորների հետ միասին, մեր ամբողջ ուժը կուղ-



դենք զո դեմ, զո սպաների դեմ, Լեհաստանի ազնվականա-  
կան-կապիտալիստական ամբողջ բանդայի դեմ... Այն ժա-  
մանակ կլերջանա վոճրադրոճ պատերազմը, կլերջանա Լե-  
հաստանի ավազակային կառավարումը, կլերջանա զո խայ-  
տառակ դերը:

Այն ժամանակ Լեհաստանն իսկապես կբաժնան մի լու-  
սավոր ու ազատ տուն, վորի մեջ տեր ու տնորեն կլինի  
Լեհաստանի բանվոր ժողովուրդը, միավորված ամբողջ աշ-  
խարհի աշխատավոր մարդկության հետ»:

Ճրոնտում տեղի ունեցող դեպքերը ծավալվում եյին  
անսովոր արագութեամբ: Գրոդնոն ընկավ: Կարմիր բանակի  
առաջ եր խաղում դեպի Բելոստոկ՝ Կարմիր բանակի զբա-  
ված տերիտորիայի վրա դոնովոդ քաղաքին արդյունաբերա-  
կան կենտրոնը: Այդ անմոռանալի պատմական որերին  
Ձերժինսկու անխոնջութունը բոլորին դարձացնում եր: Նա  
աշխատում եր տասը հոգու չափ: Կարմիր բանակի զբա-  
ված տերիտորիայում չկար կաղմակերպված պետական  
ապարատ, վորպիսին Սորճրդային Ռուսաստանումն եր:  
Այն հարկ եր լինում կաղմակերպել ձեռաց՝ վստի վրա,  
վիթխարի դժվարութուններով: Այդ դժվարութունները  
միայն ուժեղացնում եյին «յերկաթե Ֆելիքս» յեռանդը:

Լեհական սոցիալ-դեմոկրատները (պեպեեսականները)  
կատաղի ազիտացիա ծավալեցին բոլշևիկների դեմ, Կարմիր  
բանակի առաջխաղացման կապակցութեամբ: Նրանք լայնո-  
րեն ողտադրոճում եյին այն հանդամանքը, վոր Կարմիր  
բանակին վիճակվում եր դործել դյուղացիական ուսուցանե-  
րում, վորտեղ կոմունիստների ազդեցութունն աննշան եր:

Ողտադրոճելով ուսու կարվածատերերի, չինովիկները  
ու զինվորականների նկատմամբ պատմականորեն դոյացած  
թշնամանքը, վորը լեհերի մեջ առաջացել եր ցարիզմի՝ ուս-  
սացման մեծապետական քաղաքականութունը, պեպեեսա-  
կաններն աշխատում եյին լեհ աշխատավոր մասսաներին  
ամեն կերպ ներշնչել, վոր իրր թե Կարմիր բանակը հան-

դիսանում և նույնպիսի մեծապետական քաղաքականութեան  
դորժիք: Միևնույն ժամանակ լեհական բուրժուազիան և  
սոցիալ-դեմոկրատներն ամենուրեք ձշում եյին, թե լեհա-  
կան բանակը պատերազմում և Լեհաստանի անկախութեան  
համար: Աշխատավոր դյուղացիներին իր կողմը քաշելու հա-  
մար, լեհական բուրժուական կառավարութունը մի որենք  
հրատարակեց, վորով հող եր խոստանում դյուղացիներին:

Պաների և զանձների ազիտացիայի հետևանքներն ամե-  
նուրեք զդացվում եյին: Բնակչութունը զուշարար եր վե-  
րաբերվում հեղափոխական կոմիտեյի ձեռնարկումներին:  
Պետք և հանդես բերել չափազանց մեծ վարվեցողութուն և  
հմտորեն ծավալել ազիտացիան լեհ բնակչութեան մեջ:

Ձերժինսկին համբուրութեամբ պարզաբանում եր դյու-  
ղացիներին, թե ինչից և առաջ յեկել Լեհական հեղկոմի  
այս կամ այն ձեռնարկումը, ծանոթացնում եր Կարմիր բա-  
նակի քաղդեկներին լեհ դյուղացիութեան կյանքի ու կեն-  
ցաղի պայմանների հետ: Նրան հարկ եր լինում մի կաղմա-  
կերպութուն ստեղծել՝ պայքարելու համար այն պրովոկա-  
տորների ու լրտեսների դեմ, վորոնց սպիտակ-լեհերը թո-  
ղել եյին եվակուացիայի յենթարկված վայրերում: Նրա  
կյանքը բոլորովին անվտանգ չեր, լեհական բուրժուազիան  
ատում եր Ձերժինսկուն ու վախենում նրանից:

Վերցված և Բելոստոկը: Կոմիտեն այստեղ պիտի հրա-  
տարակեր մի մանիֆեստ, ուղղված բնակչութեանը: Սովոր-  
բարը հանդիստ՝ Ձերժինսկին սաստիկ հուզվում եր կոմի-  
տեյի նիստում այս դոկումենտը կաղմելիս: Այստեղ  
բաղխվեցին յերկու դժեր. Ձերժինսկին պնդում եր, թե  
դյուղացիութեան վերաբերմամբ անհրաժեշտ և նույն դերը  
բունել, ինչ դերը վոր բունեցին և անցկացրին բոլշևիկները  
հոկտեմբերից հետո Ռուսաստանում, և դյուղացիութեանը  
կոչ անել տեղերում կոմիտեներ կաղմակերպելու՝ ամբողջ  
հողը դյուղացիութեանը հանձնելու համար: Իսկ կոմիտեյի



առաջամենքի մեծամասնութիւնը, սկսած Կոնստանտնուպոլսէն, վերջին  
լեհաստանում գոյութիւն ունի բազմաթիւ բազմամարդ  
գոյուղական պրոքլետարիատ, այնքան երկար ժամատիրական  
կարգաւորումները կոմունալ սկզբունքներով հանձնել տվյալ  
կարգաւորում աշխատող գոյուղական բանվորներին, իսկ գոյու-  
ղացիներին տալ միայն վոչ մեծ հողամասեր (հողակտոր-  
վածքներ), վորպէսզի ապագա կոմունան չթուլանա: Ձեր-  
միմեկին մնաց փոքրամասնութիւն մեջ, և կոմիտեյի միջա-  
նի անդամները միայն հետագայում հասկացան, թէ վորչափ  
խորապէս ճիշտ եր նա: Այս հարցում Ձերմիմեկին միջակ  
գոյուղացիութեան հետ դաշինքն ամրացնելու լենինյան քա-  
ղաքականութեան կիրառողն եր, իսկ լեհական ժամանակա-  
վոր հեղափոխական կոմիտեյի անդամների մեծամասնու-  
թիւնն աջակցում եր լեհական հակահեղափոխութեանը:

Շուտով կոմիտեյին վիճակվեց Բելոստոկից տեղափոխ-  
վել ավելի մոտիկ Վարշավային: Կարմիր բանակի Վար-  
շավային մոտենալը սպառնում եր լիակատար պարտութիւն  
պանական լեհաստանին: Բայց կարմիր զորքերի հաջողու-  
թիւնն արևմտյան Փրոնտում վիժեցվեց Տրոցկու և նրա  
կողմնակիցների դավաճանական վարքի հետևանքով: Ձոր-  
քերին հնարավորութիւն չեյին տալիս նվաճած դիրքերն  
ամրացնելու, առաջապահ զորամասերը թողնվել էյին հա-  
կառակորդի թիկունքում առանց ռազմաթեքների ու ռե-  
զերվների: Միակ հնարավոր և լավագոյն ողնութիւնն  
արևմտյան Փրոնտին կլիներ Լվովի դրավումը հարավային  
Փրոնտի զորամասերի կողմից: Բայց Տրոցկին հարավային  
Փրոնտի զորամասերին արգելեց Լվովը գրավել: Այդ վնաս-  
արարական հրամանով նա ողնեց լեհական պաներին ու  
Անտանտին:

Յերբ կարմիր բանակին վտանգ եր սպառնում, Ձեր-  
միմեկին սկսեց ղեկավարել նահանջի ուղղութեամբ ձեռք  
առնվող բոլոր միջոցառումները: Համոզվելուց հետո միայն,

վոր նահանջը նորմալ բնույթ ե ընդունել, նա վերադար-  
ձավ Մոսկով:

Հարավում այդ ժամանակ, Ստալինի պլանով, պատրաստ-  
վում եր Վրանդելի ջախջախումը: Համառուս. Ա. Հ. -ի  
պետին անհրաժեշտ եր առանձնապէս պատրաստ լինել:

Ձերմիմեկու հմայքը, նրա հեղինակութեան ուժը մաս-  
տաների մեջ բացառիկ մեծ էյին: Լինելով կրակոտ հոետոր,  
նա կարողանում եր վորդեշնչել մասսաներին, նրանց մեջ  
բարձրացնել մարտական խիղախութեան ու պատրաստակա-  
մութեան վորին՝ անձնվիրաբար կռիւելու հեղափոխութեան  
գործի համար:

1920 թվին Ֆելիքս Եդմունդովիչը բազմիցս հանդես եր  
գալիս Ուկրաինայի բանվորների, կարմիր-բանակայինների  
ժողովներում ու միտինգներում: Ոտարկով քաղ. Մուսսուրի  
թատրոնում կայացած այդպիսի միտինգներից մեկին ներկա  
յեղող ինժեներ Բարդինը դունեղ կերպով պատմում ե Ֆե-  
լիքս Ձերմիմեկու յեւույթի մասին.

«Թույլ կերպով լուսավորված մեծ դահլիճը ծայր առ-  
տիճան լեփլեցուն եր մարդկանցով: Հազած լինելով դին-  
վորի շինել, քուրք, դլիններին ծածկած փափախ և կարմիր  
բանակայինի սաղալարտ, մարդիկ նստած էյին, իրարու  
կիս կպած, և թվում եր, թէ դժժացող դահլիճի պատերը  
չեն դիմանա այդպիսի անդուսող ճնշմանը:

Բայց ահա դահլիճով մեկ հարածող շունը անցավ: Հա-  
ղարավոր աչքեր դեպի բեմը դարձան, վորտեղ տեղավոր-  
ված եր կարմիր սիւնոցով ծածկված մի յերկար սեղան:

Սեղանին մոտեցավ բարձրահասակ նիհար մի մարդ,  
տպավորիչ, բնորոշ յերկարավուն դեմքով, շրջանկված  
պատկերներից ծանոթ սուր փոքր մորուքով, կարմիր-բանա-  
կայինի դիմաստորկայով ու կոշիկներով:

Այդ Ֆելիքս Ձերմիմեկին եր:  
Միքանի վայրկյան նա կանգնած եր, ձեռքը արտին  
դրած, սպասելով, թէ յերբ կհանդարտվի մարդկային դրբ-



աղաճմաների մեծամասնութիւնը, սկսած 1917 թ. օգոստոսից, վերջինս լեհաստանում գոյութիւն ունի բազմազան բազմամարդ գյուղական պրոլետարիատ, սինդիկատներ կարգաւորուած կարգաւորուած քիմիական կարգաւորուած սկզբունքներով հանձնել տվյալ կարգաւորուած աշխատող գյուղական բանվորներին, իսկ գյուղացիներին տալ միայն վոչ մեծ հողամասեր (հողակտրուվածքներ), վորպէսզի ապագա կոմունան չթուլանա: Ձեր ժինսկին մնաց փոքրամասնութիւն մեջ, և կոմիտէյի միջանի անդամները միայն հետագայում հասկացան, թե վորչափ խորապէս ճիշտ էր նա: Այս հարցում Ձեր ժինսկին միջակ գյուղացիութեան հետ դաշինքն ամրացնելու լենինյան քաղաքականութեան կիրառողն էր, իսկ լեհական ժամանակավոր հեղափոխական կոմիտէյի անդամների մեծամասնութիւնն աջակցում էր լեհական հակահեղափոխութեանը:

Շուտով կոմիտէյին վիճակվեց Բելոստոկից տեղափոխվել ավելի մոտիկ Վարշավային: Կարմիր բանակի Վարշավային մոտենալը սպառնում էր լիակատար պարտութիւնն պանական լեհաստանին: Բայց կարմիր զորքերի հաջողութիւնն արեւմտյան Ֆրոնտում վիժեցվեց Տրոցկու և նրա կողմնակիցների դավաճանական վարքի հետևանքով: Ձորքերին հնարավորութիւն չէին տալիս նվաճած դիրքերն ամրացնելու, առաջապահ զորամասերը թողնվել էին հակառակորդի թիկունքում առանց ռազմաթերթների ու ռեզերվների: Միակ հնարավոր և լավագոյն ուղևորութիւնն արեւմտյան Ֆրոնտին կլինէր Լվովի դրավումը հարավային Ֆրոնտի զորամասերի կողմից: Բայց Տրոցկին հարավային Ֆրոնտի զորամասերին արգելեց Լվովը գրավել: Այդ վնասարարական հրամանով նա ունեց լեհական պաններին ու Անտանտին:

Յերբ Կարմիր բանակին վտանգ էր սպառնում, Ձեր ժինսկին սկսեց ղեկավարել նահանջի ուղղութեամբ ձեռք առնվող բոլոր միջոցառումները: Համոզվելուց հետո միայն,

վոր նահանջը նորմալ բնույթ է ընդունել, նա վերադարձավ Մոսկվա:

Հարավում այդ ժամանակ, Մտալինի պլանով, պատրաստվում էր Վրանդելի ջախջախումը: Համառուտ. Ա. Հ. Ի պետին անհրաժեշտ էր առանձնապէս պատրաստ լինել:

Ձեր ժինսկու հմայքը, նրա հեղինակութեան ուժը մասսաների մեջ բացառիկ մեծ էլին: Լինելով կրակոտ հոգեւոր, նա կարողանում էր վորքեչնչել մասսաներին, նրանց մեջ բարձրացնել մարտական խիղախութեան ու պատրաստակամութեան վորդին՝ անձնվիրաբար կովելու հեղափոխութեան գործի համար:

1920 թ. վին Ֆելիքս Եղմունդովիչը բազմիցս հանդես էր գալիս Ուկրաինայի բանվորների, կարմիր-բանակայինների ժողովներում ու միտինգներում: Խարկով քաղ. Մուսսուրի թատրոնում կայացած այդպիսի միտինգներից մեկին ներկայեղող ինժեներ Բարդիլը գունեղ կերպով պատմում է Ֆելիքս Ձեր ժինսկու յերույթի մասին:

«Թույլ կերպով լուսավորված մեծ դահլիճը ծայր ատտիճան լեփեցուն էր մարդկանցով: Հազած լինելով զինվորի շինել, քուրք, դլիններին ծածկած փափախ և կարմիր բանակայինի սաղավարտ, մարդիկ նստած էլին, իրարու կիս կպած, և թվում էր, թե դժգոհող դահլիճի պատերը չեն դիմանա այդպիսի անդուստլ ճնշմանը:

Բայց ահա դահլիճով մեկ հարաճող շունջ անցավ: Հաղարավոր աչքեր դեպի բեմը դարձան, վորտեղ տեղավորված էր կարմիր սիւնոցով ծածկված մի յերկար սեղան:

Սեղանին մոտեցավ բարձրահասակ նիհար մի մարդ, տպավորիչ, բնորոշ յերկարալուն դեմքով, շրջանկված պատկերներէր ծանոթ սուր փոքր մորուքով, կարմիր-բանակայինի դիմնաստորկայով ու կոշիկներով:

Այդ Ֆելիքս Ձեր ժինսկին էր:

Միջանի վայրկյան նա կանգնած էր, ձեռքը օրտին դրած, սպասելով, թե յերբ կհանդարտվի մարդկային դղբը:



դյուհը դահլիճում, ուր նա ուղղեց իր արծաթը՝ հայացքը: Նրա կանաչավուն գորշ աչքերը թվում էր, թե այրվում էին: Յես բեմին մոտիկ էյի կանգնած և այդ լավ էյի տեսնում:

Դղրդյուհը չէր հանդարտվում, և, չսպասելով, վոր վերջանա, Ձերթինսկին ձեռքը բարձրացրեց և լսելի կերպով արտասանեց.

— Ընկերնե՛ր:

Դահլիճը յերերաց, լսեց ու քարացավ:

Դիմելով կարմիր-բանակայիններին, բանվորներին ու դյուղացիներին, Ձերթինսկին իր ճառն սկսեց վոչ բարձր, բայց հստակ ձայնով, վորի մեջ զգացվում էր մեծ ուժ և վորը հենց սկզբից ելեքարականացրեց ամբողջ դահլիճը:

Մարդիկ լսում էին նրան հափշտակող ուշադրությամբ: Վորչափ Ձերթինսկին խոսում էր, նրա առողանությունը փոխվում էր, խոսքերը դառնում էին ավելի սուր, ավելի դրոշմվող, նա ամբողջ մարմնով առաջ էր խոյանում և նյարդայնորեն քայլում բեմի վրայով:

Յեվ ամբողջովին նա ինքն էր, Ձերթինսկին—բարձրահասակ, նիհար, յեռանդուն, բոցաշունչ, կարծես ջղահան-դուլցում հավաքված, անողոք ու անկեղծ—վոր իշխում էր իր առաջ նստած մարդկանց գիտակցությանն ու կամքին:

Կյանքումս առաջին անգամն էյի լսում այդպիսի բոցաշունչ հոտորի, տեսնում այդպիսի մեծ քաղաքական մարտիկի, վորի խոսքերը, ինձ թվում էր, դուրս էին գալիս բուն սրտից, ծագում մարդկային հողու բյուրեղյա խորքերից:

Յես նայում էյի շուրջս, մորուքներով ծածկված, հողնած, նիհարած, բայց իրենց հաղթանակի նկատմամբ վրստահ մարդկանց, վորոնք արբած էին ճշմարտությամբ, վորով, կարծես բոցով, այրում էր նրանց Ձերթինսկին:

Այո՛, այո՛: Ըճմարտության արտասովոր ուժով, հա-

մոգման հմայիչ ուժով էյին շնչում Ձերթինսկու խոսքերը, և յես այդ զղացի դահլիճ նետած նրա առաջին իսկ խոսքերից:

Նրան լսում էյին լարված ուշադրությամբ, շնչները պահած: Ձերթինսկին խոսում էր այն մասին, թե ի՛նչ է խորհրդային իշխանությունը.

— Այդ—ժողովրդի իշխանությունն է, ստրկության չղթաները փշրած, թաղակիր դահլիճներին և նրանց վտակուտադիրավոր սատրապներին տապալած բանվորների ու դյուղացիների իշխանությունը: Այդ—աշխատավորների իշխանությունն է, վորոնք վոչնչացրին ստրկացումը, ճընշումը, մարդու շահագործումը մարդու կողմից: Այդ—դուք ինքներդ ե՛ք, այս դահլիճում նստած կարմիր-բանակային—մարտիկներդ, բանվորներդ ու դյուղացիներդ: Այդ—աշխատավոր խորհրդային մեծ ժողովուրդն է, վոր վոչնչացրեց ցարին, կալվածատերերին ու կապիտալիստներին—ասա՛ թե ինչ է, ընկերնե՛ր, խորհրդային իշխանությունը:

Դահլիճում ազմկում էր ծովը, ծառանում էր չլող դղրյունը, իսկ Ձերթինսկին բոցավառվելով, մարդկանց մոայլ ու ցատումնալից յերեակայությանը պատկերում էր գաղվա որվա խնդիրը: Նրա հակերճ դարձվածքներում յերեան էյին գալիս այն ավերածությունների պատկերները, վոր պատճառեց ստրտակ դեներալների, կալվածատերերի ու Ֆարրիկանտների կողմից բանվորների ու դյուղացիների վզին զոռով փաթաթված պատերազմը:

— Բայց ինչո՞ւ համար ենք մենք կովում, ինչո՞ւ համար ենք մենք պայքարում քաղաքացիական պատերազմի ֆրոնտներում, —հարցնում էր Ձերթինսկին.

Յեվ պատասխանում էր.

— Նրա համար, վոր դենք ձեռքին պաշտպանենք մեր իշխանությունը, մեր աղատությունը, մեր սպրելու, աշխատելու իրավունքը, բոլորի յերջանկության համար.



նրա համար, վորպեսզի ազատութիւնն ու յերջանկութիւնն նվաճենք մեր յերեխաների ու թոռների համար:

Մենք ինքնե՛րս պետք է դարբենենք մեր յերջանկութիւնը: Հինց այսոր մենք պետք է պայքար սկսենք վիւղգման դեմ, վերականգնենք քայքայված տրանսպորտը, կենդանացնենք դործարաններն ու Փարբիկաները, կանաչադարդենք վաչտերն ու վարելահողերը, կերակրենք ու հաղցնենք մեր յերեխաներին, ծաղկուն, խնդուն, հզոր դարձնենք մեր խորհրդային պետութիւնը:

Միայն վոչ մի բոլոր չմոռանանք սուրբ, մարտական վտօքի պահենք հրացանը, վորովհետեւ մեր թշնամիները չեն նիրհում:

Բոլոր կողմերից մարդկային մարմիններով սեղմված՝ յես արդեն վոչինչ չեյի նկատում շուրջս: Յես միայն տեսնում եյի մարդկանց դայրույթով ու վճռականութիւնով բոցավառվող աչքերը, մարդիկ, վորոնք, ինչպես յես, մինչև հոգու խորքը ցնցված եյին Ձերթինսկու պարզ, բայց այդպիսի հուզող խոսքերից:

Ճշմարտութիւն, պարզ, հմայիչ ճշմարտութիւն—յես այդ տեսա և զգացի—ահա՛ թե ինչը հափշտակեց մարդկանց՝ դահլիճում, ահա՛ թե ինչն ապշեցրեց նաև իմ գիտակցութիւնն ու սիրտը: Յես իմ առաջ տեսնում եյի վոչ թե պարզապես մի տրիբուն, այլև քաջարի մի ռազմիկ, վորի անունը սարսուռի մեջ էր գցում թշնամիներին, վորի խոսքերը, ասես հատո՛ւ սուր, կործանարար ուժով ջարդուփշուր եյին անում իմ կասկածները:

Այն յերեկոն չի՛ ջնջվի հիշողութիւնիցս: Յես չեմ մոռանա այդ միտինգը աղոտ լուսավորված դահլիճում, վորտեղ մեծ մարդու խոսքերը կոչ եյին անում մարդկանց սրտերին, ստիպում նրանց յեռալ զայրույթով, բոցավառում եյին հուշար: Յես չեմ մոռանա Ձերթինսկու, «յերկաթե Ֆելիքսի», «հեղափոխութիւնն ասպետի» հմայիչ

պատկերը, հոգուս մեջ խորը մեխված քաջարի ռազմիկի պատկերը՝ անընկճելի կամքով և դեպի մեծ ճշմարտութիւնն ունեցած ամենահաղթ հավատով, ճշմարտութիւնն, վորը նա համոզված ու հպարտորեն տանում էր իր առջև՝ վրց, վորպես մարտական դրոշմ՝:

## XII

Վրանդելչէինան—յերեք տարվա ընթացքում մոլեզնոդ ինտերվենցիոնիստական փոթորկի վերջին թուխպերից մեկն էր: Հեղափոխական ժողովուրդը և նրա բանակը ցրիվ տվեց այդ թուխպը: Իմպերիալիստական գիշատիչները դաս ստացան: Կրախի յենթարկվելով Խորհուրդների յերկըրի վրա կատարած գինված արշավանքներում, նրանք հուշս ունեյին, վոր իրենց կհաջողվի ուրիշ ճանապարհներով, առաջին հերթին տնտեսական ստրկացման ճանապարհով, յեթե վոչ տապալել խորհրդային իշխանութիւնը, գոնե շեղել նրան լենինյան ուղուց: Նրանք հուշս եյին դրել այն բանի վրա, վոր աղքատացած ու քայքայված յերկիրն ուժ չի ունենա կռիւլու իր տնտեսական անկախութիւնն համար: Այդ հաշիւներում բուրժուազիան հուսախաբվեց, թեպետև մի յերկրի համար, վորին առանց այն եչ արյունաքամ եյին արել իմպերիալիստական պատերազմի տարիները, ինտերվենցիան շատ թանգ նստեց: Թշնամին դործում էր սրով ու հրով: Տուժեցին ամբողջ քաղաքներ ու գյուղեր: Կրճատվեց ցանքերի տարածութիւնը, վոչընչացվեց անասունը: Փարբիկաները, դործարանները, հանքահորերը և յերկաթուղիները խիստ ավերված եյին: Տընսեսութիւնն վերականգնման հարցը դարձավ բանվորների ու գյուղացիների պետութիւնն կյանքի հարցը:

1 БАРДИН, Жизнь инженера, стр. 87—90. Изд. «Молодая гвардия», 1938 г.



նրա համար, վորպեսզի ազատութիւնն ու յերջանկութիւնն նվաճենք մեր յերեսաների ու թոռների համար:

Մենք ինքնե՛րս պետք է դարբենք մեր յերջանկութիւնը: Հենց այսօր մենք պետք է պայքար սկսենք փլուզման դեմ, վերականգնենք քայքայված տրանսպորտը, կենդանացնենք գործարաններն ու Փարբիկաները, կանաչազարդենք վաչտերն ու վարելահողերը, կերակրենք ու հաղցնենք մեր յերեսաներին, ծաղկուն, խնդուն, հզոր դարձնենք մեր խորհրդային պետութիւնը:

Միայն վոչ մի բոսի չմոռանանք սուրը, մարտական վտարի պահենք հրացանը, վորովհետեւ մեր թշնամիները չեն նիրհում:

Ի՞նչու կողմերից մարդկային մարմիններով սեղմված՝ յես արդեն վոչինչ չեյի նկատում շուրջս: Յես միայն տեսնում եյի մարդկանց դայրուցթով ու վճռականութեամբ բոցավառվող աչքերը, մարդիկ, վորոնք, ինչպես յես, մինչև հոգու խորքը ցնցված եյին Ձերթինակու պարզ, բայց այդպիսի հուզող խոսքերից:

Ճմարտութիւնն, պարզ, հմայիչ ճմարտութիւնն—յես այդ տեսաւ և զգացի—ահա՛ թե ինչը հափշտակեց մարդկանց՝ դահլիճում, ահա՛ թե ինչն ապշեցրեց նաև իմ գիտակցութիւնն ու սիրտը: Յես իմ առաջ տեսնում եյի վոչ թե պարզապես մի տրիբուն, այլև քաջարի մի ռազմիկ, վորի անունը սարսուռի մեջ էր գցում թշնամիներին, վորի խոսքերը, ասես հատո՛ւ սուր, կործանարար ուժով ջարդուփշուր եյին անում իմ կասկածները:

Այն յերեկոն չի՛ ջնջվի հիշողութիւնիցս: Յես չեմ մոռանա այդ միտինգը աղոտ լուսավորված դահլիճում, վորտեղ մեծ մարդու խոսքերը կոչ եյին անում մարդկանց սրտերին, ստիպում նրանց յեռալ գայրուցթով, բոցավառում եյին հույսը: Յես չեմ մոռանա Ձերթինակու, «յերկաթե ֆելիքսի», «հեղափոխութեան ասպետի» հմայիչ

պատկերը, հոգուս մեջ խորը մեխված քաջարի ռազմիկի պատկերը՝ անընկճելի կամքով և դեսպի մեծ ճշմարտութիւնն ունեցած ամենահաղթ հալատով, ճշմարտութիւնն, վորը նա համոզված ու հպարտօրէն տանում էր իր առջև՝ վրց, վորպես մարտական դրոշմ<sup>1</sup>:

## XII

Վրանդելչինան—յերեք տարվա ընթացքում մոլեգնող ինտերվենցիոնիստական փոթորիկի վերջին թուխպերից մեկն էր: Հեղափոխական ժողովուրդը և նրա բանակը ցրիվ տվեց այդ թուխպը: Իմպերիալիստական գիշատիչները դաս ստացան: Կրախի յենթարկվելով Խորհուրդների յերկրի վրա կատարած գինված արշավանքներում, նրանք հույս ունեյին, վոր իրենց կհաջողվի ուրիշ ճանապարհներով, առաջին հերթին տնտեսական ստրկացման ճանապարհով, յեթե վոչ տապալել խորհրդային իշխանութիւնը, դոնե չեղել նրան լենինյան ուղուց: Նրանք հույս եյին դրել այն բանի վրա, վոր աղքատացած ու քայքայված յերկիրն ուժ չի ունենա կռիվելու իր տնտեսական անկախութեան համար: Այդ հաշիվներում բուրժուազիան հուսախաբվեց, թեպետև մի յերկրի համար, վորին առանց այն ել արյունաքամ եյին արել իմպերիալիստական պատերազմի տարիները, ինտերվենցիան շատ թանգ նստեց: Թշնամին գործում էր սրով ու հրով: Տուժեցին ամբողջ քաղաքներ ու գյուղեր: Կրճատվեց ցանքերի տարածութիւնը, վոչընչացվեց անասունը: Փարբիկաները, գործարանները, հանքահորերը և յերկաթուղիները խիստ ավերված եյին: Տընաեսութեան վերականգնման հարցը դարձավ բանվորների ու գյուղացիների պետութեան կյանքի հարցը:

<sup>1</sup> БАРДИН, Жизнь инженера, стр. 87—90. Изд. «Молодая гвардия», 1938 г.



Վերջնականապես ջախջախելով Վրանգելին, Խորհրդային յերկիրը վերջապես, կարողացավ սկսել ամբողջ ուժով ֆրագործել իր ստեղծագործական խնդիրները՝ զարգացնել մասսաների այն վիթխարի ստեղծագործությունը, վորը նախկին հետամնաց, աղքատ, անուս ցարական Ռուսաստանը վերածեց հզոր, ինդուստրիալ տերության, վորն արդեն առաջ է անցել բոլոր յեվրոպական պետություններից և պատմության մեջ չտեսնված տեմպերով առաջ է խոյանում աշխարհում առաջին տեղը բռնելով:

Այդ վերածնման մեջ, խորհրդային տնտեսության այդ ծաղիկման մեջ փոքր դեր չխաղաց Ֆ. Ե. Չերժինսկին: Կուսակցությունը նրան նշանակեց ժողովրդական տնտեսության այն ժամանակ ամենահետամնաց, ամենաավելած, բայց միաժամանակ և ամենակարևոր տեղամասում՝ տրանսպորտում աշխատելու:

Պատերազմը միշտ ամենից ավելի ծանր անդրադառնում է տրանսպորտի վրա: Թշնամին, նահանջելով, քանդում է ճանապարհները, վորպեսզի կասեցնի ու դժվարացնի հետապնդող բանակի առաջխաղացումը: Քաղաքացիական պատերազմի ու ինտերվենցիայի ժամանակ թշնամիները հրդեհում էին կայարանները, քարուքանդ անում ջրհանոցները, պայթեցնում կամուրջները: Սպիտակ-լեհերը, նահանջելով, քարուքանդ էին անում վոչ միայն յերկաթուղիները, այլև խճուղիները: Տրանսպորտ թափանցիցին նախկին ցարական չինովնիկներից յելած կաշառակերներ, սպեկուլանտներ, պարկավորներ (мешочники): Հաճախ բեռը փոխադրում էին միայն կաշառքների ոգնությամբ... Անհայտանում էին փակուղիներ մտցված վազոնները: Բոլոր կենտրոնական կայարաններում առաջացել էին «չոզեքարչային զերեզմանոցներ»: Գնացքները հաճախ կանգ էին առնում վառելիքի բացակայության պատճառով, և դնացքով մեկնող ուղևորներն իրենք էին դնում

փայտ գտնելու... Յերկաթուղային ճանապարհների վրա կատարվող հափշտակումները լրացնում էին տրանսպորտի ծանր վիճակը:

Տրանսպորտում դալամական քաղաքականություն էին անցկացնում Տրոցկին և նրա արբանյակները: Նրանք տրանսպորտը վերջնական անկման հասցրին:

Յերկրի անցումը խաղաղ տնտեսական շինարարության ուղևորի վրա, առանձին ստիպողականությամբ պահանջում էր տրանսպորտի վերականգնումն ու բարձրացումը: Յեթե պատերազմի տարիներին տրանսպորտը կոչված էր ամենից առաջ ծառայելու պաշտպանության նպատակների համար, թիկունքի և ֆրոնտի միջև կապ պահպանելու համար, ապա ժողովրդական տնտեսության վերականգնման՝ խաղաղ աշխատանքին անցնելու ժամանակաշրջանում տրանսպորտի առաջ առաջին պլան էին քաշվում նոր խնդիրներ: Նա պետք է դառնար յերկրի տնտեսական կյանքի գլխավոր նյարդը, դառնար քաղաքի և գյուղի, արդյունաբերության և հողագործության միջև, մեր մեծ հայրենիքի տարբեր մարզերի միջև հաստատվող կապի նյութական հենարանը:

Կուսակցությունը գերազանցորեն գիտակցում էր, վոր առանց տրանսպորտը վերականգնելու չի կարելի իրագործել յերկրի տնտեսական վերածնման խնդիրը:

1921 թվին Ֆելիքս Եդմունդովիչը նշանակվեց հզոր-գակցության ճանապարհների ժողովրդական կոմիտարի պոստում: Այդ մի մարդ էր, վոր վայելում էր բանվոր դասակարգի և յերկրի բոլոր ազնիվ մարդկանց անսահման վստահությունը՝ թե՛ շնորհիվ Համառուս. Ս.Հ. -ի դեկավար յեղած ժամանակ տարած իր աշխատանքի և թե՛ շնորհիվ բանվորների աշխատանքի ու կենցաղի մասին ունեցած իր մշտական հողացողությունների: Նեպի սկզբին Չեր-ի մշտական հողացողությունների: Նեպի սկզբին Չեր-ի մշտական հողացողությունների դրության բարելավման հանձնաժողովը, վորձելով միջոցներ գտնել նրանց



այդ ժամանակվա շատ ծանր գրությունը թեթևացնելու համար: Ինչո՞ւ ասես չէր գրադվում նա այն ժամանակ: Գործարանների համար հայթայթում եր կարտոֆիլ, ձեռք եր բերում վորլա (ձուկ), կանոնավորում մատակարարումը:

Հաղորդակցության ճանապարհների աղնիվ աշխատողները—թե՛ բանվորները և թե՛ մասնագետները—մեծ ուրախությամբ ընդունեցին Ձերթինսկու նշանակումը տրանսպորտի ղեկավարի պոստում: Բանվորները, և առաջին հերթին կոմունիստ-յերկաթուղայինները, ղիտակցում էյին, թե՛ տրանսպորտն ընդհանրապես, և մասնավորապես ավյալ մոմենտում, ինչպիսի վիթխարի դեր է խաղում: Բայց յերկաթուղային բանվորների մի մասը դեռևս վոչ բավարար գիտակցականությամբ եր վերաբերվում տրանսպորտի առողջացման ուղղությամբ տարվող աշխատանքին: Այդպիսի վերաբերմունքի համար վոքը մեղք չէր ընկնում յերկաթուղայինների ու ջրային տրանսպորտի աշխատողների միացյալ միության—Յեկտրանի—ղեկավարների վրա, վորտեղ դալաճան Տրոցկու գործակալներն ամեն ինչ անում էյին, վորպեսզի քայքայեյին պրոֆմիութենական շարժումը տրանսպորտում:

Ձերթինսկին իրեն հատուկ խանդավառությամբ ու կրքոտությամբ լծվեց Հաղորդակցության ճանապարհների ժողովրդական կոմիսարիատի աշխատանքին, ցարիզի, իմպերիալիստական ու քաղաքացիական պատերազմների ծանր ժառանգությունը լիկվիդացիայի յենթարկելուն: Նա իր հետ տրանսպորտ բերեց աշխատանքի լենինյան-ստալինյան մեթոդներ՝ խորը կուսակցականություն, հոգաբորություն մարդկանց մասին, ոպերատիվություն, յերկաթե կարգապահություն:

Ձեռնամուխ լինելով իրեն մինչև այդ միանգամայն անձանթ աշխատանքին, Ձերթինսկին ամենից առաջ ինքն

սկսեց հիմնավորապես ծանոթանալ նրա հետ՝ թե՛ գրքերով և թե՛ յերկաթուղային բանվորների ու մասնագետների հետ ունեցած գրույցներով:

Յերբ 1921 թվի վերջին Ձերթինսկին յեկավ Ոմսկ, Ոմսկի յերկաթուղու կոմիսարը նրան ղեկուցում ներկայացրեց ճանապարհի գրության մասին և նրանից ցուցումներ խնդրեց:

—Դուք իդուր եք կարծում,—պատասխանեց նրան Ձերթինսկին,—վոր յես կարող եմ ցուցումներ տալ ձեզ: Յես յեկել եմ ծանոթանալու տրանսպորտի հետ և ինքս ցուցումներ եմ ուղելու մի ամբողջ շարք հարցերի մասին, վորոնցից դեռ շատ քիչ եմ հասկանում:

Նա դեռ այն ժամանակ չկարողացավ հասկանալ տրանսպորտի աշխատանքի բոլոր ղետալները, բայց, լինելով իսկական մարքսիստ-լենինյան, Ձերթինսկին հաղորդակցության ճանապարհների ժողովրդական կոմիսարի պոստում իր տարած աշխատանքի առաջին իսկ որից, իրեն պարզ հաչիվ եր տալիս, թե իր առաջ կանգնած հիմնական խնդիրը հանգում է այն բանին, վոր տրանսպորտի աշխատանքն ի սպաս դնի յերկրի ամբողջ ժողովրդական տնտեսությանը, աշխատի—հասնել այն բանին, վոր բոլոր տընտեսական հիմնարկները տրանսպորտին վերաբերվեն, վորպես մի կադմակերպության, վորի կանոնավոր գործելուց են կախված իրենց սեփական հաջողությունները: Յեվ, սովորելով այդ գործը, վոր նոր եր իր համար, նա ուսումնասիրում եր վո՞չ միայն տրանսպորտի աշխատանքը, այլև տնտեսության այն բոլոր ճյուղերը, վորոնց հետ տրանսպորտն անմիջականորեն կապված եր՝ վառելանյութը, մետաղը և այլն:

«Այժմ,—ընդգծում եր նա իր նամակներից մեկում,—ամենից ավելի կարևոր է ղետալներում կատարելիք աշխատանքը: Պետք է լրագրերից արտաքսել ղեմագրգիան ու դա-



այդ ժամանակվա շատ ծանր դրուժյունը թեթևացնելու համար: Ինչո՞ւլ ասես չէր զբաղվում նա այն ժամանակ: Գործարանների համար հայթայթում էր կարտոֆիլ, ձեռք էր բերում վոբլա (ձուկ), կանոնավորում մատակարարումը:

Հաղորդակցության ճանապարհների աղնիվ աշխատողները—թե՛ բանվորները և թե՛ մասնագետները—մեծ ուրախությամբ ընդունեցին Ձերթինսկու նշանակումը տրանսպորտի ղեկավարի պոստում: Բանվորները, և առաջին հերթին կոմունիստ-յերկաթուղայինները, զիտակցում էին, թե՛ տրանսպորտն ընդհանրապես, և մասնավորապես տվյալ մոմենտում, ինչպիսի վիթխարի դեր է խաղում: Բայց յերկաթուղային բանվորների մի մասը դեռևս վոչ բավարար գիտակցականությամբ էր վերաբերվում տրանսպորտի առողջացման ուղղությամբ տարվող աշխատանքին: Այդպիսի վերաբերմունքի համար վոքը մեղք չէր ընկնում յերկաթուղայինների ու ջրային տրանսպորտի աշխատողների միացյալ միության—Յեկտրանի—ղեկավարների վրա, վորտեղ դավաճան Տրոցկու գործակալներն ամեն ինչ անում էին, վորպեսզի քայքայեյին պրոֆմիութենական շարժումը տրանսպորտում:

Ձերթինսկին իրեն հատուկ խանդավառությամբ ու կրքոտությամբ լծվեց Հաղորդակցության ճանապարհների ժողովրդական կոմիսարիատի աշխատանքին, ցարիքմի, իմպերիալիստական ու քաղաքացիական պատերազմների ծանր ժառանգությունը լիկվիդացիայի յենթարկելուն: Նա իր հետ տրանսպորտ բերեց աշխատանքի լենինյան-ստալինյան մեթոդներ՝ խորը կուսակցականություն, հոգացողություն մարդկանց մասին, ուղերատիվություն, յերկաթե կարգապահություն:

Չեռնամուխ լինելով իրեն մինչև այդ միանգամայն անձանոթ աշխատանքին, Ձերթինսկին ամենից առաջ ինքն

ակեսց հիմնավորապես ծանոթանալ նրա հետ՝ թե՛ գրքերով և թե՛ յերկաթուղային բանվորների ու մասնագետների հետ ունեցած զրույցներով:

Յերբ 1921 թվի վերջին Ձերթինսկին յեկավ Ոմսկ, Ոմսկի յերկաթուղու կոմիսարը նրան ղեկուցում ներկայացրեց ճանապարհի դրության մասին և նրանից ցուցումներ խնդրեց:

—Դուք իդուր եք կարծում,—պատասխանեց նրան Ձերթինսկին,—վոր յես կարող եմ ցուցումներ տալ ձեզ: Յես յեկեկ եմ ծանոթանալու տրանսպորտի հետ և ինքս ցուցումներ եմ ուղեյու մի ամբողջ շարք հարցերի մասին, վորոնցից ղեռ շատ քիչ եմ հասկանում:

Նա դեռ այն ժամանակ չկարողացավ հասկանալ տրանսպորտի աշխատանքի բոլոր ղետալները, բայց, լիներով իսկական մարքսիստ-լենինյան, Ձերթինսկին հաղորդակցության ճանապարհների ժողովրդական կոմիսարի պոստում իր տարած աշխատանքի առաջին իսկ որից, իրեն պարզ հաշիվ էր տալիս, թե իր առաջ կանգնած հիմնական խնդիրը հանգում է այն բանին, վոր տրանսպորտի աշխատանքն ի սպաս ղնի յերկրի ամբողջ ժողովրդական տնտեսությանը, աշխատի—հասնել այն բանին, վոր բոլոր տնտեսական հիմնարկները տրանսպորտին վերաբերվեն, վորպես մի կազմակերպության, վորի կանոնավոր դործելուց են կախված իրենց սեփական հաջողությունները: Յեվ, սովորելով այդ դործը, վոր նոր էր իր համար, նա ուսումնասիրում էր վո՛չ միայն տրանսպորտի աշխատանքը, այլև տնտեսության այն բոլոր ճյուղերը, վորոնց հետ տրանսպորտն անմիջականորեն կապված էր՝ վառելանյութը, մետաղը և այլն:

«Այժմ,—ընդգծում էր նա իր նամակներից մեկում,—ամենից ավելի կարևոր է ղետալներում կատարելիք աշխատանքը: Պետք է լրագրերից արտաքսել ղեմագրգիան ու դա-



տարկախոսությունը և տրանսպորտի բոլոր աշխատողներին հրավիրել լրագրի միջոցով ցույց տալու անտնտեսավարության, դժվարության ու պարասպության բոլոր դեպքերը»:

Այդպիսի ուշադիր վերաբերմունք դեպի գործը նա պահանջում էր իր ծառայողներից, այդպիսի պահանջներ նա առաջադրում էր նաև իրեն: Նա, ժողովրդական կոմիտեան, 1922 թվի նոյեմբերին գնաց քաղաքային կայարանը, վորպեսզի ստուգի, թե ինչպես է կատարվում տոմսերի վաճառքը:

Ֆելիքս Եղմունզովիչը պարզում է.

«Մեկնել ցանկացողները գրվում են ձեռներեց ուղևորներից մեկի մոտ, գալիս են յերեկոյան ժամի տասին և բացի դրանից առավոտյան, առավոտվա ժամի հինգին՝ փոխատուգման համար: Ով չի հայտնվել, նա հերթը կորցնում է: Դրամարկից բացում են առավոտվա ժամի տասին, և առաջուց յերբեք հայտնի չէ, թե քաղաքային կայարանը քանի տոմս ունի: Հերթ գրողը ուղևորներից ստանում է հինգ տոկոսը: Այդ յես յերեկ իմացա ինքնս վերջում կանգնողներից»:

Քննելով այսպիսի անկարգությունների պատճառները, Չերտինսկին պահանջում է բացատրել. 1) ո՞վ և յե՞րբ է վորոշում, թե քանի տոմս կլինի քաղաքային գրամարկի տրամադրության տակ, ինչի՞ց և ումնի՞ց է այդ կախված. ի՞նչպես ժամանակին տեղեկացնել յեկող ուղևորներին յեղած տոմսերի քանակի մասին (բոլորի համար մատչելի հայտարարությունը). 2) ո՞վ և ինչպե՞ս է ստուգում, վոր տոմսերի վերափաճառում չլինի, ո՞վ է վաճառման ժամանակ ստուգում, վոր գրամարկի միջոցով վաճառվեն բոլոր տոմսերը և վոչ թե նրանց մի մասը, իսկ մնացածները՝ կողմնակի ձեռով: 3) վո՞րքան է տոմս գնել ցանկացողների (ուղևորների) քանակը և ընդամենը ի՞նչքան տոմս կա ամբողջ շաբաթվա ընթացքում՝ ըստ որերի, ըստ յուրա-

քանչյուր ուղղության առանձին. 4) միաժամանակ գնացքների ստուգումը—մնացել էն արդյոք նրանց մեջ ազատ տեղեր և ի՞նչպիսի խտացում կա. 5) վո՞ր ճանապարհները չեն կարող փոխադրել բոլոր ցանկացողներին, քանի՞սն են մնում (կայարանում), ինչո՞ւ և ի՞նչպիսի միջոցներ են ձեռք առնվել ու ձեռք առնվում բեռնաթափման համար, և այլն:

Վառելանյութի սուր կրիզիսի ժամանակ նրա պահանջով ինժեներ-մասնագետները նրան ներկայացրին շոգեկառքի փորձաշարժման վրա գործադրվող ածխի ծախսման նորման: Չերտինսկին վճռեց նրանց ներկայացրած տվյալները ստուգել պրակտիկայում: Նա ոգովեց Ոմսկի մի մեքենավարի առաջարկից, վորպեսզի այդ ստուգումը կատարի: Մեքենավարը նստեց շոգեկառք և Ոմսկի յերկաթուղային հանգուցում փորձաշարժային աշխատանք էր կատարում գրեթե քառասունութ ժամվա ընթացքում անընդհատ, խնամքով նշանակելով վառելանյութի ծախսումը և ձեռք առնելով նրա անտեսման բոլոր միջոցները: Նրա ստացած տվյալները ցույց տվին, վոր մասնագետների աեսական հաշվարկումները խիստ չափազանցված են: Խնամքով ուսումնասիրելով այդ տվյալները, Չերտինսկին գեկուցում արեց յերկաթուղայինների ժողովում և առաջարկեց վառելանյութի ծախսման պակասեցրած նորմա նախկինի համեմատությամբ, վորն և ընդունվեց:

Պահանջկոտ լինելով դեպի իրեն՝ Չերտինսկին կուսակցության մյուս անդամներին էլ պահանջ էր ներկայացնում՝ իրենց ամբողջ աշխատանքը, իրենց բոլոր զխտելիքները, իրենց բոլոր ընդունակությունները նվիրել կուսակցության գործին: Յերբ տրանսպորտում կոմիտեաների ինստիտուտը վերացվեց, Չերտինսկին ձանապարհային ժողովատի լիազորներին ցուցումներ էր տալիս, վոր այդ վերացումը «վոչ մի ձեռով չպետք է նշանակի կոմունիստների գերի»



նվազեցում: Ընդհակառակը: Առանց դործին նվիրված կոմունիստների տրանսպորտը կկործանվի» (1922 թվի ապրիլի 16-ի նամակը):

Հինգ որ անց—մի այլ նամակում—նա նորից է դնում այդ հարցը. «կենտրոնին արած իմ գեկուցման մեջ (այն ուղարկում եմ ձեզ) յես նշեցի այն դերը, վորը կոմունիստները պետք է խաղան տրանսպորտում: Այդ դերն ինչ էլ վոր լինի պետք է ապահովել,—ներանք պետք է լինեն ճանապարհի տերերը... Վոչ մի կոմունիստ չպետք է տրանսպորտից հեռանա—ահա՛ մեր լոզունգը»:

Ձերժինսկու համար դժվար չեր աշխատանքի դրավել կոմունիստներին: Ավելի դժվար էր բանը մասնագետների հետ:

Նա, վոր Հոկտեմբերից հետո սկզբի ժամանակում գլխավորում էր սարտատի դեմ մղվող պայքարը, նրան չճանաչող, բայց առավ սաբոտաժին մասնակցած մասնագետների մեջ այն պատկերացումը կար, վոր Ձերժինսկին նշանակվել էր ժողկոմի պոստում՝ իբր թե հատկապես իրենց հետ դատաստան տեսնելու համար: Մասնագետների առաջին հանդիպումները Ձերժինսկու հետ, նրանց համար կատարյալ անսպասելիություն էին: Դուրս յեկավ, վոր սաբոտաժի դեմ պայքարողը պայքարում է մասնագետակերություն (специество) դեմ: Չկար մի այնպիսի ազնիվ մասնագետ, վորը Ձերժինսկու կողմից դործուն պաշտպանություն չդաներ:

Ձերժինսկու, վորպես հաղորդակցություն ճանապարհների ժողկոմի, խոչորագույն ծառայություններից մեկը՝ նրա անակցությունը մասնագետների ու բանվորների միջև ձևաք բերված մերձեցումն էր:

«Տնտեսավարները պետք է իմանան,—ասում էր նա,— վոր վոչ մի ձեռնարկում, վոչ մի քիչ թե շատ խոչոր հարց չի կարող կենսագործվել, չի կարող անհրաժեշտ արդյունք

ներ առլ, յեթե այն անց է կացվում բանվորական մասսայի գլխի վրայով, յեթե այն չի ըմբռնված բանվորական մասսայի կողմից»:

Նա զայրանում էր, յերբ տեղեկանում էր, վոր վոմանց չարտրկությունների, հանցանքների և բյուրոկրատիզմի հետևանքով աշխատանքի արդյունքներն ավելի քիչ են, քան կարող էլին լինել:

1923 թվի հունվարի 13-ին Ձերժինսկին գրում էր.

«Մեզ մոտ ճանապարհների վրա հափշտակումների և անտնտեսավարության բնագավառում ամենուրեք սարսափելի դրություն է տիրում: Այսօր կարգացի Մոսկվայի յերկաթուղային հանդուցյի ճանապարհների պահեստների ռեվիզիայի գեկուցումը: Հափշտակումներ վազոններից, հափշտակումներ դրամարկներում, հափշտակումներ պահեստներում, հափշտակումներ կապալների ժամանակ, հափշտակումներ մթերումների ժամանակ: Պետք է ամուր ջղեր և կամք ունենալ, վորպեսզի հաղթահարվի սանձարձակություն այդ ծովը»:

Ձերժինսկին ուներ ամուր ջղեր և կամք: «Ժողովրդական սեփականությունը հափշտակողներին և զողացողներին—դժություն չկա» վերնագրով հատուկ դիմումի մեջ նա գրում էր.

«Այն ժամանակ, յերբ աշխատույնը ժողովրդի բոլոր ջանքերն ուղղված են իլուզման և մոտեցող տարերային աղետի—սովի դեմ պայքարելուն, այն ժամանակ, յերբ թանգ է ձեռք բերված և կարիքավորներին ու սովածներին հասցված հացի յուրաքանչյուր կտորը և ցորենի յուրաքանչյուր փուլը՝ տուժած Պովոլժյեյի ընդարձակ դաշտերը սերմանելու համար, դտնվում են պարագլխաներ ու անըդգամներ, վորոնք ժողովրդական բարիքը հափշտակում են վազոններից, համբարանոցներից և պահեստներից... Դաժան պատիժներ ընդհուպ մինչև պատժի գերագույն չափը—



զնդակահարութիւն—կգործադրվեն վոչ միայն տրանսպորտում տեղի ունեցող հափշտակման մեջ անմիջական մասնակցութիւն ունեցողներին նկատմամբ, այլև հափշտակմանն ուղեղներին ու գողացածն առնողներին նկատմամբ:

Խորհրդային իշխանութիւնը բոլոր ազնիվ քաղաքացիներին կոչ է անում, սրայքարել հանրապետութիւն բարեկեցութիւնը քայքայող մակարույծ տարրերին, գողերին ու բանդիտներին դեմ:

Տրանսպորտային բոլոր ազնիվ աշխատողները պէտք է այդ պայքարին մասնակցեն պատժիչ որդանների հետ միասին:

Զգաստ յեղեք և Բանլորա-Պյուղացիական իշխանութիւն հետ միասին անխնա կովեցեք զայլերին ու ժողովրդական սեփականութիւնը հափշտակողներին դեմ»:

Բուռն զայրույթ է հնչում այս հրամանի յուրաքանչյուր խոսքում: Բոլոր ազնիվ աշխատավորներին ուզված Չերժինսկու կոչը՝ ոգնել խորհրդային իշխանութիւնը, նրա սեփական անդուլ սրայքարն ու յերկաթի աշխատանքն իրենց արդունքները ավին և տրանսպորտն ազատեցին նրան խայտառակող աղետից:

Վոչ սակաս յեռանդով եր պայքարում Չերժինսկին անտնտեսավարութիւն, թափթիւածութիւն, պրոդուկտներին դեմ: Կինելով բանվոր դասակարգի բարեկամ, որդանապետ նրա հետ ձուլված՝ նա յերբեք քարչ չէր գալիս հետադեմ տրամադրութիւններին պոչից, բոլշևիկներն բանվորներին յերեսին ճամարութիւնն ասում, յեթե նրանք չեղվում էյին ուղիղ ճանապարհից:

Կինում էյին դեպքեր, յերբ յերկաթուղային բանլորները զալիս էյին Չերժինսկու մոտ, դժոխութիւն հայտնելով թե՛ ցածր աշխատավարձի մասին և թե՛ արտադրական իրբ թե բարձր նորմաների մասին: Այդպիսի դեպքերում նա հանդիստ կերպով նրանց ծանոթացնում եր տրանսպորտի

դործերի դրութիւն հետ, ապացուցում աշխատանքի արտադրողականութիւնը բարձրացնելու անհրաժեշտութիւնը և աշխատավարձը մեծացնելու անհնարինութիւնը՝ առանց տրանսպորտի վերելքի մեջ իրական հաջողութիւններ ձեռք բերելու: Յեւ բանվորներն իրենք էյին հրատարկում իրենց պահանջները, նրա հետ միասին քննարկում էյին տրանսպորտի առողջացման համար խորհրդային կառավարութիւն ձեռնարկած միջոցները և նրանց իրականացման յեղանակները: Այդ մեթոդներով եր պայքարում Չերժինսկին տրանսպորտի համար ամենակրիտիկական մի ժամանակում, յերբ նրա արտահայտութիւն, հարցը սուր կերպով եր դրված՝ «Կ'ամ կապիտուլացիա արտասահմանյան կապիտալի ստաջ, կ'ամ տրանսպորտի ու տրանսպորտային աշխատողների հարմարեցումը ՌԽՖՍՀ-յում յեղած ռեսուրսներին»:

Ուղղակի, դեմ առ դեմ, բոլշևիկներն եր դնում Չերժինսկին հարցը, չմեղմացնելով իրերի իսկական դրութիւնը: Այդ բոլշևիկյան ճամարութիւնը եր նա նվաճում մասսաների վստահութիւնն ու համակրանքը:

«Ամենադժվարին պարագայում,—գրում եր նրա մասին հանդուցյալ Վ. Մենժինսկին,—ամենացալուտ հարցի առթիվ նրան հանդիպում ու ճանապարհ եր դնում բանվորների անվերջ ուժացիան, վորոնք լսում էյին իրենց Չերժինսկու խոսքը, թեկուզ և այն հարցի մասին, թե պետութիւնը կարողութիւն չունի նրանց աշխատավարձն ավելացնելու:

Նա, վորպես անտեսալար, ռացիոնալիզացիայի կողմնակից, աշխատանքային կարգապահութիւն քարոզիչ՝ բանվորական վիթխարի ժողովներում կարող եր ապացուցել ֆարքիկաններում կիրառելիք բանվորների կրճատման անհրաժեշտութիւնը և շատ հաճախ ավելի հեշտ, ավելի անզառնալիորեն եր հաջողութիւն հասնում, քան պրոֆեսիո-



նաշխատները: Ձերթինսկին ասաց—ուրեմն այդպես է: Բան-  
վորները սերն ու վստահությունը դեպի նա անսահման  
եյին»:

Ձերթինսկին, ինչպես միանգամայն ճիշտ է նկատեց Վ.  
Մենստինսկին, ուներ «մարդկային հոգու բոլոր գիշարաձևերի  
խորը ըմբռնողություն»:

Բերենք մի բնորոշ դեպք:

Մի անգամ հանդուցային կայարաններից մեկում կու-  
տակվեցին Դոնբասի համար անտառանյութ տանող միջանի  
գնացքներ: Ձերթինսկին ստիպված յեղավ ինքը յերկաթգիծ  
գնալ կուտակի պատճառները պարզելու համար: Քննության  
ժամանակ սրբովեց, վոր այդ թանդագին անտառանյութի  
միջանի վազոնները թալանվել են: Կայարանի պետն արդա-  
րանում էր նրանով, թե տուն մեկնող գորացրված կարմիր-  
բանակայինները, կայարանում վառելիք չգտնելով, վազոն-  
ների կնիքները պոկեցին և անտառանյութն ոգտագործեցին  
վորպես շոգեկառքի վառելիք: Այս մասին նա արձանագրու-  
թյուն է կազմել: Նա ինչ մեղք ունի: Նրա տրամադրու-  
թյան տակ ուժեր չկային, վորպեսզի արգելք հանդիսանար  
դրան:

Այն հարցին, թե ինչու նա անտառանյութի մեկ վազո-  
նը վորպես վառելիք ավելի առաջ չի ոգտագործել՝ ամբողջ  
գնացքը Դոնբաս ուղարկելու համար, վորպեսզի խուսափեր  
ամբողջ կազմի թալանումից ու կորստից, հետևեց մի պա-  
տասխան.

—Այդպիսի հրաման չի յեղել:

Տեղեկանալով այդ պատասխանի մասին, Ձերթինսկին  
հանկարծ բռնեց.

—Կանչեցեք նրան ինձ մոտ:

Ակնհայտորեն զսպելով իրեն, Ձերթինսկին պետին իր  
կուպեն հրավիրեց: Հարևան սենյակում գտնվող Ձերթին-  
սկու ուղեկիցները փոթորիկ եյին սպասում, բայց քսան ը-

պեյից հետո կուպեյից, հանգիստ ու ժպտալով, ընդհանուր  
սալոնը դուրս յեկան տուգանված պետն ու Ձերթինսկին:  
Յերկաթուղայինը հիացմունքով նայում էր Ձերթինսկուն:

Յերբ կայարանի պետը գնաց, Ձերթինսկին շրջապա-  
տողների զարմացկոտ հարցերին ցավալիցական ժպիտով  
պատասխանեց.

— Խեղճացա՛՞՞ մարդիկ: Նրանց մեջ ճնշել են միաքը,  
ամեն տեսակ նախաձեռնություն, ինքնուրույնություն և  
ինքնագործունեյության փոքրագույն արտահայտում և  
մարդկանց դարձրել են անշունչ մեքենաներ: Չարանենդու-  
թյուն, չարամտություն չի յեղել: Այժմ իմ բացատրու-  
թյուններից նա հասկացավ, թե ինչումն է բանը և ինչ է  
նրանից պահանջվում... Միաքը զարթնեց: Իսկ նա յերևում  
է, լավ մարդ է...

Յեվ պարզվեց, վոր իրոք լավ մարդ է: Հետևյալ որն  
իսկ ամբացումները անտառանյութով բեռնված գնացքներե  
արդեն Դոնբասի ճանապարհին եյին, իսկ մի շարաթվա ըն-  
թացքում յերկաթուղային ամբողջ հանդուցը դատարկ-  
վեց:

Այդ միակ դեպքը չէ:

«Ձերթինսկու զինակիցները,—նշում է Վ. Մենստինսկին,—  
գործունեյության չափազանց մեծ ասպարեզ ունեյին իրենց  
աշխատանքի մեջ: Այդ բացատրվում է նրանով, վոր, վորպես  
խոշոր, տաղանդավոր կազմակերպիչ, նա վիթխարի նշանա-  
կություն էր տալիս աշխատողների ինքնագործունեյությա-  
նը և այս պատճառով համարյա միշտ գերազասում էր վե-  
ճը վերջացնել այս խոսքերով՝ «Արեք ձեր ուղածի պես»,  
բայց դուք պատասխանատու յեք հետևանքի համար»: Դրա  
փոխարեն նա առաջին ուրախացողն էր ամեն մի խոշոր  
հաջողության համար, վորը ձեռք էր բերվում այն մեթոդով,  
վորի դեմ նա պայքարում էր: Խորհրդային հիմնարկների  
պետերից ու կազմակերպիչներից քչերն են իրենց ստորա-



դըյալներին ասում. «Դուք իրավացի եյիք, յես սխալվել եմ»: Դրանով և բացատրվում նրա գրեթե մոգական ազդեցությունը խոշոր անխնիկական մասնագետների վրա, վորոնք չեն կարող աշխատել վորպես լարված մեքենա սահմանափակվելով պետերի հրամանների կատարումով միայն: Բոլորին հայտնի յե նրա՝ աշխատանքի վողեչնչելու կարողությունը, այն ել ստեղծագործ աշխատանքի՝ նույնիսկ մեզ խորթ դասակարգերի ներկայացուցիչներին»:

Հենվել մասսայի վրա, աջակցել ազնվորեն աշխատող մասնագետներին, խրախուսել բանվորների դյուտարբությունը, մարդկանց մեջ արթնացնել միտքը, նախաձեռնությունը, ինքնագործունեյությունը, հող տանել մարդու մասին, գործին չնայել ապարատի աչքերով, այլ անձամբ ստուգել աշխատանքը—ահա Ձեր ժինսկու մեթոդները:

Այդ մեթոդներով Ձեր ժինսկին վերականգնեց արանսպորտը, ստիպեց աշխատել անկենդան դարձած յերկաթուղային ապարատին:

Ձեր ժինսկու ղեկավարությամբ յերկաթուղային տրանսպորտը հասավ մինչպատերազմյան մակարդակին: Տրանսպորտի վերականգնման խնդիրը լուծվեց:

### XIII

1924 թիվ... Լենինի մահը... Մեծագույն դժբախտություն պատահեց կուսակցությանը, բանվոր դասակարգին, ամբողջ աշխարհի աշխատավորությանը:

Լենինը մեռավ, բայց լենինիզմը կենդանի՝ յե—հնչում էր, վորպես կոչի լողունք, Խորհուրդների ամբողջ Յերկրում: Լենինի հավատարիմ աշակերտը, Լենինի ստեղծած կուսակցության հանձարեղ առաջնորդն ու ղեկավարը, նրա գաղափարների արժանավոր տարածողը— Իոսիֆ Վրասարիտովիչ Ստալինը—կուսակցության անունից, ամբողջ ժողովրդի անունից սրբազան յերդում տվեց՝ շարու-

նակելու Լենինի մեծ գործը և հասցնելու այն մինչև հաղթական վախճանը:

Դժվար ժամանակ էր այդ: Կուսակցության ներսում թաղնված թշնամիները, այժմ արդեն մերկացված և վոչընչացված արոցկիների, գինովյեմների, կամենեյների, բուխարինների և նրանց նողկալի գործակիցների ստոր հակահեղափոխական խումբը, Լենինի մահից հետո կատաղի գրոհների գիմեցին կուսակցության դեմ, վորձում եյին քայքայում մտցնել բոլշևիկյան կուսակցության շարքերում, պառակտել կուսակցությունը, վարակել նրան անհավատությամբ ԽՍՀՄ մեջ սոցիալիզմի հաղթության գործի նկատմամբ:

Այդպիսի մոմենտին կուսակցությունը Ձեր ժինսկուն առաջ քաշեց Ժողովրդական անտեսության դերագույն խորհրդի նախագահի պոստում:

Վորպես բոցաշունչ բոլշևիկ, Լենինի ու Ստալինի հավատարիմ գինակից, Ձեր ժինսկին ղիտակցում էր, վոր նրա նշանակումը այդպիսի պատասխանատու պոստում հավասարազոր և կուսակցական հրամանին՝ իրականում ապացուցելու կուսակցության դժի ճշտությունը, իրականում տապալելու Տրոցկու՝ հակահեղափոխական թեորիան մեկ յերկրում սոցիալիզմի կառուցման անհնարինության մասին:

Ձեր ժինսկու խնդիրն էր՝ թե՛ վորպես բոլշևիկի և թե՛ վորպես ԺՏԳԽ-ի նախագահի՝ իրականում ապացուցել, ժողովրդական անտեսության վերականգնման ճանապարհով ապացուցել, վոր Լենինի—Ստալինի կուսակցության գործը վոչ միայն կարող է իրականացվել, այլև վոր չկա մի այնպիսի ուժ, վորը կարողանար խոչընդոտ ստեղծել մեր մեծ յերկրի դեպի սոցիալիզմ տանող ճանապարհին:

Վորպես վորձված հեղափոխական, բոլշևիկ, նա գիտեր, թե ինչպես պետք է հասնի այդ նպատակին:



Նա հավատարիմ էր մնում այն մեթոդներին, վորոնք կիրառում էր թե՛ վորպես Համառուս. Ա.Հ.՝ (ВЧК) նախադահ և թե՛ վորպես հաղորդակցության ճանապարհների ժողկոմ՝ հենվել մասսաների վրա, խրախուսել և առաջ քաշել իրենց աշխատանքում աչքի ընկնող աշխատողներին, արթնացնել միտքը, նախաձեռնությունն ու ինքնագործունեյությունը, հասնել աշխատանքի մաքսիմալ արտադրողականության, խիղ դրա հետ միասին հողալ աշխատողների համար այնպիսի պայմաններ ստեղծելու մասին, վորոնց անկայության դեպքում նրանք կարող են մաքսիմալ յեռանդ ծավալել:

Բայց այդ դեռ բոլորը չէ: Կոմունիզմի դադարիարների իրականացման նկատմամբ ունեցած իր հավատով Ձերթինսկին հավատ էր ներշնչում ուրիշներին, արժատախիլ էր անում մտքի քարացածությունը, ուտախնան, թափթփվածությունը. վո՛չ թե թղթով, վո՛չ թե շրջաբերականներով, վո՛չ թե կարգապահական տույժերով էր Ձերթինսկին նպատակին հասնում, այլ իր աշխատանքով, իր որինակով:

Իր ժամանակին, յերբ Ձերթինսկին նոր էր մտել հեղափոխական ուղին, նրա դեվիզն էր. «Ինքդ սովորիր և սովորեցրու ուրիշներին...» Նա դրան հավատարիմ մնաց մինչև իր կյանքի վերջը:

1924 թվի փետրվարին, յերբ Ֆելիքս Եղմունդովիչը նշանակվեց ԺՏԳԽ-ի նախադահ, նա մի նամակում ասում էր.

«Առայժմ յես պետք է սովորեմ,—ուստի յես խնդրում եմ ձեզ հիշել այդ և ողնել ինձ այդ բանում: Նայել իր ապարատի աչքերով—այդ մահ է ղեկավարի համար»:

Յեվ նա սովորում էր, խորամուկս լինելով իրեն հանձնարարված գործի բոլոր դետալների մեջ, տիրապետելով տնտեսությանը: Այդ ամուր հիմք էր սալիս յերկրի տնտեսական կյանքի ոպերատիվ ղեկավարության համար:

Բաղմաթիվ յելույթներին մեկում նա դիմում է բանվորներին.

«Ընկե՛ր պրոֆեսիոնալիստներ, ընկե՛ր բանվորներ, դադարահի մոտ աշխատողներ: Մենք ձեզ միքիչ հուպ ենք տվել, բայց դուք ել միքիչ հուպ տվեք մեզ, դուք ել ուղեղներդ շարժեցեք: Դուք աշխատում եք դադարահների մոտ. ասացեք, ի՞նչպես բարելավենք արտադրության կադմակերպումը, ստիպեցեք, վոր այդ անեն տնտեսավարները, վորոնք ամեն բանի չեն կարող հասնել: Դուք դիտեք, վոր մեր ապարատը թույլ է, մենք նրան բավարար չափով չենք դաստիարակել, մեզ չի հերիքում մարդկանց կողմը, վորպեսզի համապատասխան ընտրությամբ կադմենք այն, իսկ դուք ունեք Փարրիկա-գործարանային կոմիտեներ, բանվորական բջիջներ, արտադրական խորհրդակցություններ, դուք ուղիներ ունեք այն բանի համար, վորպեսզի արտադրությունը բարելավեք, ոպիտոնալացնեք: Յեթե դուք կարծում եք, վոր մեր տնտեսավարները մենմենակ, ուղեղներդ շարժելով, կարող են վորեք բան տալ, դուք սխալվում եք: Միայն յեթե ձեզ հետ միասին շարժենք ուղեղներս և հենվենք դրա վրա, մենք կկարողանանք ոպիտոնալացնել արտադրությունը»:

Ձերթինսկին մշտապես կոչ էր անում տնտեսավարներին չասհմանադատվել մասսաներին, սովորել մասսաներին:

«Մեր ԺՏԳԽ-ի առաջ կանգնած խնդիրները կարող են հաջողությամբ լուծվել միայն մի պայմանով՝ յեթե այդ խնդիրները դառնան ամենալայն պրոլետարական մասսաների խնդիրները: Ամենալավագույն ձևը պետք է լինեն արտադրական խորհրդակցությունները:

Յես այդ հարցն այժմ համարում եմ մեր հետադադույության հիմնական հարցը: Այն տնտեսավարը, վորը չի



գրավել իր զեկտօրաբաժնի լանդօրները անհեղուկաբար, չի կարող կատարել կուսակցութեան կողմից իր առաջ դրված խնդիրները...

Յեւ յեթե անտեսաւարը չի ճանաչում մասսային, չի կարողանում գառնալ նրա առաջնորդը, չի կարողացել նրա հետ մշտական կենդանի կապեր հաստատել, ապա նա չի կարող լինել վոչ կուսակցութեան լավ անդամ, վոչ էլ լավ անտեսաւար: Մասսայի հետ ունենալիք չլիման հենց այդ ձևը հանդիսանում են արտագրական խորհրդակցութեանները»:

Այդ յերկու մոմենտները—բանվորների ակտիվ մասնակցութեանը արտագրութեան ռացիոնալացման մեջ և զեկտօր-անտեսաւարների մշտական գործարար շիտմը մաստաների հետ,—անհրաժեշտ պայման են հանդիսանում սոցիալիստական անտեսութեան զարգացման համար:

«Ձերթինակին,—նշում է ընկ. Միկոյանը,—անիրա կերպով մերկացնում էր այն ապարատի աշխատանքի թերութեանները, վորը նա յեր գակտվարում, այն գործի թերութեանները, վորը նրան էր հանձնարարված: Նա կարողանում էր ոգտվել բոլշևիկյան ինքնաքննադատութեան գենքից, առանց վորի չի կարելի հաղթանակել:

Նա կարողանում էր միլիոնավոր մարդկանց ոգնութեան կոչել՝ ճեղքվածք լիկվիդացիայի յենթարկելու համար, գործի հաջողութեանը ապահովելու համար, համարձակութեան մերկացնելով նրանց առաջ թերութեաններն ու թուլութեանները, մասնանշելով նրանց հաղթահարման պարզորոշ ճանապարհը:

Նա յերբեք չէր վախենում մասսաներին ճամարտութեան ասելուց, զիտենալով, վոր բոլշևիկյան ճամարտութեանը միշտ հաղթում է»<sup>1</sup>:

Պայքարելով արտագրութեան կազմակերպման մեջ յեղած թերութեանների դեմ, Ֆելիքս Եդմունդովիչը չի սահմանափակվում պաշտոնական շրջաբերականներով կամ հրամաններով: Նա բացատրում է յերեւոյթի նկատմամբ ունեցած իր այս կամ այն վերաբերմունքի պատճառները և դրանով հասնում է հրամանի վոչ թե մեխանիկական, այլ կատարելապես զիտակցական կատարման իր ստորագրյալների կողմից:

Ձերթինակին չէր գաղարում նշալակել լողբերին, հարբեցողներին, գործալիքներին, ուղղակի և բացահայտորեն խտրում էր բանվորների մեջ յեղած հետադեմ արամագրութեաններին—խտորեն հիշեցնելով աշխատանքային կարգադասութեան անհրաժեշտութեան մասին, այն մասին, թե աշխատանքային սրվան կրճատումն ամենևին հիմք չի հանդիսանում աշխատանքի արտագրոգականութեանը ցածրացնելու և այլն:

Իսկ, բանվորներից արտագրական պլանների կատարում պահանջելով, Ձերթինակին բոլոր միջոցները ձեռք էր առնում, վորպեսզի ստեղծվեն այդ պահանջների կատարման հնարավորութեանը յերաշխալորոգ բոլոր պայմանները:

«Մենք, անտեսաւարներս, արեսաների, գործարանների կառավարչութեանների ներկայացուցիչներս, պետք է բոլոր միջոցները ձեռք առնենք, վորպեսզի բանվորին հնարավորութեան տանք նորման կատարել այնպես, վոր իրեն էլ ողուտ բերի—ստում էր նա: Իսկ այդ հնարավոր է միայն այն ժամանակ, յերբ զիրեկտորը, գործարանի կառավարչութեանը, արեսան իրոք հող կտանեն ավայ գործարանի արդյունաբերութեան ռացիոնալ կազմակերպման մասին, տեխնիկայի, ռացիոնալացման ու բարելավման մասին և ամեն տեսակ վերադիր ծախսերի կրճատման մասին: Մեր

<sup>1</sup> А. И. МИКОЯН, Феликс Дзержинский, стр. 36.



լողունդը պետք է լինի աշխատանքի արտադրողական-  
թյան ու աշխատավարձի անպայման բարձրացումը»:

Խորամուկի լինելով յուրաքանչյուր յերևույթի մեջ,  
ուսումնասիրելով այն, տալով ցուցումներ, Ձերժինսկին  
միշտ էր առաջ մի մեծ նպատակ ուներ—յերկրի ամենա-  
արագ ինդուստրացման իրականացումը:

Յերկրի սոցիալիստական ինդուստրացման համար մղ-  
վող պայքարը, սոցիալիզմի հաղթանակի համար մղվող  
պայքարը կուսակցության կենտրոնական խնդիրը դար-  
ձավ: «Մեր յերկիրն ազրարային յերկրից վերածել ինդուս-  
տրիալ յերկրի, ընդունակ էր սեփական ուժերով արտադրե-  
լու անհրաժեշտ սարքավորումը,—ահա թե ինչու՞ն է մեր  
գլխավոր գծի էությունը, հիմքը», մատնանշում էր ընկեր  
Ստալինը կուսակցության XIV համագումարում:

Այն ժամանակ, յերբ ստոր տրոցկիստական դավաճան-  
ներն ու նրանց աջ գործակիցները բոլոր ուժերով և միջոց-  
ներով հակադրում էին ինդուստրացման իրադրոժմանը,  
ընկեր Ստալինի հավատարիմ զինակիցները, նրա անմիջա-  
կան ղեկավարությամբ, ջարդելով բոլոր արգելքներն ու  
խոչընդոտները, իրականացնում էին ԽՍՀՄ-ում հզոր սո-  
ցիալիստական տնտեսություն ստեղծելու մեծ խնդիրը:

Այդպիսի մարդկանցից մեկն էր Ձերժինսկին:

«Մենք պետք է,—ասում էր նա,—ըստ հնարավորու-  
թյան ավելի լայն ու ավելի արագ ընդարձակենք մեր ար-  
դյունաբերությունը: Յեթե մենք չկարողանանք արդյունա-  
բերությունն ընդարձակել այն տեմպով, ինչ տեմպով պա-  
հանջում են բանվորների ու գյուղացիների հարածուն կա-  
րիքները, ապա այն ժամանակ հարցն այնպես կգրվի, ինչ-  
պես մեր մամուլում այն վոմանք դնում են՝ վոր գյուղա-  
տնտեսությունը, էր արտադրանքի մի գգալի քանակը ար-  
տասահման արտածելով, կարողանար արտասահմանից  
պատրաստի շինվածքներ բերել այստեղ»:

Բայց յեթե հարցն այդպես դնենք, իսկ յես կրկնում  
եմ, վոր միքանի ընկերներ հենց այդպես էլ դնում են այն,  
—ապա այդ ի՞նչ կնշանակի մեզ համար: Այդ կնշանակի  
այն, վոր մեր ԽՍՀՄ-ը պետք է վերածվի արտասահմա-  
նյան կապիտալիզմի գաղութներից մեկի, մի կողմից, և,  
մյուս կողմից—պետք է եժան բանվորական ուժ ուղարկի  
արտասահման, ինչպես այդ տեղի յե ունենում այժմ Լե-  
հաստանում: Դուք գիտե՞ք, վոր Լեհաստանից, վորտեղ ար-  
դյունաբերությունն անհամեմատ ավելի բարձր մակարդա-  
կի վրա յեր, քան Ռուսաստանում,—այդ Լեհաստանից  
պետք է արտագաղթեր մինչև 500 հազար բանվոր այն բա-  
նի համար, վոր սպիտակ ստրուկներ դառնան Ֆրանսիայի  
պլանտացիաներում: Ահա այն հետևանքը, վորը պետք է  
ստացվի այդպիսի հարցադրման ժամանակ: Յեթե այն ադ-  
գերի բանվորներն ու գյուղացիները, վորոնք միավորվել  
ու ստեղծել են Խորհրդային Սոցիալիստական Հանրապե-  
տությունների մեր մեծ Միությունը, չեն ցանկանում  
իրենց համար լեհական բանվորների ու գյուղացիների վի-  
ճակը ստեղծել, նրանք պետք է մեզ հետ միասին, մեր կու-  
սակցության ղեկավարությամբ, ուղիներ ու միջոցներ  
գտնեն մեր արդյունաբերությունն ամրացնելու ու ընդար-  
ձակելու համար»:

Վիկսա քաղաքի բանվորների, բանվորուհիների և ծա-  
ռայողների ընդհանուր-գործարանային ժողովին ուղղած  
նամակում նա ասում է.

«Մեր թշնամիների դեմ մղվող սպաքարի գլխավոր և  
ամենադժվարին Ֆրոնտն այժմ անցնում է վոչ միայն  
ՄՊՔՎ-ն (ОГПУ) գծով, այլ ամենից առաջ մեր Խորհրդա-  
յին Սոցիալիստական Հանրապետությունների Միության  
տնտեսական վերածնման ու վերականգնման գծով, այսին-  
քրն, ընկերներ, այժմ դուք ինքներդ եք գրավում մարտա-



կան Փրոնտի ամենազլխալոր ու ամենապատասխանատու տեղամասը:

Վերականգնելով մետաղարդյունաբերությունը, բարձրացնելով աշխատանքի արտադրողականությունը, էժանացնելով ձեռք արտադրանքները, ձեռք խնդիր դնելով հասնել վոչ միայն մինչպատերազմյան, այլև արտասահմանյան նորմաներին ու առաջ անցնել նրանցից, շարունակ բարելավելով բանվորների ու գյուղացիների դրությունն ու կենցաղը, ամրացնելով նրանց անխցելի դաշինքը, զուգստեղծում էք այն, ինչով բոլոր թշնամիների վրա տանելիք մեր վերջնական հաղթանակն անսխալորեն լիովին ապահովված կլինի»:

Վերպես Ստալինի հալատարիմ գինակից՝ Չերժինսկին քաջ անգամ չէր նահանջում կուսակցության կողմից տրված տվյալ առաջադրանքից. ժողովրդական տնտեսության վերակառուցումն անցկացնելու նպատակով ամենից առաջ անհրաժեշտ է ուժերը լարել մետաղարդյունաբերությունը վերականգնելու համար:

«Այժմ վոչ թե վորեւե այլ բան, այլ հենց մետաղարդյունաբերությունն է հանդիսանում,—մատնանշում էր Չերժինսկին,—այն մինիմումը, վորն իրենով վորոշում է մեր ամբողջ ժողովրդական տնտեսության ընդհանուր տեմպն ու ընդհանուր վիճակը...»

Մենք տեսնում ենք, վոր հենց ամբողջ ժողովրդական տնտեսության մեջ ստացված տեմպը պահանջում է վերականգնել մաշվող հիմնական կապիտալը, պահանջում է վերականգնել, վերասարքավորել ու ստեղծել արտադրության նոր միջոցներ: Միայն լայնորեն զարգացած մետաղարդյունաբերությունը, ինչպես մետալուրգիայի, այնպես է մեքենաշինության ուղղությամբ, կարող է այդ պահանջները բավարարել»:

Ընկեր Ստալինը 1925 թվի մայիսի 9-ին տված զեկուց-

ման մեջ մատնանշում էր, վոր յերկրում մետաղարդյունաբերության արտադրությունը մի տարվա ընթացքում աճել է համարյա կրկնակի չափով. «...ինդուստրիայի կարգավորման խնաստով, ինդուստրիայի, վորը սոցիալիզմի հիմնական բաղան է,—ասում էր ընկեր Ստալինը,—մենք արդեն զարգացման լայն ճանապարհ ենք գուրս յեկել: Ինչ վերաբերում է մետաղային ինդուստրիային, վորն ընդհանրապես ամբողջ ինդուստրիայի հիմնական զսպանակն է, ապա մեռյալ շերտը մնացել է հետևը և մեր մետաղարդյունաբերությունը բոլոր հիմքերն ունի սարն ի վեր դնալու, դեպի լիակատար ծաղկում: Ընկ. Չերժինսկին իրավացի յե, յերբ ասում է, վոր մեր յերկիրը կարող է և պետք է դառնա մետաղային յերկիր»:

Հազիվ թե հարկ կա դեռ ապացուցելու այդ վիստի ահադին նշանակութունն ինչպես մեր յերկրի ներքին զարգացման համար, այնպես էլ միջազգային հեղափոխության համար<sup>1</sup>:

Չերժինսկին առանձին ուշադրության զարժրեց արակտորաշինության վրա:

«Տրակտորների պահանջը,—ընդգծում էր նա իր ճառում,—մեզ մոտ հսկայական է, և իհարկե, մեր արակտորաշինության ապագան ԽՍՀՄ-ում վիթխարի յե: Յեթե մենք մեր տարածությունների վրա տասնյակ հազարավոր արակտորներ բաց թողնենք, ապա մենք այնպիսի էժան հաց կուենանք, վոր աշխարհում վոչ վոք չի կարողանա մեզ հետ մրցել: Այդ տեղի կունենա միայն այն դեպքում, յեթե մենք գյուղացուն տանք լավ գործիք—տրակտոր: Այդ պատճառով մեր գործարանները ծրագրում մենք մրացրնում ենք արակտորաշինությունը»:

Տնտեսության բնագավառում Չերժինսկին մի բարենո-

<sup>1</sup> И. СТАЛИН, Вопросы Ленинизма, стр. 240 изд. 6-ое.



բողոքում էլ անցկացրեց, վորը վոչ միայն տնտեսական, այլև վիթխարի քաղաքական նշանակութուն ունի: Կուսակցութեան ցուցումով նա տնտեսավարների առաջ հարց դրեց գործարանները հումքին ու վառելիքին ալելի մոտ կառուցելու անհրաժեշտութեան մասին:

«Մենք գիտենք,—մատնանշում էր Չերժինսկին,—վոր միջին-ասիական հանրապետութիւններում մինչև այժմ, չնայած, վոր մենք այնտեղից բամբակ ենք ստանում, տեքստիլ ֆաբրիկաներ չկան, և մենք մեր պլանի մեջ մտցրինք Ուզբեկստանում և Թուրքմենստանում գործարանների կառուցումը սկսելու փորձը, իսկ ինչ վերաբերում է մեր մետալուրգիական գործարաններին, ապա մենք դրանք պետք է կառուցենք հումքին ալելի մոտիկ, այսինքն Ուրալում, Ուկրաինայում:

Ինչ վերաբերում է գյուղատնտեսական մեքենաներին, ապա պետք է մենք դրանք կառուցենք գյուղական բնակչութեանն ալելի մոտիկ, հումքին ալելի մոտիկ, այսինքն Ուրալում, Սիրիերում, հարավ-արևելքում»:

Չերժինսկին այդ ժամանակ այնքան շատ էր աշխատում, վոր սաստիկ հոգնում, ուժասպառ էր լինում: Բոլորն ապշում էին, թէ ինչպէս այդ մարդը, վորը կյանքի գրեթէ մեկ յերրորդն անց էր կացրել բանտերում, արքորում, տաժանտիրութեան մեջ, վորն ամիսներով թափառել էր ետապներում, ուժերը վատնել աշխատանքում, ընդհատակում,—կարող էր աշխատանքը տանել այդպիսի յեռանդով, այդպիսի խանդավառութեամբ:

Չերժինսկու յելուցմներից յուրաքանչյուրն ապշեցնում է իրեն հանձնարարված աշխատանքի այն բացառիկ գիտելութեամբ, այդ աշխատանքը կատարելագործելու այն ձգտմամբ, վորոնք այնպէս բնորոշ են նրա ամբողջ գործունեութեան համար:

«Ճելիքս Եղմուսդովիչը շատ խորաթափանց մարդ էր:

Նա հասկանում էր, վոր առանց մեր աղքատ, փոշխացած, մանր գյուղացիական տնտեսութեան վերադինման մենք չենք կարողանա հաղթանակել ինչպէս հարկն է, և նա մեծապէս համառութեամբ, բուռն խանդավառութեամբ էր գործարաններ հիմնադրում ու կառուցում...»

Կուսակցութեան ղեկավարութեամբ, ընկեր Ստալինի ղեկավարութեամբ նա մեր արդյունաբերութիւնը վերականգնեց ու հասցրեց մինչպատերազմյան մակարդակին, և ընկեր Ստալինի գլխավոր պլանով կազմված ՈՍՀՄ ինդուստրացման առաջին աղյուսները նա գրեց»<sup>1</sup>:

#### XIV

Ճելիքս Չերժինսկին բոլշևիկյան կուսակցութեան ակաշնավոր ղեկավարներից մեկն էր:

1917 թվից նա անփոփոխ կերպով ընտրվում էր կուսակցութեան Կի-ի անդամ: Կուսակցութիւնը բարձր էր գնահատում նրան, վորպէս Լենինի—Ստալինի գործին անսահմանորեն նվիրված անվեհեր, քաջարի մարտիկ:

Ընկեր Ստալինը Չերժինսկուն անվանում էր կուսակցութեան հավատարիմ զավակ, մեր կուսակցութեան միասնութիւնն ու հզորութիւնը կառուցող:

Վորպէս Լենինի—Ստալինի կուսակցութեան հավատարիմ զավակ, կայուն լենինյան-ստալինյան, Չերժինսկին մինչև իր կյանքի վերջին րոպեն պայքարում էր հանուն կուսակցութեան յերկաթե միասնութեան, ընդդէմ կուսակցութեան թշնամիների:

«Յես հիշում եմ,—հայտնում է ընկ. Միկոյանը,—մեր կուսակցութեան կյանքից մի դեպք, մի շատ կարևոր դեպք: Դուք գիտեք, վոր Լենինի մահից անմիջապէս հետո պայքարը Տրոցկու դեմ սրվեց: Տրոցկին ուզում էր Լենինի մահից հետո կուսակցութիւնն ուղղել իր ուղիների վրա: Այն ժամանակ Լենինի բոլոր աշակերտները, հին բոլշևիկները,

<sup>1</sup> А. И. МИКОЯН, Феликс Дзержинский, стр. 51.



րողում ել անցկացրեց, վորը վոչ միայն տնտեսական, այլև վիթխարի քաղաքական նշանակութուն ունի: Կուսակցութեան ցուցումով նա տնտեսավարների առաջ հարց դրեց գործարանները հումքին ու վառելիքին ավելի մոտ կառուցելու անհրաժեշտութեան մասին:

«Մենք գիտենք,—մատնանշում եր Չերժինսկին,—վոր միջին-ասիական հանրապետութուններում մինչև այժմ, չնայած, վոր մենք այնտեղից բամբակ ենք ստանում, տեքստիլ Փարրիկաներ չկան, և մենք մեր պլանի մեջ մտցրինք Ուզբեկստանում և Թուրքմենստանում գործարանների կառուցումը սկսելու փորձը, իսկ ինչ վերաբերում է մեր մետալուրգիական գործարաններին, ապա մենք դրանք պետք է կառուցենք հումքին ավելի մոտիկ, այսինքն Ուրալում, Ուկրաինայում:

Ինչ վերաբերում է գյուղատնտեսական մեքենաներին, ապա պետք է մենք դրանք կառուցենք գյուղական բնակչութեանն ավելի մոտիկ, հումքին ավելի մոտիկ, այսինքն Ուրալում, Սիբիրում, հարավ-արևելքում»:

Չերժինսկին այդ ժամանակ այնքան շատ եր աշխատում, վոր սաստիկ հոգնում, ուժասպառ եր լինում: Բոլորն ապշում եյին, թե ինչպես այդ մարդը, վորը կյանքի գրեթե մեկ յերրորդն անց եր կացրել բանտերում, արսորում, տաժանակրութեան մեջ, վորն ամիսներով թափառել եր ետապներում, ուժերը վատնել աշխատանքում, ընդհատակում,—կարող եր աշխատանքը տանել այդպիսի յեռանդով, այդպիսի խանդավառութեամբ:

Չերժինսկու յերույթներից յուրաքանչյուրն ապշեցնում է իրեն հանձնարարված աշխատանքի այն բացառիկ գիտելութեամբ, այդ աշխատանքը կատարելագործելու այն ձգտամբ, վորոնք այնպես բնորոշ են նրա ամբողջ գործունեյութեան համար:

«Ճեղքս Եղմուղովիչը շատ խորաթափանց մարդ եր:

Նա հասկանում եր, վոր առանց մեր աղքատ, փոշիացած, մանր գյուղացիական տնտեսութեան վերազինման մենք չենք կարողանա հաղթանակել ինչպես հարկն է, և նա մեծազույն համառութեամբ, բուռն խանդավառութեամբ եր գործարաններ հիմնադրում ու կառուցում...

Կուսակցութեան ղեկավարութեամբ, ընկեր Ստալինի ղեկավարութեամբ նա մեր արդյունաբերութունը վերականգնեց ու հասցրեց մինչպատերազմյան մակարդակին, և ընկեր Ստալինի ղլխավոր պլանով կազմված ԽՍՀՄ ինդուստրացման առաջին աղյուսները նա դրեց»<sup>1</sup>:

XIV

Ճեղքս Չերժինսկին բուլշևիկյան կուսակցութեան ակա-նաՎոր ղեկավարներից մեկն եր:

1917 թվից նա անիոփոխ կերպով ընտրվում եր կուսակցութեան Կի-ի անդամ: Կուսակցութունը բարձր եր գնահատում նրան, վորպես Լենինի—Ստալինի գործին անսահմանորեն նվիրված անվեհեր, քաջարի մարտիկ:

Ընկեր Ստալինը Չերժինսկուն անվանում եր կուսակցութեան հավատարիմ զավակ, մեր կուսակցութեան միասնութունն ու հզորութունը կառուցող:

Վորպես Լենինի—Ստալինի կուսակցութեան հավատարիմ զավակ, կայուն լենինյան-ստալինյան, Չերժինսկին մինչև իր կյանքի վերջին րոպեն պայքարում եր հանուն կուսակցութեան յերկաթե միասնութեան, ընդդեմ կուսակցութեան թշնամիների:

«Յես հիշում եմ,—հայտնում է ընկ. Միկոյանը,—մեր կուսակցութեան կյանքից մի դեպք, մի շատ կարևոր դեպք: Դուք գիտեք, վոր Լենինի մահից անմիջապես հետո պայքարը Տրոցկու դեմ սրվեց: Տրոցկին ուզում եր Լենինի մահից հետո կուսակցութունն ուղղել իր ուղիների վրա: Այն ժամանակ Լենինի բոլոր աշակերտները, հին բուլշևիկները,

<sup>1</sup> А. И. МИКОЯН, Феликс Дзержинский, стр. 51.



համախմբվեցին մեկ Փրոնտում՝ ընդդեմ Տրոցկու: Այդ Փրոնտին, Տրոցկու գեմ մղվող պայքարին, մի առժամանակ մասնակցում էին թե՛ Չինովյեվը և թե՛ Կամենևիլը: Բայց այդ ժամանակ արդեն տարաձայնություններ ծագեցին մի կողմից՝ Չինովյեվի ու Կամենևիլի և մյուս կողմից՝ ընկեր Ստալինի գլխավորած ԿԿ-ի մեծամասնության միջև... Չինովյեվին այդ ժամանակ գրեց իր գիրքը, վորտեղ նա գրում էր իր բանդազուշանքը, ինչպես՝ «Ականջս գետին եմ դնում... լսում եմ պատմության քայլերը»: «Պատմության» այդ «քայլերի» իմաստը, ըստ Չինովյեվի, այն էր, վոր մենք քիչ ուժեր ունենք, գյուղն անում է, կուլակը կարող է մեզ ճղմել, ուստի և... խուճապ: «Հեղափոխությունը փրկելու» (փրկիչ գանդեց համա՛) համար նա առաջարկում էր շուտ տալ մեր կուսակցության գյուղական քաղաքականությունը, քանդել միջակի հետ ունեցած գաշինքը և կանգնել տրոցկիստական գիրքերի վրա:

Ահա այդ գրքի առթիվ ԿԿ-ում խորհրդակցություն կազմակերպվեց: Մենք այն ժամանակ չէինք ուզում, վոր Տրոցկին վկա լիներ Չինովյեվի գեմ մղվող պայքարին, վորովհետև նա կարող էր գրանից ոգավել: Մենք ուզում էինք հանուն կուսակցության միասնության լիկվիդացիայի յենթարկել Չինովյեվի հետ յեղած տարաձայնությունները:

ԿԿ-ի անդամներին խորհրդակցության հավաքեցին: Այդ 1925 թվի աշնանն էր: Չինովյեվին ու Կամենևիլը սուր կերպով քննադատում էին մեր կուսակցության քաղաքականությունը և կուսակցության ստալինյան ղեկավարությունը: Կուսակցությունն այն ժամանակ ինչպես հարկն է չէր ճանաչում Չինովյեվին: Տարաձայնությունները գետ յայնորեն չեյին հայտարարվել և մենք չէինք ուզում տարաձայնություններն ունենել: Յես հիշում եմ հարցերի բուն քննարկումն այդ խորհրդակցությանը:

Մինչև գիշերվա ժամի 3-ը տեեց նիստը, տեղի էյին ունենում բուն վիճարանություններ: Բոլորի համար պարզ դարձավ, վոր տարաձայնությունները շատ սուր են, և, յեթե դրանք լիկվիդացիայի չյենթարկվեն, վտանգ կա պառակտման: Չերթինակին հանդես չեկավ, բայց յերր Չինովյեվը հանդես յեկավ մի խիստ ճառով ընդդեմ մեր կուսակցության քաղաքականության, ընդդեմ ընկեր Ստալինի, ընկ. Չերթինակին, լարվածորեն լսելով, հանկարծ տեղից դուսայ նրան. «Դուք կրոնչապղծներ՛ր եք, դուք դավաճաններ՛ր եք»:

Այդպիսի խոսքերը մեր միջավայրում այն ժամանակ միանգամայն անսպասելի էյին: Չինովյեվին այն ժամանակ ղեկավարության մոտ էր, նա կանգնած էր Կոմինտերնի դուռնի, իսկ Չերթինակին նրա յերեսին շարտեց. «Կրոնչապղծներ՛ր, դավաճաններ՛ր»:

Չերթինակին չգիմացավ և հեռացավ նիստից: Ամբողջ գիշերը նա չքնեց: Նամակներ էր գրում ու պատում: Վերջապես, նա ԿԿ-ին մի նամակ ուղարկեց, թե չի կարող նիստի մասնակցել դավաճանների հետ: Այժմ բոլորի համար պարզ է, վոր դրանք դավաճաններ, հակահեղափոխական սրիկաներ են, բայց այն ժամանակ կուսակցության լայն մասսաներում նրանց ինչպես հարկն է չէին ճանաչում: Նրանք իրենց համարում էյին Լենինի աշակերտներ, նրանք այն ժամանակ դեռ գնում էյին ընդդեմ Տրոցկու: Իսկ Չերթինակին իր հեղափոխական հոտատությունը զգում էր, վոր այդ՝ վոչ թե հասարակ տարաձայնություններ են, վոր այդ՝ վոչ թե պարզապես ոպոգիցիա յե կուսակցության ներսում, վոչ թե թեքում մեր կուսակցության գլխավոր գծից, այլ վոր այդ՝ դատակարգային թչամիներն են՝ բարիկազի մյուս կողմից»<sup>1</sup>:

<sup>1</sup> А. И. МИКОЯН, Феликс Дзержинский, стр. 53—55



1926 թվականի հունիսի 20-ին Ֆելիքս Ձերժինսկին վերջին անգամ յելույթ ունեցավ ԿԿ-ի և ՀամԿ(բ)Կ ԿՎՀ-ի պլենումի նիստում ընդդեմ թշնամիների, վորոնք հարձակվում էին Լենինի ուսմունքի բուն հիմունքների վրա, փորձեր էին անում կուսակցութանը հանելու սոցիալիզմի կառուցման ուղուց:

Իրեն հատուկ կրքոտությամբ Ձերժինսկին այդ ճառում ասում էր.

«Դուք տեսնում եք, վոր հենց այդ բոլոր տվյալները և այն բոլոր հեռուութունները, վորոնք այստեղ բերում են մեր ոպողիցիան, հիմնված են վոչ թե փաստական տվյալների վրա, այլ մի ցանկության վրա՝ ինչ էլ վոր լինի խանդարել այն ստեղծագործական աշխատանքը, վորը Գաղբյուրոն ու Պլենումն են տանում»:

Յեվ թվերը ձեռքին Ձերժինսկին մերկացնում է տրոցկիստների արարքները:

«Յեթե վերցնենք, թե նա ինչպես է աշխատում, — ասում էր Ֆելիքս Եղմունդովիչը Կամենսկի մասին, — ապա նա չի աշխատում, ինչպես հարկալորն է, այլ թե դես է և թե դեն»:

«Մենք ունայրեսիվ միջոցներ ենք առաջարկում սպեկուլանտների դեմ: Այն ժամանակ առևտրի ժողկոմը (Կամենսկ) ասում է. «լտանգավոր է նեպը վերացնել...»»:

Մերկացնելով աղվեսություն անող Կամենսկին, վորն արդեն այն ժամանակ վնասարարություն էր անում, Ձերժինսկին մերկացնում է նաև մյուս դավաճաններին:

«Մենք դեռ յերեկ ուղղեցինք, — հաղորդում է նա պլենումին, — նախագահության նիստում Պյատակովի սխալը: Դուք հիշում եք, վոր նա այստեղ հանդես էր գալիս մի ճառով այն մասին, վորպեսզի չկրճատել տեքստիլ բանվորներին: Բայց ո՞վ էր կաղմել տեքստիլ ծրագիրն այնպես, վոր պետք էր քառասուն իննը հազար բանվորներին

արձակել: Ծրագիրը կազմված էր Պյատակովի ցուցումով»:

«Դուք հանդիսանում եք արդյունաբերության ամենախոշոր կազմալուծիչը», — հայտարարեց Ձերժինսկին, դեմելով Պյատակովին:

Մերկացնելով նողկալի պոլիտիկաններին, Ձերժինսկին, վորի անբասիր դործունեյությունն արատալորել էլին փորձում թշնամիները, ասաց, դիմելով կուսակցության լենինյան-ստալինյան կենտրոնական կոմիտեյին.

«Դուք հրաշալի գիտեք՝ ինչու՞մն է կայանում իմ ուժը: Յես յերբեք չեմ խնայում ինձ...»:

Նրան ընդհատեցին ներկա գտնվողների բացականչությունները. «Ճիշտ է»:

«Յեվ այդ պատճառով դուք բոլորդ այստեղ ինձ սիրում եք, — շարունակեց Ձերժինսկին հուզված, — վորովհետև դուք ինձ հավատում եք: Յես յերբեք կեղծավորություն չեմ անում, — յեթե յես տեսնում եմ, վոր մեզ մոտ կարգախախտումներ կան, յես ամբողջ ուժով հարձակվում եմ նրանց վրա»:

«Այդ խոսքերի մեջ, — դրում է ընկ. Մոլոտովը, — Ձերժինսկին ինքն է տվել իրեն, — և այն էլ յուրահատուկ պարզորեն, շիտակ, ուժեղ, այրված կրքոտ սրտով, — ուշադրավ, և իրոք, ճշմարիտ բնութագիրը: Դեռ ավելին: Այստեղ նույնպես ճշտորեն ասված է, թե ինչպես էր կուսակցությունը վերաբերվում այդ ականավոր կուսակցականին և կոմունիզմի լավ, փառապանծ ներկայացուցչին»:

Ձերժինսկին պատռեց դավաճանների անարդ դեմքի դիմակը, բայց լարված պայքարի տարիներով տանջված նրա սիրտը չդիմացավ: Այդ ուրը Ֆելիքս Եղմունդովիչը վախճանվեց:

Ահա թե ինչպես է դնահատում Ֆելիքս Եղմունդովիչի վերջին ժամերը նրա՝ այդ պատմական նիստում ունեցած յելույթի ականատեսներից մեկը.



«Յեւ նստած էյի Հենց երա զիմաց, յերբ նա տրիբու-  
նից խոսում էր բոլշևիկյան կուսակցութեան զերազույն  
Ֆորումի առաջ: Նա խոսում էր մեծ յեռանդով, բացարձա-  
կապեա գործիմացորեն, բայց բուռն բորբոքմամբ, յերբ նա  
իր ճատում շոչափում էր կուսակցութեան շահերը: Վերջին  
գարձվածքը, փորն ամբողջ Ինտերնացիոնալի համար ան-  
խուսափելի ավանդ պետք է դառնա, նա արտասանեց հաս-  
տատուպես և գրեթէ հանդիսավոր լրջութեամբ: Հարեանցի  
գիտողի վրա նա կարող էր ամուր, առողջ մարդու սպա-  
փորութեան թողնել: Բայց նրանց աչքից, վորոնք առանձ-  
նապես ուշադրութեամբ էյին դիտում, չվրիպեց, վոր նա  
հաճախ ջղաճգորեն ձախ ձեռքը սեղմում էր կրծքին: Ավելի  
ուշ նա յերկու ձեռքն էլ սկսեց սեղմել կրծքին, և այդ կա-  
րելի յեր ընդունել վորպես հոետորական ժեսա, բայց այժմ  
մենք գիտենք, վոր նա իր վերջին ճառն արտասանեց, չնա-  
յած ծանր Փիզիկական տանջանքներին: Յերկու ձեռքերի  
այդ սեղմումը սրտին—գիտակից ժեսան էր մի ուժեղ մար-  
դու, վորն իր ամբողջ կյանքում թուլութեանը խայտառա-  
կութեան էր համարում և վորը մահից առաջ իսկ չէր ու-  
զում, մինչև վոր ինքը չվերջացնի իր վերջին ճառը, ցույց  
տալ, թէ նա Փիզիկապես տառապում է, չէր ուզում թույլ  
յերեւալ»:

Մարտիկը լարեց բոլոր ուժերը վերջին գոտեմարտի  
համար և ընկավ մարտական պոստում, վորպես կուսակ-  
ցութեան համատարիմ գավակ:

Ամբողջ աշխարհի աշխատավորների մեծ առաջնորդ  
Իոսիֆ Վլասարիոնովիչ Ստալինը Չերժինսկու մահվան օրը  
գրում էր.

«Ձրունգելից հետո—Չերժինսկին:

Լենինյան հին գվարդիան կորցրեց լավագույն զեկա-  
վարներէից ու մարտիկներից մեկին էլ: Կուսակցութեանը  
կրեց ևս մի անփոխարինելի կորուստ:

Յերբ այժմ, բաց դադարի մոտ, վերհիշում էս Չեր-  
ժինսկու ամբողջ անցած ուղին՝ բանտերը, տաժանակրու-  
թեանը, աքսորը, հակահեղափոխութեան դեմ պայքարող  
Արտակարգ Հանձնաժողովը, ամբողջ տրանսպորտի վերա-  
կանդնումը, յերիտասարդ սոցիալիստական արդյունաբե-  
ութեան կառուցումը,—ուզում էս մեկ բառով բնութագրել  
այդ յեռուն կյանքը՝ այլում: Այլում և հերոսական խի-  
զախութեամբ՝ դժվարութեանների դեմ մղած պայքարում:

Հոկտեմբերյան հեղափոխութեանը նրան դրեց ծանր  
պոստում—հակահեղափոխութեան դեմ պայքարող Արտա-  
կարգ Հանձնաժողովի ղեկավարի պոստում: Բուրժուազիան  
չգիտեր ավելի ատելի անուն, քան Չերժինսկու անունն էր,  
վորը պողպատե ձեռքով հեռ էր մղում պրոլետարական  
հեղափոխութեան թշնամիների հարվածները: Բուրժուա-  
զիայի սարսափը—ահա՛ թէ ինչ էր Չերժինսկին:

«Խաղաղ դարաշրջան»: Չերժինսկին այրվում է, կար-  
գի բերելով քայքայված տրանսպորտը, իսկ այնուհետև  
վորպես ժողովրդական Տնտեսութեան Գերագույն Խորհրդի  
նախագահ՝ այրվում է մեր արդյունաբերութեան կառուցման  
աշխատանքում: Չիմանալով հանդիստ, չիտրչելով վոր մի  
սե աշխատանքից, իր բոլոր ուժերը, իր ամբողջ յեռանդը  
նվիրելով այն գործին, վորը նրան վստահեց կուսակցու-  
թեանը,—նա այրվեց բուռն աշխատանքի մեջ, հոգուտ  
պրոլետարիատի:

Գնաս բարով, Հոկտեմբերի հերոս:

Գնաս բարով, կուսակցութեան համատարիմ գավակ:

Գնաս բարով, մեր կուսակցութեան միասնութեանն ու  
հզորութեանը կառուցող»:

Չերժինսկու մահվան պահից անցել է ավելի  
քան տասներկու տարի: Այդ ժամանակի ընթացքում մեր  
յերկիրն անճանաչելիորեն փոխվել է: Նախկին ցարական  
Խուսապտանը—ժողովուրդների բանալը—վերածված է մո-



դովազները յեղբայրական մեծ միութեան և լուսավոր-  
ված և Ստալինյան մեծ Սահմանադրութեան ճառագայթնե-  
րով:

«Վորպես արգյունք պայքարի ու զրկանքների անցած  
ուղու՝ հաճելի ու բերկրալի յե ունենալ իր սեփական Մահ-  
մանադրութեանը, վորը խոսում և մեր հաղթութեանների  
պտուղների մասին: Հաճելի ու բերկրալի յե գիտենալ,  
թե ինչի համար են մարտնչել մեր մարդիկ և ինչպես են  
ձեռք բերել նրանք համաշխարհային-սրտմական հաղթու-  
թեանը: Հաճելի ու բերկրալի յե գիտենալ, վոր մեր  
մարդկանց առատորեն թափած արյունը ապարդյուն չի  
անցել, վոր այդ արյունն իր արգյունքներն և տվել» (Ստա-  
լին):

Այն արյունը, վորի մասին խոսում էր մեծ առաջնոր-  
դը, առատորեն թափվում էր տասնյակ տարիների ընթաց-  
քում մինչև Հոկտեմբերյան հեղափոխութեանը, նա թափ-  
վում էր քաղաքացիական պատերազմի ժամանակ, նա  
թափվում էր, յերբ թշնամիները գնդակահարում էին  
Բազլի 26 կոմիտարներին, յերբ գնդակահարում էին Տրի-  
պոլեյում գերի վերցված կոմյերիտականներին, վորոնք  
մահը զիմալորեցին «Ինտերնացիոնալ» յերգելով, յերբ  
անկյունից սպանվեցին Ուրիցկին ու Վոլոզարսկին, յերբ  
թունավորված գնդակը խոցեց Վ. Ի. Լենինի մարմինը,  
յերբ դավաճանական ձեռքից գարկված ընկավ Սերգեյ Մի-  
րնովիչ Կիրովը:

Ֆելիքս Զերժինսկին կուսակցութեան սիրելին էր, խոր-  
հրդային ամբողջ ժողովրդի սիրելին: Ժողովրդի յերջան-  
կութեան համար պայքարած մարտիկ նրա լուսավոր կեր-  
պարը միշտ կվողեւնչի խորհրդային յերիտասարդութեանը  
պայքարելու կոմունիզմի համար, պայքարելու ժողովրդի  
թշնամիների դեմ:

Ֆելիքս Զերժինսկու մահն ընկնում է խորհրդային ժո-  
ղովրդի նպովյալ թշնամիների գլխին: Հրեշտիկ չարագոր-

ծութեանների չղթայով և նշված Տրոցկու—Զինովիեվի—Բու-  
խարինի—Ռիկովի բանդայից յեւած Փաշիգմի արյունախում  
չների ուղին: Այդ նրանք էին նյութում դեռևս 1918 թվին  
սպանել Լենինին, Ստալինին, Սվերդլովին: Այդ նրանք  
կտրեցին բոցաշունչ հեղափոխական-բուլչեիկ Սերգեյ Միրո-  
նովիչ Կիրովի հրաշալի կյանքը, չարանեղորեն սպանեցին  
սողապատե չեկիսա ընկեր Մենժինսկուն, մեռցրին կուսակ-  
ցութեան ամենասիրելի ղեկավարներից մեկին—Վալերիան  
Վլադիմիրովիչ Կուլբիչեվին, թունավորեցին մեր հանճա-  
րեղ զբող Ալեքսեյ Մաքսիմովիչ Գորկուն: Այդ նրանք էին  
տեղորիստական ակտեր նախապատրաստում ընկեր Ստալի-  
նի և նրա մարտական զինակիցների դեմ: Այդ նրանք են  
մեղավորները հերոսներ՝ Ֆելիքս Զերժինսկու և Սերգո  
Ռըժնիկիձեյի վաղաժամ մահվան, վորոնց բոցավառ սըր-  
տերը զիմացան մարտերին ու բանտերին, բայց պայթեցին  
դեպի ստոր դավաճանները, դեպի նողկալի մարդասպաննե-  
րը տաճած գայրույթից:

Կուսակցութեան Ստալինյան Կենտրոնական Կոմիտեյի  
ղեկավարութեամբ խորհրդային հետախուզութեան որդան-  
ներն անխնա կերպով ջախջախեցին տրոցկիստական-բուխա-  
րինական Փաշիստական բանդաներին, ամբողջ աշխարհի  
առաջ մեղակացրին նրանց ստոր գործունեութեանը, բացե-  
ցին խորհրդային յերկիրը Փաշիստական պետութեանների  
վաճառելու նրանց պլանները: Կատարելով խորհրդային  
ժողովրդի կամքը, հեղափոխական դատարանը վոչնչացրեց  
բուխարինական-տրոցկիստական դավադիրների ոճի բները:

Լինել զգաստ ու անխնա դեպի ժողովրդի թշնամիներ-  
ը—այդ էր սովորեցնում Ֆելիքս Զերժինսկին, զբանով է  
տողորված նրա ամբողջ կյանքը:

Ֆելիքս Եղմունդովիչն ընդամենը քառասուն ինը տա-  
րեկան էր, յերբ մահը վրա հասավ նրան: Նա կարող էր  
զեռ ապրել ու ապրել, աշխատել ու աշխատել: Նողկալի



խոսքերի ու ստոր գործերի թունավոր նեւերով սպանեցին նրան դավաճանները:

Ձերթինակին չապրեց մինչև սոցիալիզմի վիթխարի հաղթանակները: Նա մեր մեջ է: Բայց հեղափոխութեան գործի համար պայքարող բոցաշունչ մարտիկի հրաշալի կերպարը անմահ է: Խորհրդային մատաղ սերունդը Ձերթինակուց սովորում է, թե ինչպես պետք է պայքարել Լեւինի—Ստալինի գողափարներն իրականացնելու համար:

Հեղափոխութեան գործը, վորը Ձերթինակու յերիտասարդութեան որերին հարյուրներն էին պաշտպանում, այժմ միլիոններն են պաշտպանում: Յեւ Յելիքս Ձերթինակու հիշատակը կապրի այդ միլիոնների սրտերում, վողենչեւելով նրանց նորանոր հաղթանակների համար:



Թարգմ. Հ. Հասրաթյան  
Խմբ. Ռ. Շիրոյան  
Տեխն. խմբ. Ս. Խաչատրյան  
Մքբագրիչ Հ. Գոլուխանյան  
Կոնտրոլ սրբագրիչ Շ. Գարագաշ

Գլավլիտի լիազոր № Վ. 1081, հրատ. 756

Պատվեր № 260, արժամ 6,000

Հանձնվել է արտադրութեան 2/XII 1939 թ.

Ստորագրվել է տպելու 8/1 1940 թ.

Գինը 1 ու. 50 կ, կողմը՝ շքեղ 2 ու. հատարակ՝ 1 ու. 50 կ.

Քաղաքական գրականության պետական հրատարակչության տպարան, Յերևան, Ալլահիբերդյան № 65



329.15:92 դրամատիկական բն.

8

«Ազգային գրադարան»



NL0182087



